

Gazar P'arpec'i Ew Gorçk'Norin : Gazar P'arpec'i

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Lazare de Parpi (0440?-05..?). Gazar P'arpec'i Ew Gorçk'Norin : Gazar P'arpec'i. 1883.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.


6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ԵՒ

ԳՈՐԾՎ ՆՈՐԻՆ



ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ԵՒ

ԳՈՐԾՔ ՆՈՐԻՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՆԹԵԱՆ.

„Ո՛չ լոկ բանից ընդվայրախօսութիւն է
զոր ասեմս, այլ ճշմարտապէս արդիւնաւոր
փորձիւ յանդիման կացուցանեմ զբանս“:

Նաղ. Փարպ.



Ի ՄՈՍԿՈՒՆ

IMPRIMERIE D'OTHON HERBECK.

ՌՅԼԲ — 1883.



2008-152787

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 12 Февраля 1883 года.

Скоропечатня О. Гербена, Больш. Никитская, Чернышевскій пер., д. № 5.



ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՀՕՐ ԻՄՈՅ

ԱԲՐԱՀԱՄՈՒ ԽԱԼԱԹԵԱՆ.

Ի ՆՇԱԿ.

ՈՐԴԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ:



Չէ նոր ինչ քննական ուսումն երկասիրութեանց մատենադրաց մերոց, բազմազիմի դասնին առ մեզ և յայլ և այլ լեզուս հետադոտութիւնք զզանազան մասանց վաստակոց նոցին: Կայց սակայն ցարդ ոչ է ձեռնամուխ լեալ ուրումն 'ի փորձ բոլորս մասն խնաստասիրելոյ զոր և է մատենադիր, այն է՝ ամբողջ և անթերի մասամբք զխոնավոր իմն կարգաւ կացուցանելոյ յանդիման զամենայն երկասիրութիւնս նորին՝ ոչինչ ընդհատ 'ի կարևորագոյն լուսաբանութեանց:

Մատուցանելով 'ի սեղան հայրենի՝ Կարութեան զպատմական և գրական քննութիւն զմիջէ յընտիր պատմադրաց մերոց՝ զՎազարայ, ասեմք, Փարպեցւոյ, ունէաք 'ի մտի զայսպիսի ուսումնասիրութեան տալ գոյնն ինչ ճաշակս և եթ: Յոյր սակս՝ քննայոյզ մեկնութեամբք և ծանօթութեամբք ուսաք զամենայն գործսն մատենագրիս՝ ընդ ամին 'ի քնին առնելով զորս 'ի վարս հային և 'ի ժամանակ նորին պարագայք: Աչ սակաւ փոյթ կալաք յանձին և՛ ստուգելոյն ազբերաց Փարպեցւոյ Պատմութեան, և հետաքննութեան բնագրին գործոց մատենագրիս, որ 'ի ժամանակաց անտի ազգի ազգի աղճատմունս իցէ կրեալ կարի յոյժ:

Չէ մեզ անկ դատել, եթէ որպէս ածաք 'ի կատար զմերս այս փորձ քննական: Սակայն այժմէն իսկ կանխեմք յուշ առ-

նէլ, թէ բազմադիմի վախճան երկասիրութեանս, որպէս և նոր
իմն և վիճաբանելի գոյն քննելի խնդրոց ոմանց՝ նիւթ յորդ
ընծայելով՝ ի հաճել զմանր պահանջմունս քննականութեանս,
— հանդերձ իւրք իւրք դժուարութեամբ՝ եղեն առիթ և թե-
րութեանց գործոյս, զորս խոստովանի հեղինակն և ցուցցէ
անաչառն բանադատութիւն:

Իսկ որ ինչ զլէ զլ ոյն առաջկիցս գրութեանս, պատշաճ
վարկաք վասն մատենական, որոյ ըստ պարունակութեան մաս-
նաւորական իցէ կէտ նպատակի՝ թերևս և մասնաւորն դաս
ընթերցողաց, — զզրոցն արկանել՝ ի կիր լեզու: Յայս իսկ ընտ-
րութիւն հարկեցուցանէին զլեզ և յաճախակի պատահեալ
ցուցմունք, վկայութիւնք և այլ հատածք ինչ (ստէպ՝ կարի
ընդարձակագոյնք)՝ ի գործոյ Ասազարայ, որ զոյդ ընդ աշ-
խարհին բարբառոյ խայտարղէտ իմն և անախորժ կարէին
բերել յառաջ անհարթութիւն ոճոյ. իսկ ՚ի յեզուլն նոցին
՚ի նորս այս բարբառ, որքան և ճիշտ լինէին այնոքիկ թարգ-
մանեալ, բազմօք կորուսանէր երկն զայն դիտնաւոր ստուգու-
թիւն, որ տեսանի յայնմ յաճելն ՚ի մէջ անյեզ և անխօփօխ
վկայութեանց: Թէև այսպիսի մերձաւոր իմն դասաւորութիւն
ոճոյ հեղինակին մատենականս և քննելի մատենագրիս, ան-
շուշտ, ՚ի աոյժ իցէ տկար դրչի մերոյ բաղդատութիւն ընդ
զորս—որ Նարբատանին Ասկեղնիկ դարու:

Գ Լ Ո Ի Խ Ա.

ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՐՈՒՑ ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՑ:

Ներածութիւն. — Ծագումն Ղազարայ Փարպեցոյ. — Ա՛ շնորհան Ղազարայ. — Ղազար 'ի Վերս. — Ղազար 'ի Գողթան գաւառի. — Ղազար ընդունի աբէճ կրօնաորութեան. — Ղազար առաքի 'ի Հորոնձա յոսումն գիրութեան: — Իւրչ Ղազարայ 'ի Հորոնձայ և Ռշուար վիճակ աշխարհին Հայոց. — Պատերազմ Վահանոց. — Վահան Մաթիոնեան և Բարեզարդութիւն եկեղեցեաց Հայոց. — Ղազար հոգաբարձ Վախագիլի վանոց. — Թշնամութիւնք աբէղայից ընդդէմ Ղազարայ. — Ղազար հալածի 'ի վանոց. — «Թուղթ» Ղազարայ առ Վահան և վերադին դարչ նորս 'ի հայրենիս. — Գերեզման Ղազարայ:

Ո՛ր անյայտ ինչ է ծանօթից մերոյս Վարուժեան պատմութեան, եթէ քանի՛ սակաւ են առ մեզ տեղեկութիւնք զվարուց ազգայնոցն մատենագրաց: Գողցես ամենայն պատմագրաց մերոց՝ քաղեալ զնիւթ իւրեանց 'ի ժամանակակից մատենագրաց և կամ յորոց նախ քան զինքեանս էին ծաղկեալք, բնաւ իսկ ոչ կալան պէտք յանձին զկենաց նոցա զէթ դոյզն ինչ տեղեկութիւնս աւանդել, թէպէտև բազմաց 'ի նոցանէ վարուց քաջ տեղեակ լինելոց էին աներկբայ: Ասասցուք և մատենագրաց մերոց զյատուկ իմն հայեցողութենէ 'ի հեղինակն երկասիրութեան առ հասարակ: Մատենագրին՝ իբրև բարեպաշտ քրիստոնէի և խստաբարոյ կրօնաւորի՝ մեծաւ երկիւղածութեամբ պատմեալ ազգի ազգի անցս և դէպս, աններկէ իմն համարի յընթացս պատմութեան և՛

բան մի յիշատակել զինքենէ: Միայն 'ի վերջաբանի անդ կամ 'ի յիշատակարանի՝ արտաքոյ գրոցն կարգի, որպէս պատշաճ իցէ անարժան, Բեղա-որ և Կրո-տ անձին, յիշէ զանուն իւր՝ յաճախակի աղաչելով զօրինակողն մի՝ 'ի գիրս իւր մխել ձեռն՝ առ 'ի նուազեցուցանել ինչ և կամ յաւելուլ զինչպէտս ըստ կամի: Աւ և իթէ գէտ լիցի ոմանց նեղելոյ կամ հալածելոյ յարանց ժամանակին թոյլ ապ զրջի իւրեանց զարտին արտահանել զմզմիւմն և կամ մասն ունելով յիրս պատմութեան՝ աւանդել զանձանց տեղեկութիւնս ինչ—սինարկութիւնքդ այդոքիկ՝ 'ի միասին առեալք անքան թերի և սակաւամասն են նիւթ, մինչ որոյ և իցէ 'ի մատենադրաց մերոյ լիակատար և ամբողջ պատմութիւն վարուց զգրի հարկանել գէթ զարդիս յանհասանելեացն է:

Ըստ այսմ մասին 'ի հնագոյն՝ Ապրութեան պատմութեան մերոյ թերևս քան զամենեսին բաղբաւորագոյն գտաւ Աւար Փարպեցի: Արեւուն ամօք նախ քան զայս և այս պատմադիր ըստ մասին հանդամանաց նորին վարուց ընդ հանրով էր անկեալ վիճակաւ զնմանէ այս ինչ և իթ էր ծանօթ, իթէ եկաց 'ի Ա վարու, աշակերտեցաւ Աղանայ Արծրունոյ և զրեաց զպատմութիւն իւրոյ ժամանակի: Այց յամի 1853՝ յորժամ՝ զերծեալ 'ի ցեցոյ և 'ի փոշոյ, հրատարակեցաւ նորայն «Թուղթ¹⁾ առ Մամիկոնէից տէրն Աւահան», 'ի յայտ եկին այնպիսի հանգամանք, որ մեծ իմն սիւռն լոյս 'ի վարս Աւաղարայ որպէս և 'ի ժամանակն, յորում եկացն:

Այս իսկ է «Թուղթ», մասամբ իւրք և Ապատմութիւն նորին իսկ հեղինակի, որ նպատակեալ մեզ 'ի յօրինելն՝ չա-

1) Յայտնեցաւ «Թուղթն» 'ի մատենադարանի Ս. Էջմիածնի և զառաջինն արձանացաւ 'ի տիպ յամի 1853 'ի ձեռն գիտնական պ. Մկրտչի Էմին՝ հետաքրքիր յառաջարանութեամբ հանդերձ: Ե՛ և թարգմանու-

թիւն Թղթոյս յաշխարհիկ բարրատ. Միքայելի՝ նալբանդեան՝ հրատարակեալ զկնի տարածամ մահուան նորա ջանիւք Մ. Տէր Գրիգորեանց, յամին 1868:

ասցից զպատմութիւն, այլ զնկարագիր միայն վարուց Ղազարայ Փարպեցւոյ:

Ոչ ոք իցէ առ մեզ, որ յիշէ հաւաստեալ զճննդեան տեղւոյ Ղազարայ, սակայն վերադիրն Փարպեցի՝ որպէս ինքնին իսկ պատմագիրն անուանէ զինքն՝ ի միում տեղոջ ¹⁾ երկասիրութեան իւրոյ, ի Փարպի գեղջէ զլինելն նորա հաստատէ անշուշտ, որպիսի ինչ են՝ Խորենացի, Աողբացի, որք ճննդավայրս ցուցանեն ²⁾: Ենկարող լեալ զճնողացն Փարպեցւոյ գիտել զանուանա՝ յաւէտ ձեռնհաս եմք յորոշել զգասակարզն՝ յորմէ ծագեալն էր: Վ. քնին առեալ ինչ ինչ ակնարկութիւնս բանից նորին Թղթոյն և Պատմութեան՝ տեսանեմք, զի յամենայն ժամանակս, որչափ մարթ իցէ ըստ նիւթոյ՝ զնալ զհետ նորա, շրջէ նա ի քանի մի ընտանիս՝ կապեալս ընդ միմեանս մերձաւոր արիւնհակցութեամբ: Աւ այս ոչ իցէ առանց իրիք պատճառի. Ղազարայ չէր մարթ ի միոջէ՝ ի միւս տեղափոխիլ տուն, ամս ոչ սակաւս կեալ ամենուրեք և առ ամենեցունց հաւասարապէս լինել ի պատուի. յաւէտ զի և՛ ի նորին իսկ ակնարկութեանց բացայայտ է, զի չէր նա «իրբւս օտար զըք ³⁾» ի Վահանայ Մամիկոնեանոյ՝ ի ձեռն սորա ուրեմն և՛ որոց ազգախառն ընդ Մամիկոնեանս էին տոհմք: Չէ հնար ինչ այլապէս խելամուտ լինել, եթէ զինչ հարկ լի-

1) Պատմութիւն Ղազարայ յէջ 15 (Տպագրութիւն ի Վենետիկ, 1873):

2) Ոչ գիտեմք, եթէ ուստի առեալ Լ. հայերէնագէտն Լանդլուս՝ որ սովոր է առհասարակ մեծաւ զգուշութեամբ աւանդել ըզտեղեկութիւնս ի վերայ վարուց մատենագրաց հայոց, — թէ ւստ (Ղազարայ) surnom de Pharbetzi ne lui vient pas du lieu de sa naissance, mais il lui fut donné à cause du séjour prolongé qu'il fit au couvent (sic) du village de

Pharbe... (Collect. de l'Arm. par Langlois. T. II, p. 255). — Զայսպիսի ինչ վանուց ի Փարպի գեղջէ եղելոց, յորս իբրու թէ ընդ երկար ընակեալ է Ղազար՝ ուստի և զանուն իւր ընկալեալ, գէթ որչափ մեզ իցէ ծանօթ, — չյիշէ ի հնագոյն մատենագրաց մերոց և՛ ոչ որ:

3) Թուղթ Ղազարայ առ Մամիկոնէից տէրն Վահան. Պատմ. Ղազար. յէջ 571:

ներ Փարպեցւոյ յԱրագածոտն գաւառէ՝ ի Վիրս անկանիլ և ընդ Վահանայ՝ ի դրան Աշուշայ բղիշխի, զիւրն անցուցանել զմանկութիւնս. էր վասն առ Վահանայ իսկ քեռւոջն՝ առ Աղանայ Արծրունւոյ, լինէր նմա դեզերել հարուստ մի ժամանակ. էր վասն դարձեալ ի տան ազգակցաց Վահանայ՝ իշխանաց Վամնարականաց, ամս ոչ սակաւս բնակէր. էր վասն ի վերջէ՝ հանապազ յանցնիւրցն առհասարակ Մամիկոնէից զառանձին իմն վայելէր զմտերմութիւն և հովանաւորութիւն, եթէ չէր նորա ընդ Մամիկոնեանս որ և իցէ ազգակցութիւն՝ մերձաւոր և կամ հեռաւոր:

Յասացելոցս յայտ իսկ է, թէ Փարպեցի՝ բաց ի լինելոյ որդի առն ունևորի, որպէս այս հաստատի ի նորին Վերջութոյն ¹⁾, նակ ազատ կամ յազդէ անուաց լեալ էր:

Ի հինգերորդ որպէս և ի յաջորդ դարս՝ առ մեզ չէր ինչ անսովոր, զի տոհմիկ արանց զաշխարհայինս թողլով կեանս՝ պարեղօտ ազանէին և իբրև զկուսակրօնս՝ ի խորշս վանուց ի միայնակեցութեան, աղօթից նուիրէին զանձինս և հոգեշահ մտածութեանց: Կնքնին իսկ Տէր Աղան ²⁾՝ վարդապետն Փարպեցւոյ, որդի էր Վասակայ Արծրունւոյ, որ տաղտկացեալ ընդ հօրն ամբարիշտ վարս՝ եթող զաշխարհ և ընկալաւ սքեմ կրօնաւորութեան: Յաղադս Մեծին Մեսրոպայ ևս կարծիս ինչ յայտնեալ են ոմանք ի սիրաբանից՝ եթէ ի Մամիկոնեան լեալ էր ի տոհմէ, որ «ընկեցեալ յետս զմարմնական պատիւն... խնդրէր զանապատ:» Նայց եթէ ընդէր ինքնին Փարպեցի ոչինչ յիշէ զճնողաց իւրոց, թերևս մարթ իցէ մեկնել այնու հայեցողութեամբ, զի ոչ վայել իցէ բարեպաշտ կուսակրօնի՝ որ միանգամ ընդ միշտն էր հրաժարեալ «յիշխանակիր ցանկութեանց», զնախկին փառս և զաշխարհային

¹⁾ Թուղթ. յէջ 571:

²⁾ Պատմ. Ղազ. յէջ 15: Տես և առ Թոմա Արծրուն—յէջս 75, 76, 80:

վայելչութիւնս զմտաւ ածել՝ առ 'ի չղայթակղեցուցանելոյ զանձն:

Չի՞ք ուրիշ յիշատակեալ զճննդեան ժամանակէ Ղազարայ Փարպեցոյ. սակայն ինչ ինչ կշռադատութիւնս արարեալ՝ բաւական հաւանականութեամբ մարթիսք կարգել զամն, յորում ծնեալ էր: Հիմունս կարևորս առ 'ի լուծանել զինդիրդ գտանեմք 'ի Թղթին նորին իսկ պատմագրի: Ասա 'ի միում տեղւոջ Ղազար պարզապէս ասէ՝ եթէ տղայութիւն իւր քաջայայտ է Ղազանայ Մամիկոնենոյ. «Չկեալ զիմ 'ի տղայութեան՝ զայն Տէր (Ղազան) իսկ ինքնին քաջ գիտէ ¹⁾» և ապա՝ սակաւ ինչ ստորև՝ «աննդակից» և «խաղակից» կոչէ զինքն նորին Ղազանայ, թէև յաւելեալ ասել՝ «ըստ տիոց աւագագոյնք, քան զձեզ էաք:» Յայսմանէ դայ 'ի յայտ, եթէ Ղազար և Ղազան հասակակիցք էին՝ սակաւ ինչ տարբերութեամբ ամայ. ուստի, եթէ կարասցուք հաւանականապէս զմիոյ 'ի նոցանէ որոշել զամն ճննդեան, այնու որոշեսցուք և զմիւսոյն:

'Ի Պատմութեան անդ երկիցս յիշէ Ղազար՝ ընդ ամին որոշակի գնելով զթիւս, եթէ երբ Ղազան Մամիկոնեան ընդ կղբարս իւր դերի վարեցաւ 'ի Ղուռն Պարսից: Թուականս այս ըստ Ղազարայ երեքտասաներորդ էր ամ թագաւորութեան Յազկերտի երկրորդի՝ արքային Պարսից և կամ փրկչականն 451 ²⁾: Յերկրորդում ակնարկութեան՝ որ կարևորագոյն է, Ղազար տակաւին յամին եօթնևտասներորդի Յազկերտի՝ կամ 'ի 455 ամի (յորժամ բղեաշին վրաց՝ Աշուշայ, խնդրեաց յարքայէն ինքեան շնորհել զորդիս քենակալի իւրոյ Հմայեկայ Մամիկոնենոյ) — «յոյժ տղայք» կոչէ զՂազան ընդ կղբարս նորս ³⁾. ուստի տեսանի, թէ 'ի դերի վարելն զնոսա ձեռամբ

1) Թուղթ. յէջ 570:

3) Պատմ. Ղազ. յէջ 323:

2) Պատմ. Ղազ. յէջս 195, 223, 229:

Վասակայ Սիւնւոյ, այն է՝ յամին 451, գէթ ոմանք 'ի նոցանէ անշուշտ կաթնակերք էին մանկունք: Ս'իտ կոչեալ, զի Վահանայ երեք էին կողարք, յորոց երկուք (Վասակ և Արտաշէս) 'ի գերութեան անդ էին ընդ նմա, և կրտսերագոյնն (Վարդ)՝ 'ի Տայս էր առ դայեակսն, ապա—համարելով՝ եթէ յամի 455 հնգից էր ամաց կրտսերագոյնն, և Արտաշէս՝ ընդ որ թերևս տիրապէս հայէր բանն «յոյժ աղայ» 6—7 ամաց, — Վահանայ՝ իբրև երեցագունին 9—10 ամաց անշուշտ լինել պարտ էր. այսինքն է, թէ նա ծնեալ էր յամի 445—446: Հագիւ ուրինն և առաւել էին յայնժամ Վահանայ ամբքան զինն կամ զտանն: Այս յայտ է նախ 'ի բանից նորին իսկ Վահանայ, որ յամի 451 «աղայ» անուանէ զինքն. «'ի հարցն իմոց ևս աղայ մնացի 1):» Յետ այնորիկ «աղայ» է նա ըստ Վաղարայ տակաւին յամի 445. և 'ի վերջոյ՝ զինի 445 ամի ևս ('ի տան Աշուշայ բռնչիսի) դարձեալ աղայ, որ «քաջ գիտէ» զՎաղարայ «աղայութիւն», քան զինքն «աւագագոյն» աղայի: Ուստի այս ամենայն մարթ էր լինել յայնժամ և եթ, եթէ Վահանայ 'ի յառաջագրեալն ժամանակի ոչ առաւել էին քան զամս 9—10: Աւարդ՝ քանզի 'ի վաղագոյն ասացելոց Վահան «աննդակից» էր Վաղարայ և «խաղակից», որպէս և նորայն «աղայութեան» քաջածանօթ, թէև կրտսերագոյն քան զնա, — ապա յամի 455, մինչ Վահան 9—10 էր ամաց՝ Փարպեցի հաւաստեալ 12 կամ 15 ամեայ դեռահաս պատանեակ լեալ էր և կամ 'ի միջի 440—443 ամաց ծնեալ: Աւ ամն 440 վերջինն է սահման, ընդ որ անդր հազիւ թէ մարթ էր զՎաղար համարել ծնեալ: Վանզի 'ի հակառակ դէպս՝ չկարէր Փարպեցի՝ 'ի լինելն իւր հողաբարձ

1) Պատմ. Ղազ. յէջ 419:— Հմայեակ հայր կաւ ինչ զինի ճակատուն Աւարայրի (Պատմ. Վահանայ նահատակեցաւ յամին 451, սա. յէջս 219—220: Տե՛ս և յէջն 334):

Վաղարշապատու վանուց (յամն 487—490¹⁾), տալ առիթս թշնամեաց իւրոց 'ի թիւս այլ մեղադրութեանց դատապարտել զինքն, թէ «մանուկ մի հոգաբարձ (հոգաբարձութիւն) տեղւոյն չկարէ առնել²⁾», մինչ տակաւին՝ ըստ մերում ևս ասացելոյ՝ յայնժամ Վաղար 47 կամ 50 ամաց լինելոց էր: Յետ այնորիկ չկարէր Փարպեցի վկայ կոչել զՎահան տղայութեան տիոց իւրոց և խաղուցն՝ որ 'ի դրան Աշուշայ բոլեշխի, եթէ չէր նորա յայնժամ (զինի 445 ամի) 'ի տղայական հասակի՝ և անշուշտ ոչ առաւել քան զ15-ամեայ ուստի դարձեալ հաստատի, թէ ոչ վաղադոյն քան զամն 440 էր նա ծնեալ: Այլապէս հաղիւ ուրեմն Վաղար «տղայ» կոչելը զինքն, եթէ աւաղադոյն քան զհնդեստասանամեայ լեալ էր 'ի ժամուն:

Փարպեցի ոչ էր ծնեալ և անադան քան զամն 443. քանզի 'ի հակառակէն՝ չասէր նա զինքենէ առ Վահան (որ ըստ կանխադոյն դրեցելոյ՝ ծնեալ էր յամին 445—446) շեշտելով իմն — «ասկայն թէպէտև ըստ տիոց աւաղադոյնք քան զձեզ էաք, այլ սննդակիցք էաք ձեզ և խաղակիցք...³⁾», — մինչ համայն աւաղութիւնոյ այդ երկւք միայն կամ չորիւք ամօք էր և եթ:

Յամենեցուն ասացելոցս մեծաւ հաւանականութեամբ դոյ տեսանել, եթէ ամ ծննդեան Վաղարայ Փարպեցւոյ 'ի միջի 440 և 443 ամաց խնդրելի է:

Անձանօթ է մեզ, եթէ զիարդ էին անցեալ մանկութեան ամբ Փարպեցւոյ և կամ զինչ էին նախնական հրահանոք կրթութեան նորա: Չառաջինն՝ զպատանեակն Վաղար տեսանեմք 'ի Աիրս ընդ Վահանայ և կղբարց նորին՝ 'ի տան

1) Չայամանէ տես 'ի յաջորդ գլուխն:

ցեալ դարձեալ մեծ ինչ տարբերութիւն

2) Թուղթ. յէջ 593: — Եթէ բանդ «հոգաբարձ» զՎահանայ ևս համարիմք ասա-

նչ լիցի:

3) Թուղթ. յէջ 572:

Աշուշայ բղեշխի, «յորում դրան՝ ըստ ասելոյ պատմագրին, և՛ զմեզ ուսուցանէին ¹⁾»: Աւշ եղեալ այլում ակնարկութեան ²⁾ Աւազարայ յաղագս աննդեան Աւահանայ եղբարց՝ տեղեկանամբ, զի Աւահան՝ ուրեմն և՛ Աւաղար ընդ նմին, վարժէին ՚ի դերագոյն հրահանդս ժամանակին՝ յաստուածայինս և յարտաքինս՝ անշուշտ առ բաղմահմուտ դաստիարակաց ոմանց, որպէս Ղրանն բղեշխի և սոհմին Մամիկոնէից էր պատշաճ: ՚Ի հրահանդացս յայտոցիկ անբաժան էր և մայրական իմն խնամ, յորմէ թերևս վաղ ուրեմն զերկ էր մնացեալ մանուկն Աւաղար և որ յոյժ բարերարապէս աղղերոյ էր մատաղ սրտից. «՚ի Ղրան Աշուշայի անուցանէր մայրն Ձեր օրհնեալ (Ձուիկ) և Անուշ—Աւում ³⁾, հաճութեամբ

1) Թուղթ. յէջ 572:

2) Թուղթ. յէջ 589:

3) Այս Անուշ-Աւում՝ որպէս տեսանի ՚ի բազում մասանց Աւաղարայ Պատմութեան ևս և՛ ՚ի Թղթոյն, քոյր էր Ձուկայ՝ մօր Աւահանայ Մամիկոնենոյ. իսկ Ձուիկ քոյր էր Աղանայ՝ որդւոյ Ասասկայ Արծրունւոյ. ապա ուրեմն և Ձուիկ և Անուշ-Աւում դրստերք էին Ասասկայ Արծրունւոյ: Սակայն այսպիսի իմն ակներև հետեւողութիւն յոյժ հեռի է ՚ի բանից հ. Միքայէլի Ձամչեան. (Պատմ. Ա. 518) որ զԱնուշ-Աւում (ուրեմն և զՁուիկ) Աւումայ ուրումն մեծի իշխանի համարի լինել դուստր, թերևս հիմն առեալ ինքեան զանունն Անուշ-Աւում (իբրև դուստր Աւումայ), որպէս սովոր էին կոչել նախնիք մեր զդաստերս իւրեանց յանուանէ հօր (Սահակ-Անոյշ, Վարդ-Անոյշ): Անունս այս օտարոտի բացարձակ իմն ներհակ գուլով անժխտելի վկայութեանց Աւաղարայ, յոյժ կասկածաւոր է և՛ մինչ ոչ է յայտ աղբիւրն ուստի առեալն է, նաև ոչ ընդունելի: Իսկ եթէ առանձին իմն էին բաղձանք պատմագրին Միսիթարեան ուխտի, զի

Աւում լինէր անպատճառ անուն հօր Ձուկայ և Անուշ-Աւումայ, հնար իմն էր տալ զկատարումն և այդպիսի բաղձանաց՝ առանց հակառակ եւանելոյ Աւաղարայ. քանզի նոյն և մի անձն կարէր կրել զերկոսին անուանս. և եթէ այս մարթ իցէ ասել վասն այլոյ ուրուք՝ ևս առաւել դիպողագոյն—վասն Ասասկայ Արծրունւոյ: ՅԱզգայնոյ պատմութենէ ծանօթ է, զի ախորժէին երբեմն արքայից արքայք փոխել զհայկական (կամ զՊարթևական) անուանս թափառաց Հայոց ՚ի բուն պարսկականս. որպէս՝ Աւում-Շապուհ (կամ Սոտահրա-Շապուհ), Արտաշիր (փոխ. Արտաշիսի): Մարթ էր և Ասասկայ Արծրունւոյ, որ մի յազգութեան էր նախարարաց և որ ամս բազումն անցուցեալ էր ՚ի Ղրան Պարսից, ՚ի հաճոյս Արեաց արքային, փոխել (կամ յաւելուլ) ՚ի Աւում զանուն իւր Ասասկ, այնչափ ատելին Պարսիկ լսելեաց յիշատակութենէ Քաջին Ասասկայ՝ զօրավարին Արշակայ Բ՚ի. ուստի և չիք զարմանք ինչ—զի զդուստր իւր, որ ծնեալ էր նմա ՚ի Պարսս, անուանէր Անուշ-Աւում: (Տես և Թոմ. Արծ. յէջս 74, 75, 76):

յիշէ Փարպեցի ի Թղթին, որ առ Վահան, ըստ իւրեանց հոգեւիրութեանն և զմեզ ընդ ձեզ որպէս զձեզ:» Այս՝ ժրագլուխն էր Զուխի, որ զինի նահատակութեան առն իւրոյ՝ Հմայեկայ (+ 451), ՚ի Վիրս առ քոյր իւր՝ Անուշ-Վռամ զնացեալ, զլիտովին նուիրեալ էր զանձն հրահանգաց մանկանց իւրոց և՛ բաց ՚ի սննդեան և խրատուց՝ մատակարարէր նոցա «զճանօթութիւն ուղղափառ հաւատոյ», քանզի քաջահմուտ էր զբոց Աստուածայնոց և՛ որպէս Վաղար ասէ, «անուանի և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ՚ի Հայաստան աշխարհիս ¹⁾»:» — Աստ ուրեմն՝ ՚ի Վրան Աշուշայի զառաջինն մտերմանայր Վաղար Վահանայ, ընդ որ սերտիւ կապեցաւ ՚ի սէր. «կծկեալ, ասէ Վաղար ՚ի Թղթին, որպէս ՚ի սաստիկ և պինդ կապոյ քաղցր և ամենահեշտ քո Տեառն (Վահանայ) ախորժակ սիրովս, զորոյ, եթէ դամ ճաշակել ուրուք՝ առցէ զհամ անուշութեան, կամէի զմեռանել քան թէ յայսմանէ վրիպիլ ²⁾»:» Աստ ուրեմն և ինքն Վահան ՚ի մօտոյ զՎաղար ճանաչէր, զորմէ յետ այնորիկ ասէր հանապաղ. «Վաղար, որում ոչ ոք զոյ փոխանակ ³⁾»:» Աստ ուրեմն սկիզբն առնուին այն մտերմութիւն և յարգանք, զոր եղբարք Վահանայ ապա յամենայն դէպս ջանային ցուցանել առ Վաղար:

Չէ յայտ ստուգութեամբ, եթէ որքան ամս մնաց Վաղար ՚ի Վրան բղեշխին. այսչափ և եթ է ճանօթ, զի յետ ժամանակի ինչ ՚ի մէջ անցելոյ՝ զնայ նա ՚ի Վրաց աշխարհէն ՚ի հռչակաւոր մենաստանն դաւառին Վողթան ⁴⁾ առ քրուին Վահանայ՝ Տէր Ազան: Աստանօր յաւելիլ նա ուսանիլ և զթերին լցուցանել զիւրոցն հրահանգաց՝ մանաւանդ

1) Պատմ Ղազ. յէջ 334:

2) Թուղթ. յէջ 607:

3) Թուղթ. յէջ 573:

4) Ըստ Թոմայ Արծրունոյ (յէջ 80) սատ եկաց ժամանակ մի հրեշտակակրօն վարուք և՛ Ս. Մեսրոպ:

որ ինչ 'ի ներկուռն հայեր հմտութիւն Գրոց Արբոց: Աւապա՝ հրաժարեալ յաշխարհային կենաց, ընդունի սքեմ կրօնաւորութեան 'ի Տեառնէ Աղանայ, որոյ վասն և ինքն՝ Աւազար ասէ. «զատոյց զիս Տէր Աղան պարեգօտիւք 'ի ծառայութենէ աշխարհիս և աղատութեան եղև մեզ առ-իթ ¹⁾»:

Կանխատես և աշխարհաշէն իմն օրինակ արանց Մեծայ՝ Սահակայ և Մեսրոպայ, այն է՝ «ուշեղ և քաջասուն» մանկուռն աշխարհին 'ի յոյն դպրոցս առաքելով, բարեկիրթ և անձնուէրս պատրաստել սպասաւորս Ակեղեցւոյ, — և՛ զինի նոցունց գտանէր հետևողս 'ի միջի իմաստուն արանց աշխարհին: Արանելի վարդապետք Աւազարայ՝ տեսեալ զաշխոյժ պատանւոյն զսէր յուսումն գիտութեան և զհոգևոր շնորհս՝ որ 'ի նա, առաքին զնա «'ի Հոռոմս» վասն կատարեալ զուսումն գործելոյ: Անպանօր Աւազար՝ որպէս յայտ է 'ի Թրդթոյն, ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն՝ յաւետ ընտելանայր հռետորական արուեստից 'ի ձեռն երկասիրութեանց ընտրելագոյն մատենագրաց Ակեղեցւոյ: Գլեծն Աթանաս, զԱլեքսի Արուսագէմացի, զՄեծն Մարտեղ, զՍազազացի՝ զայս հրաշալի դաղափարս ունէր Աւազար առաջի աչաց, որք խոր իմն ազգեցին նմա՝ իբրև եկեղեցական հռետորի, որպէս և նորին մատենագրական ոճոյ, ընթացից և հայեցողութեանց առ հասարակ: Նոյնպէս անյայտ է մեզ, եթէ քանի ամս տևէր կեան Աւազարայ 'ի Հոռոմս: Ի Թրդթի իւրում այսու և եթ շատանայ ինքն՝ յասելն — «տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի 'ի Հոռոմս՝ ժամանակեցի անդ», յորմէ չէ մարթ որոշ հետևողութիւն ինչ առնել զտևողութենէ ժամանակի: Սակայն այս ինչ է մեզ ծանօթ հաւաստեալ, զի՝ ըստ բանից նորին իսկ Աւա-

1) Թուղթ. յէջս 571—572:

ղարայ, յամն 479 — 480 ապաքէն դարձ առնէր նա յաշխարհէն Յունաց 'ի Հայս ¹⁾:

Արդ՝ 'ի միտ առեալ 'ի միջէ կողմանէ զամն 455, յորժամ զառաջինն հանդիպինք պատանկինն՝ Ասղարայ 'ի տան Աշուշայ բդեշխի և 'ի միւսէ՝ զամն 479 — 480, յորում 37 կամ 40 — ամեայ Ասղար դարձ առնէր 'ի հայրենի աշխարհն իւր Այրարատ, — լինին ընդ բնաւ ամք 25: 'Ի սոցունց՝ ամն ինչ թերևս սակաւադոյնս՝ 'ի Ախրս էր անցուցեալ Փարպեցի, ամն ինչ առ Աղանայ Արծրունւոյ 'ի Վողթան մենաստանի և զմնացորդն ամաց՝ 'ի Հուռոմն: Օհնի այսորիկ մինչ ցորոշ իմն ժամանակ ըստ բաւականին ստոյգ են ամք ժամանակաց, որ 'ի Ասղարայ հային վարս:

'Ի դարձին իւր 'ի Հուռոմոց Փարպեցի գտանէ զհայրենիս իւր 'ի յսկզբան մեծի փորձանաց: Օհնի Աարդանանց պատերազմին՝ զոմանս 'ի հայ նախարարաց 'ի գերութեան անդ մաշելով, զայլս 'ի միջոյ բառնալով և զյոլովս 'ի հայրենի օրինաց բռնի և կամ հրապուրանօք ուրացուցանելով, — Վուռն Տիզբոնի 'ի սպառ խորտակեալ համարեցաւ զդարաւորն կամակորութեան Հայոց եղջիւր, որ հանապազ խոչընդոտն լինէր քաղաքական և կրօնական նպատակաց Պարսից, և ձեռնամուխ եղև յայն խնդիրս միութեան և ձուլման Հայոց ընդ Պարսիկս, որ յաւուրց Յազկերտի Անոյ այնպէս իմն դրաւեալ էր զարքայիցն Պարսից ուշ ²⁾: Օմտալուտ վտանդս դարանաց Պարսից զգացեալ հայրենասէր նախարարաց ո-

1) Թուղթ. յէջ 570:

2) Այսպէս ասէ Խորենացի «զհնարից դառնութեան Յազկերտի Անոյ առ 'ի «սաղապեցուցանել» զհայս չ'ի դէն մագդէզանց», «...զԼապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ (Յազկերտի) Հայոց, հնարս դառնութեան խորհելով՝ իբր թէ այնպէս

հանապազ առ նմա նախարարքն յանգչիցին խօսիւք, տուրևառիւք, խրախճանութեամբ և զբօսանօք որսոց այլ և եկամուտ հարազատութեամբ մերձաւորեցին խնամութեամբ. զի մարթ լիցի գնոսս և 'ի դէն մագդէզանց սաղապեցուցանել, որով ամենևին զատչիցին 'ի Յունաց...» (Գ. 55):

մանց՝ ընդ երջանկայիշատակ Վիւտայ կաթողիկոսի՝ դիմեն
առ Յոյնս բանադնացութեամբ՝ օգնութիւն հայցելով՝ ի նո-
ցանէ: Յոյնք խոստանան, բայց ըստ սովորութեան գժրեն
խոստմանց իւրեանց, որով առիթս և եթ տան Վիւտայ թըշ-
նամեաց ամբաստան լինել զնմանէ առ Երեաց արքային:
Ելեզարդ հայրապետն՝ որպէս երբեմն Մեծն Սահակ, անվե-
հեր գնաց ի Վուռն Պարսից և մեծաւ լըջմտութեամբ ցրէ
զամենայն մեղադրանան, որ ի վերայ իւր կուտեալ էին, սա-
կայն առ այսու ամենայնիւ զըկի ինքն ի կաթողիկոսական
իշխանութենէ: — « Աւխտապահ » նախարարաց զայսպիսի
տեսեալ անյաջողութիւն խորհրդոցն՝ ցիր և ցան լինէին ասա
անդ: Ե հրապարակի անդ յառաջագէմք ինին ուրացեալք
կամ «ուխտազանցք» և եթ, որ ընդ գործակալս Պարսից զա-
մենայն անօրէնութիւնս գործեն անպատիժ: Եսկնուրեք ի
Հայս կանգնին ատրուշանք, Վէնիմազդէզն յաջողի եթէ ոչ
ի սիրտս, այլ դէթ ի գրպանս բազմաց խաբեբայ մարդկան
աշխարհի, ուրացութիւնն ի հաւատոց «վաճառ» լինի ըստ
ասացելոյն Վազարայ, փորաքարչ կեղծաւորութիւն և քսու
բանասարկութիւն այնուհետև միակ և եթ լինին հնարք պա-
տուոյ և կալուածոց տիրանալոյ: Եհաւասիկ որպիսի բանիւք
առաջի առնէ Վազար՝ ժամանակակիցն այսց թշուառու-
թեանց՝ զտխուր վիճակ աշխարհին. «Նու էր այնուհետև տե-
սանել յաշխարհիս Հայոց զլաւութիւն հեռացեալ, զխմաս-
տութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ,
զՎրիստոնէութիւն թագուցեալ:» Եյս ծայրայեղ տառա-
պանք ի վերջէ ուրեմն անսանելի լինին որոց ի սիրտս ոչ
էին տակաւին մեռեալ զգացմունք խղճի և հայրենասիրու-
թեան, և ահա՝ հաւանեցուցեալ ընդ ինքեանս և՛ զժամա-
նակի կաթողիկոսն՝ զՅովհան Մանդակունի, ժողովին շուրջ
զերկրորդ ազգապետաւ Մամիկոնէից՝ զքաջն Վահանաւ և

բարձրացուցանեն զդրօշ ապստամբութեան: Ամս չորս անընդհատ տեւէ ապստամբութիւնն և զկնի վեցից արիւնասէղ ճակատամարտից՝ Ասհան 'ի վերջոյ ստիպեցուցանէ զՊարսիկս փոխել զկարծիս իւրեանց վասն «անարգութեան գնդին Հայոց» և ընդունիլ զառաջարկեալն 'ի Հայոց պայմանս խաղաղութեան:

Այսոքիկ էին 'ի Ասպարայ յիշատակեալ «ամբօխք» որոց ականատես եղև նա 'ի դարձին իւրում 'ի Հոռոմոց և զորս ապա ուրեմն յայնպիսի վառիվառ դոյնս կենդանադրեաց 'ի Պատմութեան իւրում: 'Ապատճառս կարճութեան բանից չէ մարթ յայտնապէս 'ի միտ առնուլ, եթէ զն'նչ իմանայ Ասպար յասելն. «...կեցի առ Աամնարականադ յամենայն ամբօխան մինչև յամս նուաճման ձերոյ (Ասհանայ) և զհետ այնորիկ, որպէս թէ ճանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ պարապիլ աղօթից և հանդէլ¹⁾»:» Թուի, թէ պատմագիր մեր առ Աամնարականն կելով, ոչ լոկ և եթ էր ականատես «ամբօխից» պատերազմին, այլ մասնակից ևս այնմ, 'ի հակառակէն՝ պիտակաբար համարելի են ասացեալ յառաջադրեալն բանք յաղաղս ճանձրութեանց Ասպարայ:

Աւարդ՝ «ճանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն» Փարսպեցի թողու զԱամնարականն և զՇիրակ «զհետ նուաճման» Ասհանայ, այն է յամին 484 և երթայ 'ի Սիւնիս «հանդէլ»: Արդարև՝ խստաբարոյ իմն կենօք ճգնի անդ Ասպար «ամս երկուս²⁾», որպէս ինքն ասէ, (կեցեալ) զձմեռն 'ի քարայրի և զամառն յաղաղս տօթոյ տեղւոյն՝ քահանայա-

1) Թուղթ. յէջ 570:

2) Յոյժ կարևոր են այս ստոյգ ցուցութիւնք ժամանակաց, զորս առնէ Ասպար—
թէև ըստ պատահման, այն է՝ եթէ երբ հեռացաւ ինքն 'ի Աամնարականաց տանէն և որքան ամս մնաց 'ի Սիւնիս: Յայտնանէ և

եթ հաւատեալ տեղեկանամք զժամանակէն, յորում յանձնեցաւ նմա հոգաբարձութիւն Վաթուղիկէ վանուց նշանաւոր իմն ժամանակ Ասպարայ կենաց, որ նշանաւորագոյնս ունէր հետեանս (Թուղթ. յէջ 571):

պետ զաշխարհին՝ Տէր Մուշէ տանէր զիս առ ինքն, ուր և ընէր 'ի հովու»։— Սակայն ոչ ընդ երկար յամէր 'Ազաղար 'ի Միւնիս. զինի երկուց ամաց դարձեալ 'ի դաւառին Այրարատ տեսանեմք զիս։

Մինչև ցայժմ աւուրք 'Ազաղարայ՝ որպէս տեսար, անցանէին յոյժ խաղաղ, առանց իրիք փոթորկի. թող զի 'ի կեան իւրում առ Աամարապահան՝ դրան երէց լեալ էր և կամ յայլում պաշտօնի. թող և մասնակից Աւհանանց պատերազմին. այսու ամենայնիւ հեռի էր նա յաշխարհային աղմկաց։ Նախանձ և ատելութիւն, որոց զոհ եղին ոչ սակաւք 'ի յողներախա Վարդմանչաց մերոց, ոչ էին մերձեալ 'ի նա, և տակաւին չճաշակեալ զպտուղս մարդկային չարութեան, ճեպէր 'ի քարանձաւս Միւնեաց «հանդէլ յաշխատութենէ և աղօթից պարապել»։ Սակայն կոչումն 'Ազաղարայ ոչ էր 'ի քարանձաւս 'ի միայնութեան. և՛ս վսեմազոյն թէև ծանր իմն վիճակ էր նմա վիճակեալ։

Չկնի երկարատև և աւերիչ պատերազմաց՝ յորժամ կռուցաւ դաշն խաղաղութեան 'ի միջի Հայոց և Պարսից, Աւհան պէտ յանձին ունէր շինել և դնել 'ի կարգի զաշխարհն, որ այնչափ նեղութիւնս կրեալ էր 'ի մոխրապաշա բարբարոսաց։ Մանաւանդ վնասեալ էին յանդուսպն ատելութենէ անօրինաց՝ տաճարք Աստուծոյ, զորս պարտ էր վերատին կանդնել և բարեկարգել։ Ամին իրի խնամատարն Աւհան՝ որ Մարգարան էր 'ի ժամուն, «զեկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով¹⁾»։ Նոյնպէս մեծ դանձաւ ծախելով «հիմնարկեալ նորոգէր մեծապայծառ շքեղութեամբ զհնա-

¹⁾ Ասողիկ. յէջ 32 ('ի Փարիզ)։ Տէս և Սերէոս յէջ 25 ('ի Պետերբ.)։

ցեալ գործ նախնեացն իւրոց ¹⁾» — այն է՝ հռչակաւոր Աս-
թուղիկէ Նկեղեցին, որ 'ի Աստղարշապատ՝ հանդերձ վա-
նօքն, յոյր սակա և կոչէր առ ինքն 'ի Միւնեաց աշխարհէն
զվաղեմի սիրելին իւր՝ «զաննդակից և «խաղակից» Աստղար,
և նմա յանձնէր զհողաբարձութիւնն վանուց:

'Աթղթին կանուխ յիշատակելոյ 'ի մէջ մանրամասնա-
բար պատմի ²⁾, թէ նրաչես ընկալաւ Ասհան զ'Աստղար, յո-
րում տեղեւոջ և ոյց ոմանց յանդիմանն զառաջինն արկեալ լի-
նէր խօսք զհողաբարձութենէ, Ասթուղիկէ վանուց, և նրաչես
ոմանք նկրտողք յայդ հողաբարձութիւն 'ի ձեռն Յովհանայ
Մանգակունւոյ բաղում կարասի խոստանային Տեառն Մա-
միկոնէից: Չմանրամասն հանդամանս թողլով բանասէրն
ընթերցողն ուղղակի 'ի Վղթոյ անախ քաղել՝ այսչափս և
եթ համարիմք կարեւոր 'ի յիշատակել սաս, եթէ Ասհան՝
յոյժ զչարեալ ընդ անարդ առաջարկութիւնն, զոր ինքն
«վաս վաճառականութիւն» կոչէր, յանձնէ զհողաբարձու-
թիւնն վանուց 'Աստղարայ՝ «որում ոչ ոք գոյ փոխանակ»:

«Ալ ևս վասն զի տկարամիտ և անողուշացող այր եմ՝
յերկրաւոր միտս ոչ զբուշացի ժամոյն դաւոյն, այլ պարտ էր
փութով և երազ երազ անկանիլ յոտադ արտասուօք և աղա-
ջելով 'ի բաց փախչել 'ի հողաբարձութենէ տեղեոյդ: Ալ
ասհան լինէի պրծեալ 'ի չարաթոյն ժանեաց դազանացն, որք
յայնմհետէ դարանամտեալք 'ի ծածուկ և ըստ անհամար մե-
ծութեանց իւրեանց սաստիկ կարասեալ զնեալ բաղում յե-
սան՝ արեցին որաչես սուսեր զլեզուս իւրեանց և թոյնք իժից է-
ին 'ի ներքոյ շրթանց...որոց հետամտեալ այնուհետև խա-
փանեցին զզնացս իմ և հասեալ խոցոտեցին զիս 'ի մահ ³⁾...»:

1) Պատմ. Նաղ. յէջ 273:

3) Թուղթ. յէջ 595:

2) Թուղթ. յէջ 596:

Օպտալիսի սրտաճմլիկ իմն և փղձկալի բանս գրէր Վազար առ Վահան Մամիկոնեան զինի ըստանձնելոյն զվանուցն հոգաբարձութիւն՝ իբրև ժամանակ ինչ ընդ մէջ էր անցեալ: Աւ ընդէ՞ր արդեօք այս և կամ վասն որոյ պատճառանաց, զի՞նչ ինչ իցին այդ «չարաթոյն ժանիք», յորոց Վազար կամէր «պրծանիլ», եթէ վաղ ուրեմն զգացեալ էր «ժամոյն դաւոյն», զի՞նչ էր «դաւր» այդ, ոչք ոմանք իցին ՚ի վերջոյ այն «դարանամտեալ գազանք... որք հետամտեալ խափանեցին զգնացս նորս և հասեալ խոցոտեցին զնա ՚ի մահ:»

Այս ամենայն՝ բաց ՚ի մերձաւոր և յատուկ իմն պատճառաց, և՛ հասարակս ունին պատճառս. ուստի վասն յայտնապէս ըմբռնելոյ զառ ՚ի Վազարայ ասացեալ «զգաւն», անհրաժեշտ իմն է ՚ի քնին առնուլ նախապէս զհասարակին:

Ի՞ճառելն զՎ դարէ՛ զմտաւոր և զգրագիտական բարգաւաճման այնր ժամանակի, առ մեզ շատանան սովորաբար ՚ի նկարագրել զերկուց հանձարեղ Վարդապետաց և զնոցին աշակերտաց փայլուն իմն զորձաւորութիւն և եթ, մոռացեալ՝ զի բաց ՚ի հետևողաց և նպաստողաց մտաւոր բարգաւաճութեան աշխարհին թերևս առաւելագոյն ըստ թուոյ թշնամիք ոմանք էին և չարակամք, և այս՝ յաւէտ ՚ի նոյն իսկ ՚ի կրօնաւորաց դասէ: Այս չարակամք այնպէս խէթիւ հայէին ՚ի յառաջագիտութիւնն աշխարհի, զի եթէ հնար ինչ լեալ էր ՚ի ձեռս նոցա՝ արմատախիլ առնէին զամենայն բարեկարգութիւնն և ամենայնիւ վնասէին որոց վասն բարեկարգութեանց այսոցիկ եղեալ էին զանձինս: Թաղկեալ նոցա ՚ի տղիտութիւն և անպայման իմն ատելութեամբ հայելով յամենայն կարգս, որ նոր իմն էին և ներհակ իւրեանց հայեցողութեան և որ շարժեալ խախտէին զնոցին անփոյթ և ընդարմացեալ կենցաղ, — բնաւ իսկ ոչ կամէին ՚ի միտ առնուլ զկարևոր պահանջմունս ժամանակին: Մանաւանդ ատելով

ատէին զուսումն գիտութեան, որ յաչս նոցա մոլորութիւն իմն էր, իսկ իւրաքանչիւր հրահանգեալ այր ոք՝ աղանդաւոր:

Սակայն մինչ կենդանի էին արթուն հովիւք Հայաստանեայց, թշնամիք լուսաւորութեան աշխարհիս մերոյ երկնէին՝ ի բացարձակ գործելոյ: Եւսկ զկնի նոցին վախճանի, յորժամ չէր ի միջի որ՝ ըստ ասելոյ ծերունւոյն Խորնոյ, «բնբերանէր զնոսա սաստելով և չափ դնէր բանի և լուութեան», — սանձարձակ կրիւք յարձակին ի վերայ աշակերտաց նոցա և «իբրև դաղանք» զբազումս ի նոցանէ «խոցոտեն ի մահ»: — Եւզմաւաստակ Թարգմանչաց մերոց, որք՝ ամս յոլովս յօտար աշխարհի անդ դեգերեալ և զգիտութեան պաշարեալ դանձա, յուսալիւ ակնկալութեամբք դարձ առնեն ի հայրենիս, ոչինչ տեսանեն բաց ի նախանձէ և ատելութենէ և այն՝ յիւրեանց իսկ եղբայրակցաց: «Մ ոք ի ձէնջ թոշակս յաղաղս մեր, ի մորմոքեալ աղաղակէ սիրտ վսեմագոյնն ի Թարգմանչաց, ո՞վ ոք բան յօժարեցուցանող կամ յորդորական, ո՞վ ոք յերթալս մեր բռնաբարձս, ո՞վ ոք ի դայն մերում հանդիսս, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց: Թողեց զայն, զի և ոչ զլեզուս չարս և զտգիտութիւնս հանդերձ անտաի փառամոլութեամբն և կատաղի լեզուանութեամբն սանձահարեցէք. այլ նիւթ նոցա անմտութեան զձեր ուսումնաստեացդ տալով բարս՝ բորբոքեցէք առաւել քան զհնոցն Եւրեղովնի ¹⁾»:

Եկեղեցականք ոմանք ախմարք և ընդինքնահաճք՝ ոչ կարացեալ արժանապէս ճանաչել զյարդ հրահանգաց Թարգմանչացն, ծաղրէին զնոքօք, իսկ զարուեստ նոցա առ «ոչինչ պիտանացու» համարէին, — որ թերևս կարի ցաւեցուցիչ թուէր բանիբուն մշակաց ազգին: Եհաւասիկ որպիսի զկճեցուցիչ և յուսահատ իմն բանք ելանեն ի շրթանց Խորենացւոյ՝ ²⁾

1) Խոր. Պատմ. Բ. 92:

2) Խոր. Պատմ. Գ. 68:

որ մանաւանդ զըկեալ էր 'ի նոցունց. «...Մ՞՞վ կարկեսցէ ըզ-
յանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հա-
կառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտեալք և
քայքայեալք՝ յոյրվս փոփոխեն վարդապետս և բազում գիրս՝
որպէս ասաց ոմն 'ի հարցն. առ ամենայն բան նմանապէս
դժուարին և չար օրինակ դրեն զայն անձանց՝ զծիծաղելն
զմեք և զարհամարհելն իբրև զանհաստատնովք և որ ոչինչ
պիտանացու ունիցի արուեստ: Մ՞՞վ զնոսա ըմբերանեսցէ
սաստելով և զմեզ սփոփեսցէ զովելով և չափ դնէ բանի և
լռութեան...»: Չմտաւ զայս ածելով՝ հառաչումն յիս 'ի
ներքս ընթանայ և արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան
խրատական և սգաւոր...»:

Ըսց յայսցանէ՝ ոմանց 'ի բարձրաստիճան եկեղեցականաց
աշխարհին նախանձ բերելով ընդ Վարդմանիչս վասն ու-
սումնասէր բարուց և հրահանդաց նոցա՝ ընդ երկարս մաշէ-
ին զնոսա 'ի ստոր աստիճանի աբեղայութեան, զըկելով 'ի վե-
ճակաց և չառնելով եպիսկոպոսս. զայս օրինակ վարկեցան ընդ
«հրեշտակն և սպասաւոր մեծութեանցն՝ Վրիստոսի»՝ ընդ Վո-
րենացի. զայս օրինակ և ընդ Փարպեցի, որ դժգոհութեամբ
իմն բողոքէ առ Ասհան զայսպիսի անիրաւութենէ ¹⁾»:

Արդ՝ եթէ 'ի վերայ այսց նեղութեանց և հալածանաց
յաւելումք և՛ զայն, զի զրաբան և չարակն աբեղայք ոմանք
յամենայն դէպս խոչ և խութ լինէին արդիւնաշատ գործա-
ւորութեան Վարդմանչաց և չտային նոցա ուրիշ հանգիստ
և դադար, ապա ոչինչ զարմանալի թուեսցի, զի բազմաց 'ի
նոցանէ՝ անկարող լիալ այսպիսեաց տանել հալածանաց, թո-

1) «...Թող 'ի մեծամեծսն ձգտեցուցանել քորեպիսկոպոս որ չարար, զոր Պարսիկք և
զիս յեպիսկոպոսութիւն, ասէ Ղազար, և արք անարժանք գործեն և՛ այսօր: (Թղթ.
կամ 'ի նոցին յառաջին զգաստութիւն, և յէջ 587):
կամ յեկեղեցւոյ դատաւորութիւնս, այլ և

ղին զաշխարհս, զեկեղեցիս և զվանորայս և մեկնեցան յանապատ՝ 'ի քարայրս՝ զիւրեանց դառն ողբալ զվիճակ: Վեղեցիկ իմն օրինակ այսպիսի անձանց Նղիշէ է Մեղուաշուրթն, որ մերժեալ յինքենէ զեպիսկոպոսականն խոյր և գաւազան՝ «խոյս տայ 'ի խորս և 'ի ստորոտս անապատ վայրաց, զի տեսանէ զաշխարհս լի ամենայն չարեօք ¹⁾»: Իսկ որ աներկիւղքն էին՝ մինչև ցվերջին շունչ մաքառեցան և այնպէս զոհ եղին արեղայիցն ատելութեան: «Նրանելի Փիլիսոփոսն Մովսէս, աւանդէ Ղազար զԽորնոյ ծերունւոյն, որ արդարև մինչդեռ էր 'ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից, ոչ ապաքէն 'ի տեղւոջէ 'ի տեղի արեղեանդ Հայոց հալածական արարին: Մչ զլուսաւորիչն և զտղիտահալած զգրեանն նորա առ անդիտութեան փառապէս՝ կոչէին, և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղաղս այլոց ամօթոյ զխաբէական զեպիսկոպոսութիւնս նման դեղոց մահու արբուցեալ սրբոյն՝ հեղձուցին...: Չոսկերան 'ի գերեզմանէն հանել տային և 'ի գետ արկանել ²⁾...»:

Եւ «զհրեշտականման այրն զՏէր (Խորձենացի)՝ նոյն անհանդիստ հալածանօք վախճանեցուցանելով, որք և այժմ՝ դեռ ևս անյադութեամբ զինով ընդ մեռելոյն կազին»: Չայս արարին և ընդ «անարատ և յամենեցունց յարգելի յոյս՝ Տէր Խորովիկ», զայս և ընդ Տէր Աբրահամ և ընդ այլս բազումս, «որոց ոչ բացեալ 'ի բարերան զբերանս իւրեանց... խստագոյն վշտիւ վախճանեցան ³⁾»: Եւ քանեոց արդեօք անուանք ընն հասեալ առ մեզ...:

Յայս պատկառելի շարս պարտ է դասել և՛ զՂազար, թէև հալածանք՝ 'ի վերայ նորա յարուցեալք ոչ այնպէս կորստաբեր և մահառիթ եղին, որպէս հալածչացն էին կամք:

1) Եղիշէ. Յաղագս Միանձանց. յէջ 159:
Տես և յէջ 165: (Տպ. 'ի Վենետ. 1859):

2) Թուղթ. յէջ 607—8:

3) Թուղթ. Անդ:

Տեսցուք այժմ, զի՞նչ էին մերձաւոր և բուն պատճառք հալածման՝ Ազգարայ:— Անկալեալ նորա զհոգաբարձութիւն Աթուղիկէ վանուց՝ ըստ ամենայնի արժանի երևէր Ասհանայ ընտրութեան, 'ի սուղ ինչ ժամանակս 'ի կարգի եղ զվանան, հաստատեաց զկարդապահութեան կանոնս, բազմացոյց և զթիւ պարեգօտաւորաց, և ազգի ազգի բարեկարգութեամբք հասոյց զԱզգարչապատու Ակեղեցին և զվանան յայնպիսի վիճակ բարեզարդութեան և շքեղութեան, մինչ զի ոչինչ նուազեալ երևէին քան զորս յերկերիւր ամէ շինեալ էին 'ի Հայս վանորայքն: Ազգվազակի ել յաշխարհին հռչակ Ազգարայ, յամենուստ զիմեն այնուհետև 'ի վանս նորա՝ ոմանք յուսանիլ և ոմանք 'ի լսել զքարոզիչն որ «զօրաւորս ասէ»: Իսկ բարեպաշտ և ուսումնասէր իշխանք ժամանակին 'ի Մամիկոնեան, 'ի Աամսարական և յայլ տոհմից, յորոց ոմանք 'ի մանկութենէ անդ կապեալ էին ընդ Ազգարայ մտերմութեամբ, առատաբար հոգան զպէտս վանուց՝ նաև թոշակս ըստ տարւոյ կարգելով և մեծաւ յարգանօք պատուեն զԱզգար «որպէս զհայր», «ախորժիւք և սրատուականութեամբ ընդունելով զբանս նորա՝ որպէս զառողջ վարդապետի»¹⁾:

Չիք կասկած ինչ, զի յայս ամենայն աջողութիւն Ազգարայ չկարէին անտարբեր իմն հայել աջօք ուրք 'ի սկզբան «վատ վաճառականութեամբ» 'ի վանուցն հոգաբարձութիւն լինէին ձեռներէցք և սակայն ամօթով և նշաւականօք յետս դառնային: Չայսպիսի ձախողանս ոչ էր մարթ նոցա ընդ հուպ մոռանար: «Սկսան այնուհետև, ասէ Ազգար, յղանալ զօխակալութիւնն և ծնանել զնախանձ»²⁾: Աւ ասհա՛ ոչինչ ունելով հնարս առ 'ի վնասել զԱզգար, բայց հեղձեալ 'ի նախանձէ՛ ձեռնարկեն 'ի քսութիւն և 'ի չարախօսութիւն, որ

1) Թուղթ. յէջ 590:

2) Թուղթ. յէջ 604:

վանն արանց վատաց և վեհերոտաց յայսպիսի դէպս միակ և եթ են գէնք:

Տրանջելով զՂազարայ նախանձոտ արեղայից ոմանց վարն բազմութեան պարեգօտաւորաց, զորս ընդունէր նա 'ի վանն՝ առ 'ի ծաղկեցուցանել զվանականացն կեանս, — բանա 'ի մէջ արկանէին քսու թեան զհոգարարձութենէ նորին. «Թէ գամ մի պիղծ ոք է և չարագործ՝ Ղազարայ վանք անդէն և սիրէ գնտա» ¹⁾:

Ընտաղիւտ իմն և անպարսաւ պաշտօնատարութիւն ևս Ղազարայ՝ որ յեկեղեցւոջ անդ՝ նիւթ լինէր ոչ սակաւ բանասարկութեանց. զնմանէ ասէին թէ «գիր ոչ կարգայ և զընթերցուածնն այնպէս ասէ անայթաք՝ որպէս թէ գրոցն»: — Ազորմելի արեղեանն և՛ 'ի միտ ասնուլ շիամէր, թէ «որք՝ ըստ Ղազարայ, քաջ զխտն զԱստուծոն Ղաւթի՝ պաշտել միայն պիտոյ է 'ի ժամունն անախալ և ոչ միշտ զգիրանն 'ի ձեռին ունելով՝ խօսել զայլայլս իբրև զբանդադուշեալս ²⁾»:

Սորինք հանդերձ՝ յաջողելով զՂազարայ յորդաւատ բանն և տեսանելով զբազմութիւն ժողովրդոցն յօժարեալս 'ի լսել և յորդորեալս 'ի գովութիւնն, ծաղր ասնէին զնորօք. «արդ լսել ինչ չգիտէ և ընդ վայր աղաղակէ և քրքուի» ³⁾: — Աւ երբեմն՝ անկարող դոյով առաջի բանադէտ արանց զլիտվին ուրանալ զատելոյն իւրեանց՝ զՂազարայ արժանաւորութիւնն, ասին չարամտութեամբ. «արդարև՝ յառաջնում քաջհամեղս ասէր և զօրաւորս, բայց ապա յարդի ժամն բնաւ վատ ասէր» ⁴⁾:

Աչ զերծանն 'ի չարաթոյն լեզուաց արեղայից և՛ մաքուր վարք Ղազարայ, որ քան զամենայնս գերադաս համարելի են վանն սրբակրօն պարեգօտաւորի. «Ղազար, ծանուցանէին

1) Թուղթ. յէջ 588:

2) Թուղթ. յէջ 605:

3) Թուղթ. յէջ 605:

4) Թուղթ. Անդ:

նորա ամենեցունց, ասէ, թէ պռունկութիւն մեղք չեն, զսոյն
 և Մարգարանին սա դրէ»¹⁾։— Աւ ընդունէին զեղև և ան-
 սուրբ անձինք, դառնութեամբ դիտէ Ղազար զայսմանէ, ա-
 խորժելով զլուր այդպիսի բանից 'ի սատարութիւն բունելոց
 յինքեանս չար գործոցն»։ Ասկ որ ծանրագոյնն է և որով ջա-
 նային ընդ ոտն հարկանել միանգամայն զանուն Ղազարայ՝
 ժպիրհ աբեղայք ասէին, «թէ նա աղանդաւոր է»²⁾։ Այր 'ի
 միջի ոք, որ հարցանէր, թէ ճշմարիտ իցէ արդեօք մեղա-
 դրութիւնդ և կամ վասն զի՞նչ աղանդոյ է համբաւդ, բանն
 «աղանդաւոր» բաւական էր 'ի կերպարանս հրէշի ուրուք երև-
 եցուցանել զՂազար յաչս տղէս մարդկան և 'ի նա յուզել
 զամենեցունցն ատելութիւն։

Աւ որպիսիք ոմանք էին չարախօսողքն զՂազարայ, որ-
 կրամոլք և «'ի գործս ծոյլք և անժոյժք», որք 'ի շալակս և
 եթ սովոր են համբարել անխնայ զվանուց արարան»³⁾ և բաց
 յորովայնի և դրպանին պիտոյից, շունին այլ հոգս ինչ։ Թան-
 ճրամիտք, որք զարմանան ընդ յարգանսրն 'ի Մարգարանէն
 ցուցեալս առ Ղազար, թերևս կարծեցեալ, եթէ խոհակերու-
 թեամբ և կամ այլով համանման արուեստիւ մարթ իցէ հա-
 ճելի լինել յաչս իշխանայ⁴⁾։ 'Ա վերջէ՛ «'ի հաւատոյ և յուս-

1) Թուղթ. յէջ 576:

2) Թուղթ. յէջ 582:

3) Թուղթ. յէջ 594:

4) Հատած մի ամբողջ, յորում հեղնու-
 թեամբ իմն ակնարկէ Ղազար 'ի սիրելի սո-
 վորութիւնս արեղայից՝ համադամս յորի-
 նեւ ճաշակելիս, — թողեալ է 'ի բաց յերկ-
 բորդում ապագրութեան Թղթոյն թերևս
 յանկութութենէ սրբագրաց։ Մէք 'ի մէջ
 բերեմք զբովանդակ հատածդ զայդ՝ կամելով
 լրացուցանել զթերին Վենետիկան բնագ-
 րին գէթ վասն այնոցիկ, որոց չէ տեսեալ
 զառաջին տարագրութիւն Թղթոյն։ ... Իսկ

ոմանց. „'ի տանդ Տեառն ես իբրև անօթ
 էի յաւելորդ. քանզի յաղագս որոյ արուես-
 տի՝ դու Տէր, զիս սպասաւորեալ մեծարե-
 իր“։ — Այսմ ի՞նչ դոքա չէին աննչոյք.
 արծաթ և ոսկի, զոր թէ իմ 'ի շատ ումեքէ
 գտեալ էր, որում թէ ոք խնդիր էր՝ զայն
 'ի պետս անդոյդ ծախէի։ Խոհակերութիւն
 ուսեալ իսկ չէի, եթէ ձկան աղիս ըստ
 որում ճաշակելեացն մարթէի յորինել՝ և
 կամ զհաւուց փորոտիս, որովք թերևս
 կարէի ումեք հաճոյ լինել»։

(Թուղթ. Ղազար. Փարպ. հրատ. Մ. Էմին.
 յէջ 57):

մանէ ազէսք»... որք «զանուանս անգամ և կամ վքանօնու-
թիւնս կանոնեալ եկեղեցական գրեւոյ հապիւ կարեն զիտել և
զրգուութեամբ նախանձարկու դիւին նստեալք առ միմեանս՝
լու 'ի լու այլոցն զինչպէսս խօսին»¹⁾:

Ի շնորհս այսպիսեաց մարդկան անհետեթ բանասարկու-
թիւնք՝ որ Վազարայ, 'ի բախաց անտի վանուց ծաւալէին,
տարածանէին ամենուրեք, և 'ի Վահանայ հասանէին ունկս,
որոյ կարի զայրադնեալ եթէ ընդ արեղեանն և եթէ ընդ
Վազար, սպառնայր 'ի բաց վարել զամենեսին 'ի վանուց:

Տրտում և շուարեալ նստէր Վազար 'ի վանն անդ՝ ոչ
հնար ինչ ունելով հերքել և կամ լռեցուցանել զզրպարտու-
թիւնս 'ի վերայ անձին յարուցեալս. մանաւանդ ցաւազինս
թուէր նմա դժգոհութիւն Վահանայ, որոյ առաջի չկամէր
ինքն երևիլ ամօթապարտ: Ամին իրի կարծեցեալ՝ թէ դէթ
քահանայապետն աշխարհի ըմբերանեացէ զչարսխօսս և
պաշտպան լիցի ինքեան, առարքէ առ նա զերևելի սեպուհ մի
յականաւոր տոհմէ՝ հայցելով 'ի նմանէ — «առ 'ի բժշկու-
թիւն վերաւորաց փութան, հաս յօդնել. խոցոտեցայ 'ի թրշ-
նամուոյն անթիւ նետիւք. կարեվէր եմ մերձ 'ի մահ, քեզ է
այսուհեաւ հարկ դնել դեղ և բժշկել. կամ թէ մեռանել՝ տա-
նել 'ի շիրիմ և թաղել»²⁾:— Եսկ քահանայապետն զարմա-
նալի իմն թուլութեամբ՝ մանաւանդ թէ երկչոտութեամբ
զայս պատասխանի յդէր առ Վազար. «Ես և՛ 'ի տեսանել իսկ
չիչխեմ զքեզ առ երկիւղի. դու ասես, եթէ դամ բժշկեմ և
կամ թաղեմ. մի՛ գուցէ զգացեալ ուրուք և՛ զիս ընդ քեզ
թաղիցէ»³⁾:

Տեսեալ Վազարայ, եթէ ամենայն ջանք և ճգունք իւր 'ի
ցուցանել զանձին անպարտութիւն ելանեն 'ի դերև, իսկ բան-

1) Թուղթ. յէջ 606:

3) Թուղթ. Անդ:

2) Թուղթ. յէջ 598:

սարկութիւնք ևս քան զևս աճին և անտանելի իմն լինին, — հաստատէ զմիտս անձամբ երթալ առ քահանայապետն և մերկապարանոց առնել զամենայն չարախօսութիւնն արեղայից: Սակայն քահանայապետին՝ ոչ տեղեկացեալ զհայցուածոց նորա, նաև ոչ խօսեցեալ ընդ նմա և բան մի, ՚ի բաց մերժէ զնա աղաղակելով. — «Յո՞ գաս. չկամիմ, չիշխեմ տեսանեմ¹⁾»: — «Արդեօք տարա՞ն զիս (քահանայապետն) ՚ի սենեակ միանգամ և երկիցս, դանդաթի Ասղար ցաւ ՚ի սիրտ առ Ահաճան, և խօսեցա՞ն ընդ իս, որպէս հրամայէ Փրկիչն, միայն ընդ միայն և կամ միով և կամ երկու ընկերօք, և գտեալ անհաւան՝ համարեալ իբրև զմեղաւոր և զմաքսաւոր՝ հալածէր»:

Գիտացեալ թշնամեաց Ասղարայ, որք մինչև ցարդ «գարանամտեալք ՚ի ծածուկ» նիւթէին զչարիս և զնենգութիւն, զի նա ել յաչաց Մարգարանին և երկիցս մերժեցաւ ՚ի քահանայապետէն, — ՚ի բաց ձգեցին զգիմակ իւրեանց, յափշտակեցին զամենայն արարս նորա, զորս բերեալ էր ՚ի Արաց և ՚ի Միւնեաց, որպէս և ՚ի Մամիկոնեան սեպհաց ստացեալ զտուրան և հանին զնա ՚ի վանուց մերկ և թշնամանօք²⁾: «Չի անգամ և զհոռոմ գրեանդ, ասէ Ասղար թախճանօք, ոչ ետուն զինի իմ, որք կան այդր (ի վանն) ընկեցեալ ՚ի կերակուր ցեցոյ: Բայց արդեօք կարդացեալ լուսաւորեսցին ՚ի դոցանէ բնակեալքդ և կամ զայլս լուսաւորիցեն»³⁾....:

Այսպէս անիրաւարար զրկեալ և հալածեալ Ասղարայ՝ թողու զԱսղարչապատ և զաշխարհն Այրարատայ՝ կամելով զնալ ՚ի կողմանս Յունաց: Հասանի յԱմիթ քաղաք և

1) Թուղթ. յէջ 600:

2) Թուղթ. յէջ 592:

3) Եթէ քանի՛ ամս տեւր հոգաբարձութիւն Ասղարայ ՚ի Վաթուղիկէ վանս, որ-

պէս և ո՞վ ոք էր քահանայապետ ժամանակին, զորմէ յիշի աստանօր, — զայսմանէ ասացուք ՚ի ստորև՝ ՚ի կարգելն զժամանակ գրութեան Թղթոյն:

անդ ժամանակ մի զտեղի առնու։ Աստանօր Աղազար, որ և՛ զինի այսքան ձախորդութեանց և զըկանաց տակաւին ոչ էր վհատեալ, դամ մի ևս փորձ փորձէ 'ի խնդրել զերաւունս իւր և զարդարութիւն. «զի վստահ եղեալ (էր) յամենիմաստ Մարգարանն, եթէ զիտէ ճարտարութեան բանի լինել չսող և զիտել զերաւունս»¹⁾։ Յայնժամ առաքէ նա 'ի ձեռն պատուական նախարարին՝ Մամիկոնէին Համազասպայ զհռչակաւորն իւր «Թուղթ» առ Ահազան Մամիկոնեան, յորում զարմանալի իմն լըջմտութեամբ և կորովաբանութեամբ հերքելով զաբեղայիցն զրպարտութիւնս, յայտնապէս յանդիման կացուցանէ զբանասարկուաց իւրոց «անգիտութիւն և զանկարգ վարս» : — Աչ վերպեցաւ Աղազար յահնկալութենէն։ Համոզեալ Ահազանայ 'ի մանրամասն հանդամանաց Թուղթոյն, եթէ ումպէս են բանասարկութիւնք զԱղազարայ և յանիրաւի՝ հալածանք, որ 'ի վերայ նորա յարուցեալք, կոչէ առ ինքն զնախկին սիրելին իւր՝ «զԱղազար, ուրում ոչ ոք գոյ փոխանակ»:

Հաւանութեան թուի, եթէ ընդհուպ յետ դարձին իւրոց յԱմթայ՝ որպէս այս տեսանի և 'ի Յառաջաբանէն²⁾ Թուղթոյ, գրեաց Աղազար ըստ հրամանի Մարգարանին զՊատմութիւն իւր, յորում մեծաւ սիրով և հոգելից բանիւ կենդանադրեաց զԱհազանայ և զորոց ընդ նմա՝ սիրադործութիւնն:

Աստանօր սպառին որ ինչ առ մեզ հասեալ են գրաւոր տեղեկութիւնք զվարուց Աղազարայ։ Արպիսի կեանս վարէր նա յետ այնորիկ, զինչ այլ ևս երկասիրեաց բաց 'ի Պատմութենէն, որպէս և՛ քանի՛ ամաց վախճանեցաւ և ուր թաղեցաւ, — զայսցանէ չիք ինչ ուրիք յիշատակեալ հաւաստեալ:

1) Թուղթ. Յառաջաբ. յէջ 567:

2) Թուղթ. Յառաջաբ. յէջ 568:

Աւանդութիւն է և եթ այժմ (եթէ կամիցիմք յայդ դիմել աղբիւր), որ թերևս կարէ զնոր ինչ ծանօթութիւնս ընծայել զՂազարայ: Իբրև չորս ժամաւ հեռի յԱջմիածնայ՝ յարևմտից հիւսիսոյ նորա՝ առ ստորտաով լերին Արազածոյ, կանգնեալ կայ մինչև ցայսօր գիւղն Փարպի՝ (առ համանուն վտակաւ)—տեղի ծննդեան Ղազարայ: Ի վերայ բարձրաւանդակի միոջ՝ որ ՚ի գեղջն, կայ զարդիս մատուռն մի աւերակ՝ առանց իրիք արձանագրութեան: Բնակիչք տեղւոյն Առք Թարգմանիչք անուանեն զմատուռն: Ղազար չէ՞ արդեօք մին յայսոյ թարգմանչաց: Բաց յայսմանէ՝ իբրև կէս ժամաւ հեռի ՚ի Փարպեոյ է և այլ գիւղ՝ Ղազրեձան անուն (թերևս Ղազարու վան, կամ լաւ ևս ասել՝ Ղազարու վանք), որոյ ՚ի հարաւակողմն է հին եկեղեցի: «Բնակիչք կողմանցս, ասէ բանասէր ոմն փութաջան ¹⁾, աւանդեն ինել զայս եկեղեցի յանուն Ղազարայ Փարպեոյ և զգերեզման նորին ցուցանեն ՚ի հարաւային աւանդատան եկեղեցւոյս, որպէս և աւերակն տեղւոյն ցուցանէ ՚ի խոնարհ անդ զփոքրիկ ցածուն կամարայարկ ինչ»:

¹⁾ Արարագրութ. կաթ. Եջմիածնի և եպ. Շահաթունեանց. հատ Բ. յէջ 74: հինգ Գառապն Արարարայ. Յովհ.

Գ Լ Ո Ւ Խ Ի Ն .

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՂԱՉԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՑ :

Ա. — «Թ Ո Ւ Ղ Թ Ա Ռ Մ Ա Մ Ի Կ Ո Ն Է Ի Ց Տ Ե Ի Ր Ն Վ Ա Հ Ա Ն » :

Սակա-նի-գուն երկասիրութեանց Ղաչարայ: — Մեհնա-նի-ն այսց կարթեաց: — Ղաչար՝ որպէս եկեղեցական հոգեւոր: — «Թո-ղն» Ղաչարայ առ Վահան: — Վա-րևորո-նի-ն Թղնայն՝ իբրև գրական գործոյ. ո՞՞՞ Թղնայն: — Պարո-նահո-նի-ն Թղնայն՝ աճքաստանո-նի-ն Թեղաչից Ղաչարայ և թի առ թի հերթելն նորա զըրպար-որո-նի-նան: — Ընդիք Տասունո՞ Թղնայն: — Ժամանակ գրելոյ Թղնայն: — Եթէ ո՞վ ո՞ր էր յառա-բա հալածման Ղաչարայ « գլխաւորն Հայոց Ժահանայութեան » :

ՍԱԿԱՒԱԹԻՒ ԽԻՄՆ ԼԵՆ ՈՐ ԱՌ ՄԵՂ ԼԵՆ ՀԿԱՏԵԱՂ ՄԻԱՏԻՆԱ-
պրական երկասիրութիւնք Ղաչարայ Փարպեցւոյ: Աւ այս՝
ոչ իթէ այնու, զի ՚ի ժամանակաց անտի կորուսեալ անհե-
տացեալ են այնոքիկ ՚ի սպառ և կամ յանկեան ուրեք և՛ մինչ
ցարդ թաղուցեալ՝ անյայտ մնան ՚ի բանասիրաց: Փաստք
ոմանք զտանին առ մեզ, որք ցուցանեն, թէ Ղաչար սակաւ
իթող զինի իւր զբաւորական վաստակս: Մարթ իցէ անգամ
ասել, թէ չէր նորա առհասարակ մեծ ինչ սէր կամ փափագ
զիւն առնուլ ՚ի ձեռս, և միայն ՚ի հարկեցուցիչ հանգամա-
նաց իցէ յայն դիմեալ: Աարծիքս այս թերևս համարձակ
թուեսցի, բայց այսու ամենայնիւ չէ անհիմն: Յերկոցունց
երկասիրութեանց Փարպեցւոյ՝ որ ծանօթ են զարդիս, առա-
ջինն՝ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, գրեալ է նա ան-

շուշտ 'ի հարկէ ստիպեալ՝ ոչ իբրև գրական գործ, այլ ջատագովութիւն ինչ անձին: Չսոյնանման Թուղթս, այն է՝ զաբեղայիցն բանասիրութեանց զեղծմունս, որպէս և զայլ ինչ ընտանեկան նամակս, անշուշտ գրեալ էր 'Ազգար ոչ միայն առ Ասհան: Թերևս յառուր միում յերևան ելցեն և այլ թուղթք պատմադրիս, օրինակ իմն՝ առ Գլխա-որն Հայոց Ժահանայո-Յեան, առ որ քանիցս զխմեալ էր 'Ազգար՝ զարգարութիւն հայցելով. առ այս կամ այն սեպուհն 'ի Մամիկոնէից և 'ի Աամնարականաց, որք՝ որպէս տեսաք, մտերիմք էին 'Ազգարայ: Բայց ոչ ելցէ այս հակառակ կարծեաց մերոց. գրութիւնքդ այլոքիկ ըստ պահանջման հանդամանաց գրեալք և անկասկած ոչ 'ի լուր և յընթերցումն հասարակաց պատրաստեալք՝ առանին, ընտանեկան և եթ նամակք լինելոց էին, յոյժ տարբերք 'ի մատենագրական երկասիրութեանց՝ զորոց իսկ ասեմքս:

Իսկ երկրորդ երկասիրութիւն 'Ազգարայ՝ «Արքորդ 'Աստու-հո-Յե-ն Հայոց», ըստ հրամանի շարագրեալ և ապսպարեալ է գործ՝ դոյնպիսի գործոց յատուկ իմն նշանօք, որպէս տեսցուք 'ի ստորև 1):

Թերևս ասիցեն, եթէ և՛ Խորենացի և՛ Աղիշէ յօրինեալ են զ'Աատմութիւնս իւրեանց ըստ հրամանի իշխանաց: Արդարև սակայն բաց յապսպարեալ երկասիրութեանցն՝ են նոցա և այլ բաղմաթիւ վաստակք, որք ցուցանեն, թէ ոչ 'ի հարկէ միայն ստիպեալ առնուին նոքա զրիչ 'ի ձեռս, այլ առ այս ներքին իմն և անհրաժեշտ էին նոցա պէտք և ձգտումն:

1) 'ի յառաջաբանի անդ 'Աատմութեան (յէջս 3. 15. 17) քանիցս յիշէ 'Ազգար շեշտելով՝ եթէ ինքն ձեռն արկեալ է 'ի գործ ատիպեալ, «հարկեցուցեալ, բռնադատեալ իշխանաց և կամ 'ի Ասհանայ. յորմէ թերևս նոյնպէս մարթ իցէ հե-

տեկցուցանել թէ գրեն զպատմութիւն և առ հասարակ մատենագրութիւնն ոչ էր այնքան սիրելի նորին ախորժակաց և ազգոր-Յեանց, որպէս այլոց ոմանց պատմագրաց մերոց:

Մերս յառաջագրեալ կարծիք մասամբ իւրիք հաստատին այնու, զի բազմաց 'ի պատմագրաց մերոց՝ մի ըստ միօջէ յիշատակեալ զանուանս նաև փոքունց երկասիրութեանց մատենագրաց՝ առ նովաւ որպէս և զկնի նորին ծաղկելոց, — չյիշեն բաց 'ի Պատմութենէ նորա և ոչինչ: Նորին Թուղթ անդամ ոչ է ծանօթ ումեք: Մայ յայսմանէ՝ որ կարևորագոյն է, 'ի հաստատութիւն կարծեացս դայ և անժխտելի վկայութիւն Թղթոյն Յառաջաբանի՝ գրեցելոյ յանյայտ բանասիրէ ումեմնէ: Սորա՝ անձամբ ծանօթ լեալ Ղազարայ՝ թերևս իբրև ազգակից և կամ աշակերտ նորա, և գրեալ զյայտարարութիւն իւր զկնի նորին մահուան, միայն զերկուս և եթ յիշատակէ անուանս վաստակոց Ղազարայ: Աւ անշուշտ զանց չառնէր նա աւանդել զայլ երկասիրութեանց նորին, եթէ այդպիսի ինչ լեալ էր. մանաւանդ զի 'ի գրելն զՅառաջաբան իւր՝ կէտ իւրոյ նպատակի է՝ ըստ բանից իւրոց, «զի ընթերցասէրքն զՊատմութիւնս կարդալով՝ ընդ նմին և զԹուղթ ընթերցեալ, զփորձ առցեն նորա (Ղազարայ) լաւութեան բանին¹⁾»: Նսկ եթէ բանասէրդ այդ յիրաւի ժամանակակից էր Ղազարայ և ծանօթ իսկ նմին անձամբ, պարզապէս երևի 'ի պարունակութենէ Յառաջաբանին: Աստանօր դտանին այնպիսի ակնարկութիւնք և տեղեկութիւնք՝ ոչ յիշատակեալք 'ի Թղթին անդ և անյայտք այլոց մերոց մատենագրաց, զորս մարթ էր գիտել մերձաւոր ումեմն անձին և եթ: Քանզի գրողն Յառաջաբանի քաջ գիտէ, թէ կկեղեցին Ասթուղիկէ վանուց՝ որ ընդ Ղազարայ էր հոգաբարձութեամբ, «փայտակերտ» էր և թէ այն «'ի հրոյ վնասեցաւ»: Յայտնի է նմա, եթէ Ղազարայ՝ 'ի բաց վարեալ 'ի վանուցրն և թողեալ զՂազարչապատ, «կամ եղև գնալ 'ի կողմանս Յունաց»: Քաջայայտ է նմա զի Ղազար «հասանէր յԱմիթ

1) Յառաջաբան Թղթոյն. յէջ 568:

քաղաք և անդ ժամանակ մի զտեղի առնոյր»: Օանօթ է նմա, զի յԱմթայ իսկ յղեալ է Ղազար զԹուղթ իւր առ Վահան և այս՝ ՚ի ձեռն «բարեւէր մեծի և պատուական նախարարի Համազասպայ Մամիկոննոյ»: Ե վերջէ՝ տեղեակ է նա և այնմ, զի Վահան յօժարութեամբ ընկալաւ զԹուղթ Ղազարայ, որ ընդ հուպ կոչեցաւ առ Մարզպանն և ասա ուրեմն «պատմագրեաց զԵրրորդ Պատմութիւնս Հայոց»: Իսկ եթէ յաւելցուք ՚ի սոյնս և զայն, զի հեղինակն Յառաջարանի «ի՞ Ղազար 1)» կոչէ զպատմագիրն, ապա միանգամայն բացայայտ է, եթէ նա՝ որպէս ասացաք, մերձաւոր իմն լեալ էր Ղազարայ և թերևս՝ աշակերտ 2) նորին, ուստի և քաջածանօթ թուոյ և անուանց նորին մատենագրական վաստակոց:

Չայսպիսի կարծիս յառաջ բերեալ յաղադս սակաւութիւ լինելոյ Ղազարայ երկասիրութեանց, բնաւ իսկ ոչ կամիմք ասել, թէ նա անհրահանգ ոք էր յուսմունս կամ անձեռնհաս և անբաւական ՚ի մատենագրել. քաւ և մի լեցի: Չներհուն իմն հմտութենէ նորա հրահանգաց յիշեցաք ՚ի վեր անդր. իսկ Թուղթ առ Վահան Մամիկոնեան զեղեցիկ իմն՝ ապացոյց է, թէ նրպիսի վսեմ ոճ և ընտիր լեզու էին Ղազարայ: Միտ բանիս այն է, թէ Փարպեցի՝ առաւելապէս եկեղեցական լեալ հռետոր, որպէս բացայայտ երևի ՚ի նորին երկասիրութեանց, յաւետ ջանս յանձին ունէր ՚ի բեմէ անտի տաճարին «ասել» ամափոյ առ ժողովուրդն և զլսողին անփոյթ՝ զգրի հարկանել զասացեալսն յինքենէ ճառս և քարոզս և որ ՚ի սոցին սակի, որպէս հակառակ նմին տեսանեմք՝ օրինակի վասն՝ առ Յովհանայ Մանդակունոյ: Ղազար հոգեւեց իմն էր վարդապետ ժողովրդեան, որում յերկնուստ պարգևեալ էին շնորհք ՚ի քարոզել զԱստուածայինն բան:

1) Թուղթ. Յառաջարան. յէջ 568:

բերէ զմանութիւն գրութեան Ղազարայ:

2) Գէթ ոճն Յառաջարանին մեծ իմն

'Ա կորովի և յեռանդնալից բանից նորա, որ իբրև զաղբիւր յորդառատ բղխէին անարգել, գրաւեալ յափշտակէին միտք ջերմեռանդն ժողովրդականաց, որք «պատմելով միմեանց ըզնորհին յորդորմունս, յարգելով և անմոռաց զարմանալով զլուսաւոր և զանդայթ բանին բղխումն» 'ի հրապարակս և 'ի փողոցս յայս և եթ հռչակելով (լինէին) խայտացեալք¹⁾...»

'Ա զօրաւոր քարոզութենէն «հեղձուին 'ի նախանձէ» թշնամիք նորին՝ անկարող գոլով ուրանալ, թէ «արդարև քաջամեղս ասէր (Ղազար) և զօրաւորս²⁾»։— «Նւ խնդային նովաւ, ասի Յառաջաբանին անդ Թողթոյն՝ զՂազարայ, յամենայն ժամ եկեղեցիք և վկայարանք սրբոց և տեղիք վարդապետարանք (և) ծաղկեալ լինէին հոգիք լսողացն 'ի շնորհացն, որ ելանէին 'ի բերանոյ նորա³⁾...»։— Արաւեալ Ղազարայ 'ի բեմբասացութիւն և յայնմ հանապազորդեալ՝ չէր հակամէտ 'ի մատենագրել, որ չէ անսովոր ինչ և առ այլ ոչ սակաւ կորովաբան և հանձարեղ քարոզիչս։ Ճարտասան կոչումն ևս, զոր ոմանք ընծային Ղազարայ՝ ըստ իս ցուցանէ, թէ նա յաւէտ իբրև քարոզիչ էր հռչակեալ յաշխարհին, քան եթէ մատենագիր։

* * *

Թուղթ Ղազարայ յոյժ կարևոր է յիշատակարան վան մերոյս Ապրութեան պատմութեան։ Արդարև՝ ըստ բովանդակութեան չէ մեծագիր (թէև իբրև Թուղթ՝ ընդարձակ է ըստ բաւականին), սակայն պարունակութիւն նորա յոյժ յաճախաւոր է իմաստիւք և բազմադիմի տեղեկութեամբք։ Նաց յարժանաւորութեանցն, զորս տեսանեմք յայնմ՝ իբրև զմիակ և զստոյգ աղբիւր վան վարուց Փարպեցւոյ, կարևոր

1) Թուղթ. յէջ 604:

3) Թուղթ. յէջ 565:

2) Թուղթ. Անդ:

է այն՝ Բ) իբրև համառօտ, բայց ճշգրիտ իմն նկարագիր առտնին կենաց արեղայից մերոց 'ի Ն դարու. Գ) հազուագիւտ ծանօթիւք զոմանց 'ի Թարգմանչացն, և մանաւանդ՝ զհօրէ Ազգայնոյ պատմագրութեան, — ծանօթիւք՝ որ և՛ ս մեծագին լիցին, եթէ բաղդին բերմամբ գտանիցի անթերի 1) օրինակ Թղթոյն. և Դ) իբրև ընտիր իմն գրական գործ:

'Ի ճառելն զվարուց 'Ասղարայ' տեսաք ուրեմն զերեցունց առաջնոց կէտից զկարևորութիւնս, որքան կապ և վերաբերութիւն էին այդոցիկ առ վարս պատմագրին: 'Վննեսցուք այժմ զկէտն վերջին, այն է՝ թէ զինչ կարևորութիւնք կամ կատարելութիւնք իցին Թղթոյն՝ իբրև գրական գործոյ:

«Իբրև զքաջ պատերազմող զինեալ ('Ասղարայ) զինքն, զի բանիւ զօրութեան զիւր ոգւոյն և զքաջալերութեան 2) զպատկեր կերպարանաց և զվաստակ բանի իւրոյ՝ որ առ նոսա յառաջագոյն լուսափայլեալ, — 'ի ձեռն գրոյ Թղթոյս այսորիկ ծանուսցէ նոցա »:

Յայսպիսի հակիրճ, բայց ստոյգ բանս ամփոփէ զպարունակութիւն ողջոյն Թղթոյն անյայտ հեղինակն Յառաջաբանին՝ համառօտ իմն նկարագիր, յորում լիապէս արտափայլին զերեցիկ արժանաւորութիւնք 'Ասղարայ: Աւ յիրաւի՝ չեն բաղմաթիւ 'ի 'Վարութեան մերում այնպիսի ընտիր գործք, որպիսի ինչ է Թուղթ 'Ասղարայ: Թերևս բաց 'ի Խորենացւոյ՝ այլոյ ուրումն ոչ է արկեալ 'ի կիր զոճն այն վսեմ, ըզբանն այն ազգու և զլեզուն՝ կատարուն և պատարուն, զոր

1) Բաց 'ի բազմադիմի աղաւաղմանց և շիտթութեանց՝ են 'ի Թղթին և 3 — 4 թերթք պակասեալք կամ 'ի բաց հանեալք, և այն՝ թուի լինել զհալածանաց Մովսիսի Խորենացւոյ և ընկերաց նորին: (Տէս յէջս 584, 593, 608, 610):

2) Մեք այսպէս ընթեռնումք զմագիրըն — և... և զքաջալերութեան և զպատկեր

կերպարանաց՝ 'ի ձեռն գրոյ Թղթոյս այսորիկ ծանուսցէ նոցա, զվաստակ բանի իւրոյ որ առ նոսա յառաջագոյն լուսափայլեալ... — յորում տեղափոխեալ թուի բանս վերջին: Այս տեսանի նաև յ'ա շաղկապէ, որ աստ սխտակարար և յանդէսս է վարեալ (Յառաջ. Թղթ. յէջ 567):

աստ տեսանեմք: Յայտ իսկ է, զի Ղազար խնամով իմն յարմարեալ և կարգաւորեալ է զայն. իսկ պարագայք երևելոյ Թղթոյն և հոգեկան վիճակ հեղինակին նպաստ լեալ են անարուեստակութեան և անկեղծութեան մտաց և զգացմանց, որ անկասկած մեծ իմն է արժանաւորութիւն:

Կպատակ Թղթոյն, որպէս ծանօթ է մեզ յառաջագրելոցն, է ջրել հերքել զաբեղայից փցուն բանասարկութիւնս և անմեղադրելի կացուցանել զբանասարկեալն, — և Ղազար առնէ զայս զարմանալի ճարտարութեամբ: Այնպէս կենդանի է դրեալ Թուղթն, մինչ զի վերձանելով զայն, թուի 'ի բեմէ անախ լսել «զգօրաւոր ասողն» շանթս արձակելով և առ աջօք տեսանել զբանասարկու արեղայս՝ «դլխարկեալս, պատատեալս երեսօք...» պապանձեալս որպէս համր դե»¹⁾ — յանկեան անդ տաճարին հեղձնելով 'ի նախանձէ: Հռետորական ձիր Ղազարայ 'ի յայտ դայ աստանօր ամենայն զօրութեամբ և պայծառութեամբ: Յիւրաքանչիւր էջս յինքն դրաւ է զուշ մեր այն սքանչելի կորովաբանութիւն, զոր այնպէս ատէին և յորմէ այնպէս սոսկային ոմանք յարեղայից: — Արդարև, այս դործ Ղազարայ չէ հանդոյն ինչ սովորական թղթոց: Համայն Թուղթն ոչ այլ ինչ է, բայց եթէ անձինն ջատագովութեան ճառ, վեհանձն իմն բողոք յանիրաւի դատապարտեալ առն, որ վճիռ և հատու բանիւ, աջող նմանութեամբք և փայլուն հակադրութեամբք զսրտին իւրոյ արտահանէ ըզթագուցեալ վիշտս, միշտ բարձր առնելով զինքն 'ի խաւարասէր թշնամեաց իւրոց և միշտ հայելով 'ի նոսա՝ իբրև յարս՝ արժանիս «բազում սգոյ և ողբոց արտասոււաց»²⁾: — Մերթ «անդգամ» իբրև զՊաւղոս, որ հանդերձեալ է «անձամբ զանձին լաւութիւնս և զճգունս թուել մի ըստ միոջէ» առաջի Մարգարանին. մերթ համեստ մինչ ցայն աստիճան, յոր

1) Թուղթ. յէջ 603:

2) Թուղթ. յէջ 577:

Հասանել կարէ քաջ Հրահանգեալ կրօնաւոր ոմն՝ սակայն առանց իրիք նուաստութեան. մերթ ահարկու, որ սարսափա ածէ 'ի վերայ մեղաստէր և ամբարիշտ արեղայից՝ զառաքելոցն զհոգեփողոտ բանս յունկս նոցա հնչեցուցանելով. Հասապաղ խաղաղասէր, Հանապաղ ներողամիտ, որպէս վայել իցէ կրկիւղած սպասաւորին Աստուծոյ:— Աւ եթէ յայսր ամենայնի վերայ 'ի միտ առցուք և՛ զվսեմութիւն մտաց և զազդուութիւն բանից Համօրէն զրութեան, զփոփոխ յաջորդելն պատկերաց և նմանութեանց, զյամձախ հեղնելն՝ որ 'ի կծու կրգիծումն ևս փոխի ուրիք ուրիք, զնրբութիւն ասացուածոց և 'ի վերջէ՛ զաննման ընտրողութիւն բառից ¹⁾, — սպա խելամուտ լիցուք, եթէ քանի՛ մեծ են զբախան կատարելութիւնք Թղթոյն՝ Ապարայ:

Անցցուք այժմ՝ 'ի պարունակութիւն բուն Թղթոյն և յառաջ բերելով 'ի բնագրէն զընտիր ընտիր Հասաածս՝ արդեամբք ստուգեացուք, զորս նոր ուրեմն արարաք զնկատմունս:

Թէև Համառօտ, բայց յոյժ խորհրդաւոր են նախերգանք Թղթոյն. — «Փրկիչն մեր և Տէր Յիսուս Քրիստոս, այսպէս սկիզբն առնու Ապար, քաջ զղուշացուցանելով պատուիրէր առաքելոցն. թէ յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք, ասաջիք, եթէ ծառայք անպիտանք եմք: Ասկ ընդէ՞ր և հողեւոր մշակն Աստուծոյ Աուրբն Պաւղոս... շխարացեալ տանել զայթակղութեանն՝ արտաքոյ Քրիստոսի կա-

¹⁾— Ըստ վսեմ իմն ոճոյն և ամբայթ մղխման բանից՝ 'ի կիր արկանէ Ապար 'ի Թղթին և՛ զնոցին պատշաճ լեզու և բարբառ: Առ 'ի պայծառապէս հաղորդել զմտառս իւր՝ Ապար ոչ սակաւ նորս ինչ յօրինէ բառս գեղեցիկ իմն բարդմամբ՝ որ թերևս նմա միայն իցէ յատուկ: Քանզի 'ի Թղթութին և եթ մարթ է դիտել զամբողջ շարս առանձին իմն կազմեալ բառից, որք որչափ մեզ իցէ ծանօթ, ոչ պատահին առ այլ մտանադրաց մերոց և դարու. զոր օրինակ ախոյ անաբեկ և ժողովրդակեցոյց, կրկարայուշ, պարեգօտաւոր, քաջ համեղ (բան) ճգնափորձալից (Պաւղոս), հոգեփողոտ (սուր), արեղեան, որպէս և զեղջմամբ տառից առաջացեալք՝ առողջմտութիւն, ազէտիորհուրդ, հիւանդտես և այլն:

նոնին վարեցաւ և անձամբ զանձին լաւութիւնս և զձգունս մեծամեծ պարծանօք գրեալ՝ մի ըստ միոջէ կարգեաց. և ոչ իմն ստգտեալ խոտեցաւ, այլ կաց մնաց 'ի նմին առաքելութեան պայծառապէս: Աւ եթէ ընդէ՞ր այս այսպէս լինէր՝ ծանկցէ քննողն, թէ կարասցէ, ապա թէ ոչ լռեսցէ»¹⁾:

Ղազարայ՝ ակնարկեալ «զանգագածո-նի-նն» Պաւղոսի՝ անդէն 'ի սկզբան իսկ Յօղթոյն իրաւունս առնու առ 'ի համարձակապէս խօսել ընդ Մարդպանին, մանաւանդ թէ զարժանաւորութիւնս իւր յառաջ մատուցանել և զարեղայիցն հարուածել անկարգ կեանս և զաղխտութիւն:—Ապա՝ նախ քան ծանուցանելն զսկընապատճառէն իւրոյ հալածման, Ղազար սակաւուք տեղեկութիւնս տայ զինքենէ: Աւ զայս առնէ ոչ եթէ վասն չճանաչելոյ Ասհանայ զինքն՝ առ որ գրէր զՅօղթ իւր, այլ իբրև 'ի նուրբ իմն յանդիմանութիւն նմա. քանզի «աննդակից և խաղակից» լեալ Ղազարայ՝ հաւատացեալ էր Ասհան անձոնի բամբասանացն՝ որ ըզնմանէ և մերժեալ էր զնա յինքենէ, ոչ կամելով նաև հարցափորձ առնել և կամ տալ քննել զգատ նորին ընդ արեղեանն:

«'Ի սկզբանէ արարածոյ բազում օձիրս դործեաց նախանձ յաշխարհի», առէ Ղազար, զնախանձն ցուցանելով սկզբնապատճառ և՛ իւրոյ հալածման: «Անդէն և անդ 'ի սկզբանն զնախատեղծն ընկճեալ՝ նախանձու բանաարկութիւն՝ դարձոյց զնա 'ի հող. և վիայէ զիր 'ի Ասթուղիկէսն. թէ նախանձու բանաարկութիւն կմուտ մահ յաշխարհ»:—Ապա և զայլ զիպող օրինակս ինչ բերեալ 'ի Ղրոց Արբոց առ 'ի բացայայտ կացուցանել զնախանձուն կորստաբեր հետևանս, զկայ առնու 'ի գերադոյն օրինակն՝ 'ի Յիսուս և վառ 'ի վառ նկարէ զմատնիլն նորա «առ մոլեղնութեան քինու», զգատն անօրէն, որոյ վասն «երկոքեան (եղեն) մահապարտք՝

1) Թուղթ. յէջս 569—571:

և՛ ժողովուրդք շրէիցն և՛ օրէնք», և զվիճակիլն նորա մահու ՚ի «գիւամոլ նախանձէն»: «Աթէ զիս հալածեցին՝ և՛ զձեզ հալածեն. եթէ զիս, որ տանուաէր էի՝ Վէդգեբուղ կարդային, որչափ ևս առաւել զձեզ և զընտանիս իմ», — յառաջ բերէ Ղազար ՚ի միջի այլոց զբանա Յիսուսի՝ դարձեալ ցուցանել կամելով Ղազանայ, թէ որ ՚ի վերայ իւր յարուցան հալածանք, չէն ինչ անսովոր, այլ թերևս անխուսափելի իմն փորձութիւն յերեսաց մարդկան չարասիրաց, որպէս և զուշակեալ էր Փրկիչն ¹⁾:

Ասանոր սկիզբն առնու Ղազար թուել մի բառ միջէ զբանասրկութիւնս, զորս «առ նախանձու» կուտէին ՚ի վերայ նորա արեղեանն, ընդ ամին ճարտարաբանութեամբ հերքելով և ջրելով զայնս: Այս իսկ է մասն Թղթոյն, յորում ՚ի վեր ցոյանայ ամենայն կորովն և վստահութիւն Ղազարայ զրչին:

Բազմապիսի էին չարախօսութիւնք արեղայից զՂազարայ. կէտք նոցին բանասրկութեանց դասաւորեալ են ՚ի Թղթին այսպէս. արեղայք ասեն թէ՛

ա. — «Ղազար ասէ, թէ պոռնիութիւն մեզք չեն. զնոյն և Մարգարանին սա գրէ»:

բ. — «Ղազար աղանդաւոր է»:

գ. — «Ղամ մի պիղծ ոք է և չարադործ՝ Ղազարայ վանք անդէն և սիրէ զնոսս»:

դ. — «Մանուկ մի հողաբարձ (հողաբարձութիւն) անդւոյն չկարէ առնել»:

է. — «Ի նախնումն զխանարար խօսէր և այժմ անպիտարար»:

զ. — «Պիր ոչ կարդայ և զընթերցուածն այնպէս ասէ անսայթաք՝ որպէս թէ գրոյն»:

Անշուշտ տեսանէ ուշիմ ընթերցողն, զի կէտք բանասրկութեանց դասաւորեալ են ՚ի Ղազարայ ոչ որպէս սովորն է

1) Թուղթ. յէջս 571—576:

այսինքն է՝ ոչ 'ի տկարագունից սկսեալ 'ի վերուստ՝ 'ի զօրաւորան իջանին ըստ օրինակի հռետորական ճառից: Եւ այց սակայն զարտուղութիւնս այս 'ի ճարտասանական կանոնփնայց չէ առանց իրիք պատճառի: Եւ զրին իւր զԹուղթ՝ Ասղար ամենուրեք հռչակեալ, ամենեցունց ատելի և վնասակար իմն էր անձն. «աղանդաւոր» էր նա, որ 'ի բաց էր վարեալ 'ի վանուց յիւրոց իսկ եղբայրակցաց և զոր նորին իսկ վաղեմի սիրելին՝ Մարգարան, թողեալ էր անխնամ և կաթուղիկոսն՝ երկիցս մերժեալ: Եւ մ.ծի տագնապի էր Ասղար յանձին իւրում, զի մի՛ գուցէ և Թուղթ իւր ոչ ընթերցանիցի, որպէս բանից իւրոց զլացան դնել ունին, զի մի՛ գուցէ ընկալեալ Ասհանայ զԹուղթն՝ անտես առնիցէ զայն: Եւնդէն իսկ 'ի սկզբան Թղթոյն կամեր Ասղար յինքն զրաւել զուշ Մարգարանին. ահաւասիկ ոյր վասն առաջինն 'ի բանասարկութեանց զանհեթեթն դնէր. «Ասղար ասէ, թէ պոռնիկութիւն մեզք չեն, զնոյն և Մարգարանին սա գրէ»,— 'ի վերայ բերէ նա անմիջաբար՝ առ յապուշ կրթթել զԱսհան միանդամայն, ցուցանելով նմա, թէ և զինքն իսկ զՄարգարան արարեալ են արեղայք նպատակ չարախօսութեանց իւրեանց:— «Երդ՝ ո՞ր ոք յանօրինաց, թող թէ 'ի քրիստոնէից, դոչէ Ասղար 'ի բողոք յանիրաւի ամբաստանեալ առն, — 'ի միտս իւր (կարիցէ ¹) խորհել զայսպիսի ինչ, թող թէ և առ այլում զայսպիսի շնչել բան. ո՞ր անմիտ, ո՞ր տղէտ, ո՞ր շրեայ, ո՞ր այլադանդ: Եւ Ասղար զայդ քարոզէր. ո՞ւմ և կամ ո՞ւր և կամ ե՞րբ. որ տղէտն է զրոց, որ անհրահանդն է յուսմունս, որ Մովսիսական օրինացն օտար է և Կրիստոսատուր շնորհին անտեղեակ: Եւ չնցն արդեօք արեղեանս չայոց արժանի ողբոց արտասուաց և բազում

1) — Պակասեալ թուի 'ի բնագրին բայս նական երևեցաւ մեզ: Ղիմաւոր. մեք յաւելաք զայն որպէս հաւա-

սոյ Համբաւել զանախտանս, խօսել առ նախանձու զանար-
ժանս:—Մչ ապաքէն պոռնիութիւնն էր, յաւելու Ղազար,
ևս քան զևս վառեալ 'ի հողի՝ վկայութիւնս 'ի մէջ բերե-
լով 'ի Կրոց Արքոց, որ էաճ զՋրհեղեղն 'ի վերայ ամենայն
երեսաց երկրի. «յաղագս որոյ իրի համարեցաւ այնպէս մեծ
արդարութիւն Նհարոնեան Փենեհիղի յազգէ յազգ մինչև
յաւիտեան, եթէ ոչ յաղագս հարկանելոյ զեղարդեամբն և
ցցելոյ ընդ գետինն զՊամբրի՝ հանդերձ Մադիանացի բո-
ղին և ցածուցանելոյ զբարիութիւն Նատուծոյ»: Ասոն ոչ
ապաքէն վան անհանձար խօսիցն բազմաժամանակեայ քի-
նակալութեամբ սպանաւ յեղբօրէն:

Մչ շատացեալ դրական օրինակօք՝ Ղազար 'ի մէջ բերէ
և զսոցուն հակառակն, այն է՝ ոչ ապաքէն այնօքիկ և եթ
եղն հաճելի Նատուծոյ, որ հեռի էին 'ի պոռնիութենէ և
սուրբ կենօք անցուցանէին զաւուրսն, որպիսիք ոմանք էին
Ննովք՝ «այն Նատուծոյ», Նոյ՝ «երկրորդ աշխարհին սերելոյ
պատճառ», Մովսէս՝ «մեծն 'ի մարդարէս», Նղիա՝ որ «'ի մար-
մնի զանամարմնոցն բերէր զբաղաքավարութիւն» և այլք բա-
զումք: Ն վերջոյ՝ զհարգ «լիրքն և անամօթքն», աղաղակէ
Ղազար զայրացեալ, խօսելով զայսպիսի անհանձար բանս՝
չտոսկան 'ի Տարսոնացի Արովբէէն, որ յամենայն յիւր թուղթ-
սրն գրէ. «ամենայն պոռնիկ կամ պիղծ... ոչ ունի ժառան-
դութիւն յարքայութեան Կրիստոսի»:—Արդարև՝ իրաւա-
ցի նկատէ Ղազար 'ի վերջ բանին, —«գործէ ոք մեղս ըստ
թուլութեան մարմնոյ, որպէս եսս՝ որ մեղաւոր եմ քան զա-
մենայն կենդանիս, այլ ասել զմեղսն չգոլ մեղս՝ որպիսի՞ ար-
համարհոտ և ամբարիշտ հողի կարիցէ ածել զմտաւ» 1):

Օկնի այսորիկ Ղազար անցանէ յերկրորդ կէտն. «այլ
ասեն՝ աղանդաւոր է»: Աւ զայս՝ ցաւ 'ի սիրտ ասէ

1) Թուղթ. յէջս 576—582:

նա, ստէպ ծանուցանել ամենեցունց ճեպէին. զորս Հաւատացուցեալ 'ի տկարամտաց՝ թերի վարդապետութիւն շնորհին՝ որ էր 'ի յիս՝ հայեցուցանէին»։— Ասան այսր ամբաստանութեան Ազգար յիշեցուցանէ, եթէ ինքնին իսկ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն՝ ընթերցեալ է առաւելապէս զայնց արանց զգիրան, որք թշնամութեամբ էին ընդ աղանդաւորան, «որք վառեալք Սուրբ Հոգւոյն վնու՝ զսուրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն 'ի սիրտս նոցունց և զաղեղունս նոցա փրշրեցին», եթէ քաջ դիտէ ինքն որպիսի իմն էր աղանդ Արիոսի, Ապողինարի, Նեստորի, Աւաիքեայ, Մանեայ, որք «թէև դթեալ ամբժշկութեամբ՝ կադան 'ի հաւատն, այլ սակայն բանիւ և ոչ դործով. զի ըստ մարմնոյ պարկեշտութեան յամենայն ճղնութիւնս մի դժիով ելեւիս ասնէին...»։— Եսկ Հայոց աշխարհի աղանդ, ասէ՛ Ազգար, անանուն է ըստ վարդապետի և անդիր՝ ըստ բանի։ Ահաւատոյ և յունմանէ աղէաք երևին և 'ի դործս ծոյլք և անժոյժք, յորոց ըստ անդիտութեանն՝ որ 'ի նոսա և ըստ անկարգ վարուց՝ այդպիսի իսկ արդարև աղանդոց վայել էր բուսանել ըստ յօբուածոյ առասպելաբանութեանն. թէ «ըստ խոզի հարանացելոյ կոյաջուր բազանիք»։ Մի արդարև պատմեացի այս 'ի Աէթ, ըստ բանի ողբոյն, և մի լուիցի 'ի դրունս Ասիադովնի, իսկ որ ընթեռնուն՝ 'ի միտ աուցէ»։— Օայսպիսի կծու իմն երդիճանս դիտէ Ազգար 'ի կիր արկանել առ 'ի կորացուցանել զկտովն յամօթ զթշնամիան ¹⁾։

Օկրկուց զառաջնոց կէտից նպատակաւ իմն խօսեցա՛ք սակաւ ինչ երկարս, զի 'ի յայտ ածցուք զԱզգարայ ցուցման և եղծման եղանակն, որ յոյժ զօրաւոր է և համոզեցուցիչ։ Մանաւանդ մեծաւ նրբութեամբ մերկացուցանէ նա

1) Թուղթ. յէջս 582—588։

զթշնամեացն իւրոց զտղիտութիւն և գարշելի երևեցուցանել զնոսա, որ և այս զօրեղ գրչի է սեպհական:—Աստ իս՝ չեք ինչ պէտք յաւելուլ թուել մի ըստ միոջէ զփծուն ամբաստանութիւնս արեղայից և զՂազարայ ճարտար եղծմունսն: Աւստի հրաւիրելով զբանասէր ընթերցողն զմանրամասնութեանց՝ զթոյն առ բնագիրն զիսել, ՚ի մէջ բերցուք և զայլ քանի մի հատածս՝ արժանիս մտադրութեան:

Յոյժ ազդու են բանք Ղազարայ զքահանայապետէն Հայոց, որ ունին իսկ զնել բանից նորա ոչ կամեցեալ, մերժեալ էր զնա յինքննէ. — աջող օրինակք, փայլուն հակադրութիւնք, կորովի բան՝ զայսպիսի հնարս վարէ Ղազար առ ՚ի կշտամբել աներկիւղաբար «զգլխաւորդ Հայոց քահանայութեան և հիւանդտեալ հոգևոց»: Աւր աներկիւղութիւն քաջ հովուի, հարցանէ Ղազար ՚ի ձայն յուսահատ, ուր հոգողութիւն արդար ուսուցչի, ուր քրիստոսամանութիւն արդար հայրապետի: Արարածոց արարիչն յաղազս մեղաւորաց զիւտի մարդ եղև. բազում թշնամանաց համբերեաց, կռիանաց և թուք յերես առնլոյ, և փշեղէն պսակի, հանդերձ այլովք ևս մեծամեծովք. դա (քահանայապետն) և ջուր սրակել ընդ երեսս թալկացելոյ վերաւորի ոչ իշխեսաց՝ ՚ի մարդկան երկիւղէ: Առեալ լիաբուն զգահեկանս ՚ի Շամարտացի զթածէն՝ զգինս դարմանոց՝ ՚ի սապատս համբարէ և զհիւանդս հանեալ ՚ի պանդակոյն ընկնուլ արտաքս բազում ամիութութեամբ: Փրկիչն Արիստոս բարձր կոչմամբ զամենայն օր խնդրէ զմեղաւորս, «եկայք առ իս ամենայն աշխատացեալք և վաստակեալք և որք ունիք զբեռինս ծանունս և ես հանգուցանեմ զձեզ...: Իսկ դա զնորին հակառակն աղաղակէ, թէ՛ Յո՞ դաս, չկամիմ չիշխեմ տեսանեմ»: 1)

Մանաւանդ հրաշանայ Ղազարեան գրիչն ՚ի ձաղկիչն

1) Թուղթ. յէջս 597—600:

յանինայ զչարախօս արեղայից զչարաթոյնն նախանձ առ
կորովաբանն ասողն և ՚ի նկարագրելն զորս ՚ի միջի Յու-
նաց են սէր և քաջալիրութիւնն առ քարոզիչն՝ իբրև գեղե-
ցիկ իմն հակապատկեր նոցունց:

«Արդ անէ՛ ասացին, յաղագս նոր շնորհեալ պարզեկի
վարդապետութեան բանս, ասէ՛ Ասղար.—ասողն՝ն. ոչ ապա-
քէն վասն ունկնդրացն ախորժս լրութեան և խնդրուածոյ:
Նայեցարուք ընդ ժողովուրդն Յունաց, յորժամ քարոզն լու-
եալ աղաղակէ, և որ կամին ասել՝ ՚ի կարգեալ տեղին մատ-
չի, ամենեցունց զարթուցեալ զսիրտս առ Աստուած վերա-
ցուցանեն. տարածեալ ձեռօք խաչանմանք լինին. միաձայն
խնդրուածովք և արտասուալից դոչմամբ զՓրկիչն թախան-
ձեցուցանեն. » Տնւր՝ ասեն, բան. առաքեալ շնորհ. Նո՛ւ իսկ
ինքն գովաւ որպէս սրբովն Վաւղոսիւ խօսեա ընդ մեզ. նմա
ծանո զհաշտութիւն քո ընդ ծառայս քո: Մի նմանեացէ դա
յաղագս մերոց մեղաց՝ ստերջ ամբոց. այլ անձրեւահոս բրդ-
խմամբ յորդեացէ յանդաստանս հոգևոց մերոց, որովք ծաղ-
կեալք՝ պտուղք արժանիս հաճութեան կամաց քոց բերեալ
մասուսցուք: » Աւ արդ՝ նոր ուրուք ՚ի տգիտաց՝ թող թէ
սակաւ մի և ՚ի հեռուերոց բանի, ոչ զարթնուցուն միտք,
չվառիցի խոհարանն, չվերաբերիցէ ՚ի գանձնն Աուրբ Հո-
գւոյն զնոր և զհինան՝ զայսպիսի լսելով մաղթանա: — Իսկ
Հայոց արեղէնքս, ասէ՛ Ասղար քամահանօք, առ դառնա-
շունչ նախանձու, որ միացեալ է ՚ի սիրտս նոցա, զնոցունց
հակառակն երկնեն... աղօթս ինչ չառնեն ՚ի վերայ ասողին...
և նատին... գլխարկեալք, պատատեալք երեսօք, որպէս առ
հոտեալ գիական, պապանձեալք որպէս համր դև: Աւ եթէ
զթացեալ մարդասիրին՝ կամիցի տալ բան խրատու ի ժո-
ղովրդոցն փրկութիւն, հայեցեալ ՚ի դառն խորհրդոցն նոցա

որոճմունս՝ յինքն ամփոփեալ՝ արգելու զշնորհանս...: Այլ և եթէ յանկարծ շնորհի բան 'ի Մարգասիրէն՝ հեղձնուն 'ի նախանձուէ...»¹⁾

Արպէս նախերգանք Թղթոյն՝ նոյնպէս և վերջաբանն յօրինեալ է մեծաւ ճարտարութեամբ: Աբբու եղբակացութիւն համօրէն ասացելոցն՝ Ասողար յայանաբանէ առաջի Մարգասիրն զայն խմաստ խորհրդաւոր, եթէ արեղեանն Հայոց «ըստ անդիտութեան իւրեանց և ըստ անկարգ վարուց», մանաւանդ թէ «առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է 'ի սիրտս նոցա»՝ անդատին 'ի սկզբանէ հանապաղ հալածեալ է և դարձեալ հալածելոց է դարձանաւոր և պիտանի արս աշխարհին: Աթէ ինքն միայն լեալ էր զսկեալ 'ի նոցանէ՝ չէր ինչ այդ մանաւանդ զի թերևս՝ ըստ իւրումն ասացելոց «ես ահա ըստ արժանի որոց դործեցին՝ ընկալայ զպատուհանս, իսկ այլ առաքելանման մարդիկն, հարցանէ Ասողար, ընդէր այսպիսումն և և՛ս առաւել քան զայնս դիպեալք 'ի յաշխարհիս 'ի յայսմ, խստագոյն վշախ վախճանեցան»: Այսպէս դարձեալ արեղեանն էին Հայոց, որք թշնամանօք և անհանգիստ հալածանօք վախճանեցուցին զերանելի փիլիսոսփոսն Մովսէս (Խորենացի), զԽօսարովիկի, զՏէր, զԱբրահամ եպիսկոպոսն և զայլս բազումս: Բայ 'ի սոցունց՝ և՛ նոյն ինքն «Սուրբն Ներսէս», «Հայոց Մեծ Առևսաւորիչն՝ Տէր Սահակ», ոչ ապաքէն զատելութիւն և զանարդանս կրեցին 'ի դոցունց իսկ յերեսաց: ²⁾

Յաւալի իմն հետևողութիւն առնէ Ասողար՝ մի առ մի թուելով զանունս «առաքելանման մարդիկն», հալածելոց յարեղայից. «յաղագս որոյ երկնչեմ զարհուրեալ, ասէ նա, մի՛ գուցէ և 'ի դոսս յարիցեն աւետարանին սպառնալիքն, որ ասէ, ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաս-

1) Թուղթ. յէջս 600—603:

2) Թուղթ. յէջս 607—611:

տունս և դպիրս և 'ի նոցանէ սպանիցէք և խաչիցէք և տան-
ջիցէք 'ի ժողովուրդս ձեր... այն ասեմ ձեզ, զի խնդրեցից
(զարիւնն արդար) յազգէդ յայդմանէ: — Այլ մխիթարի-
ցիմք ¹⁾ 'ի տղիտաց, յաւելու Աւաղար դառն երգիծանօք,

1) Չքառէս զայսմանէ յերկրորդում տը-
պագրութեան Թղթոյն դնի ստորև ծանօ-
թութիւն ինչ 'ի հրատարակչաց (յէջ 612). —
«Թուի ասացեալ մի' մխիթարիցիմք,
կամ մի' թուիցի ումեք»: Այլ մեզ
թուի լուսարանութիւնդ այդ ընաւ աւե-
լորդս արարեալ քանզի այդու բանն ողջոյն
կորուսանէ զգորութիւն իւր թերևս և զի-
մասան: Նուրբ իմն է ասա երգիծումն, զոր
սովոր է Աւաղար արկանել 'ի կիր յոյժ դի-
պողապէս և զոր պարտ է մեծաւ զգուշու-
թեամբ որոշել 'ի պարզ գրութենէ: —
'Ի ճահգայ աստանօր զոյդ ընդ առաջադրե-
լոյն՝ դիտել և՛ զայլ այլ «պարզարանու-
թիւնս» կամ «ուղղագրութիւնս» արա-
րեալս յերկրորդում տպագրութեան Թղթ-
թոյն: Յէջ 63՝ ըստ առաջնոյ տպագրու-
թեան, է բան ինչ այսպիսի, (զոր կանուխ
ուրեմն բերաք 'ի մէջ ամբողջապէս). —...
«զորոյ (սիրոյ) եթէ գամ ճաշակել ուրուք»
առցէ զճամ անուշութեան կամի զմե-
ռանել քան թէ յայսմանէ վերայիլ»: —
Ըստ Աննետիկեան տպագր. (յէջ 607) 'ի
սոյն իսկ պարբերութեան՝ փոխանակ բա-
ռիս «զմեռանելը դնի «տեսանելը —
առանց իրիք լուսարանութեան, թերևս
գարձեալ 'ի սրբագրացն անիութութենէ
ճաղեալ: — Ե՛ այլ ևս ծանօթութիւն ինչ
(յէջ 588) զճատածէ խիբէ (ՎԵ անուա-
նէին բարեկամս ինձ եղբարսդ Սրբոյ զգին
դրուանին՝ զքո տեսան եղբորորդով: Եւ
ունէին երեքեանք...») — զոր «խառնակ
և սխալ անուանեն հրատարակիչք յորում
և բառս «զգին» առաջարկեն ընթեռ-
նուլ «զերեսին», իսկ՝ «եղբորորդով»

«եղբորորդիս»: Աստանօր ևս չիք պէտք
ինչ սխալանա ընթագրելոյ և զուր մթին
առնելոյ զընագիրն, որ և՛ առանց այդց ուղ-
ղագրութեանց չէ այնքան պայծառ: Մեք
այսպէս ըմբռնելք զմիտ բանից հատա-
ծոյս այսորիկ՝ առանց փոփոխութիւնս ինչ
առնելոյ 'ի բնագրին. «Եւ անուանէին
բարեկամս ինձ եղբարսդ (յճմ զեր-
կոսին եղբարս Աահանայ՝ զԱրդաշէս և
զԱարդ և ոչ զերեանն, որպէս առաջար-
կէ յերկրորդում գրագրութեան. Կանգի
երրորդ եղբայր Աահանայ՝ Բաջն Աա-
սակ որակաին յամի 482 անկեալ էր 'ի
պարտերազմն. Պարս. Աազ. յէջ 412.
ուսորի և շէր ճարի նճա յիշարակել 'ի
չարս կենդանեաց յառարանագր-
չութեան Աաղարայ, որ ըստանյնեաց
զպաշտօնս զայս յամի 486 — 7). Սրբոյ
(յճմ Բաջին Աասակայ, զոր և՛ 'ի Պարս-
նութեան անդ (յէջ 412) «սորբ» կոչէ
Աաղար). զգին դրուանին զքո տեսա-
ւըն եղբորորդով: (յճմ զորդի Աա-
սակայ՝ զՎրիգոր (պարս. յէջ 526), զոր
և թերևս «գին» կոչէ Աաղար «գրուա-
նին» — ս. նահապետիկն Աասակայ:)
Եւ ունէին երեքեանք...»: (յճմ զեր-
կոսին եղբարս Աահանայ (զԱրդաշէս և
զԱարդ) հանդերձ նորին եղբորորդ-
ով Վրիգորի, ուսորի և «երեքեանդ»
ասէ Աաղար: — Սորիմբ հանդերձ՝ ոչ է
մարթ ուրանալ զյաջող փոփոխութիւնս
ինչ արարեալս 'ի Թղթին 'ի Աննետիկեան
հրատարակչաց, որ 'ի նոր իմն հային դասա-
որութիւն հատածոց բանի, որպէս պատ-
շաճ և ստոյգ երևի: Բանզի է՛ի միջին

առ ժողովուրդն միայն շրէից կարծեցեալ զբանից ասացումն»:

Օկնի ամենեցուն՝ իբրև վախճան և պսակ իւրոց ցուցութեանց, Ասղար ակնարկէ ՚ի վարս նորին իսկ Մարգարանին. «զի քոյում իսկ ամենապքանչ անձինդ, ասէ, յորմանէ ամենայն մարդ ՚ի Հայս յաւազ և ՚ի կրտսեր՝ հասեալ է մեծապէս օգտակարութիւն և դահ և փառք, իսկ ոմանց և ՚ի մահուանէ ՚ի կեանս և ՚ի կորստենէ դտանել և ՚ի միջի լինել, դու Տէր, եղեալ ես պատճառ... շատք էին որ առ նախանձու Հատուցանէին զբարի՝ փոխարէնս քո տեսուն բարւոյ, այլ զնոցուն հակառակսն»: Արձեալ «խանութութիւն» է, որ յուզէ գրգռէ ՚ի չարութիւնս. դարձեալ «առ նախանձու» լինին ամենայն անիրաւութիւնք:

«Իսկ, խորհրդով իմն կնքէ, Ասղար զԹուղթ իւր, վերին արդարատես ակնարկումն զհայէ ՚ի չար կամացն խնդիրս, այլ իւր խնամակալութեանն յաջողութեամբ՝ կատարէ հանապազ անփոփոխութեամբ ՚ի բարիս...»¹⁾

Թերևս զԹուղթոյն Ասղարայ առաւել քան եթէ պէտք էին՝ գրեցաք: Երդարև՝ ՚ի մերում ևս նախադժին զայնչափ զտեղի չէր մեր այնմիկ որոշեալ, որչափ զարդիս է տեսանել: Բայց՝ ճշմարիտն խոստովանելով, որքան ստէպ զայն ընթեռնուաք, այնքան առաւել ընտիր բանս և մտադրութեան արժանի հատածս նշմարէաք յայնմ: Մանաւանդ զի այս երկասիրութիւն Ասղարայ, իբրև գրական դործ՝ անհամեմատ առաւելութեամբք զերակայ է քան զնորայն Աստուծութիւնս. ուստի մերձաւոր իմն ընդելութիւն Թուղթոյն անհրաժեշտ իմն էր վասն կատարելապէս խելամուտ լինելոյ Փարպեցւոյ մատենադրական ճաշակին և ընթացից, լեզւոյն և ոճոյն:

տեղիս խառնակեալ և անյարիր մնայր գաղափարեալս է:—(Տես յ Ա զ դ վերջին Թուղթն՝ ՚ի սակս սխալակ յետ և յառաջ Աննեակեան տպագ. Ղազ. Փարպ.)
կազմութեան թերթից մատենին, յորմէ ¹⁾ Թուղթ. յէջ 611—613:

Ն վեր անդր՝ ՚ի ճառերն զվարուց Ղազարայ խոստացաք ՚ի քնին արկանել ստորև զինդիրսդ. եթէ՛ քանի՞ ամս տևեր հոգաբարձութիւն Ղազարայ ՚ի Աթուղիկէ վանս և ո՞վ ոք էր քահանայապետ ժամանակին, որ այնպէս անիրաւարար վարեցաւ ընդ նմա: Կնդիրքս այսոքիկ մերձաւոր իմն ունելով վերաբերութիւն առ ժամանակն յորում գրեալ է Թուղթն, պահեցան աստանօր վանս չմիջահատելոյ զընթացս բանից՝ որ զվարուց Ղազարայ:—Տեսցուք ուրեմն, ե՞րբ գրեցաւ Թուղթն:

Ղստ վաղադոյն ասացելոց՝ «զինի նուաճման Ասհանայ»՝ որպէս ինքն Ղազար ասէ, ¹⁾ այն իսկ է՝ ՚ի վախճան 484 ամի, զնայ նա ՚ի Միւնիս, ուր «ամս երկուս» մնացեալ՝ այսինքն է՝ մինչև ցվախճան ամին 486, դարձ առնէ ըստ հրաւիրանաց Ասհանայ յաշխարհն Նյրարատ և ըստանձնէ զհոգաբարձութիւն Աթուղիկէ վանուց յամի 486—487: Միտ երեալ բանից բանասիրաց ոմանց, ²⁾ որք մերժողն Ղազարայ «զլիաւորն Հայոց քահանայութեան» զՅոհան Մանդակունի համարին լինել, — ապա պարտ է հետևեցուցանել, թէ հեռանալն Փարպեցւոյ ՚ի վանուց, որպէս և գրին զԹուղթ եղև ՚ի սկզբան 487 ամի, այսինքն է՝ նախ քան զմահն Յոհանայ Մանդակունւոյ, որ վախճանեցաւ ՚ի նմին իսկ 487 ամի: Ապա ուրեմն և հոգաբարձութիւն Ղազարայ ըստ այսմ վկայութեան ոչ կարէր տևել առաւել քան զամիսս ինչ քանդի, որպէս ասացաք, Ղազար կարգեցաւ հոգաբարձ կամ ՚ի վերջ 486 կամ ՚ի սկզբան 487 ամի:— Եայց չէ մարթ այդմ լինել և ոչ բնաւ իսկ, նախ՝ զի հոգաբարձութիւն Ղազարայ ոչ եթէ ամիսս ինչ, այլ քանի մի ամս տևեաց. երկրորդ՝ չէր Յոհան Մանդակունի քահանայա-

1) Թուղթ. յէջ 570:

Ա. յէջ 284) յորմէ առեալ է և հանգուցեալ

2) Պատմ. Հայեր. Իսր. Հ. Իսր. Զ. (Հատ Լանգլուս (Collect. Langlois, T. II, p. 256):

պեան այն, զորոյ զգատապարտելի ընթացս զնւր ուրեմն
ընծայեն նմա. և երրորդ՝ Թուղթն գրեալ է ոչ եթէ 'ի 487,
այլ գոնեա զկնի 488 ամի:

«) — Օ ի հոգարարձութիւն Ասղարայ տեւր աւելի
քան զմի ամ, տեսանի այս 'ի բազում վկայութեանց նորին
խակ Թղթոյն: Օրինակ իմն՝ արեղայից ոմանց, ոչ կարացեալ
ուրանալ զԱսղարայ զգարմանալի կորովարանութիւնն՝ ա-
սէին առ նախանձու, «արդարև՝ յառաջնում քաջհամեզս
ասէր և զօրաւորս, բայց ապա յարդի ժամս բնաւ վատ
ասէր».— ուր բանքս «յառաջնում» և «ապա» զբաւական տեո-
ղութիւն ժամանակի ցուցանեն: Եւ այ յայսմանէ՝ ինքնին Աս-
ղար յիշելով զարարաց իւրոյ և զարոց, զորս պարզեալ էին
նմա սեպուհք ոմանք 'ի Մամիկոնէից և 'ի Նամնարականաց,
—ասէ, «այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ 'ի Տեանն Աեր-
սեհէ և Հրատայ 'ի պէտս գարմանոյ... յայսնի է... ամե-
նայն իւրաքանչիւր ուրուք տուրն որոշողութեամբ մնաց 'ի
տեղւոջն ('ի վանս) զրով»¹⁾: Եստանօր ևս բանս «ըստ տար-
ւոյ» զժամանակի ցուցանէ տեողութիւն և անշուշտ՝ ոչ զքա-
նի մի ամսոց: Եւ վերջէ՝ ուշ եղեալ զարձեալ բանից Ասղա-
րայ՝ թէ «բոլոր կահն կեկեցեցոյն (որոյ հոգարարձ էր ինքն),
միանգամ և երկիցս ջարդեցաւ յանհաստատութենէ շե-
նուածոյն» և երրորդ անգամ և՛ ս զեղեցիադոյն կառուցաւ,²⁾
—ապա բացայայտ է, զի իրչափ և անպէտք ոմանք էին ար-
հատաւորք շնութեանն և փակալ՝ ատաղձն,— ոչ կարէր
«բոլոր կահն միանգամ և երկիցս ջարդել» յընթացս քանի մի
ամսոց՝ անգամ և ամի միոյ, և 'ի նոյն ժամայն զարմանալի
իմն վերատին 'ի շէն նորոզիլ:

Յասացելոցս տեսանի հաւաստեալ, եթէ հոգարարձու-
թիւն Ասղարայ 'ի Նաթուղիկէ վանս տեւր առաւել

1) Թուղթ. յէջ 591—592:

2) Թուղթ. յէջ 591:

քան զմի ամ առ նուազն, այսինքն է, թէ նա կարէր թողուլ զվանա ոչ կանխադոյն քան զամն 488:

Բ) — Ի նախընթաց հատածէն ևս ակներև է, զի ակնարկեալն 'ի Ազգարայ քահանայապետ չէր Յոհան Մանդակունի: Բայ յայամանէ՝ 'ի Թղթին անդ (որպէս և 'ի Պատմութեան իւրում) յիշելով զամանէ, Ազգար հանապաղ «երանելի Յոհան»¹⁾ կոչէ զնա, այսինքն է, թէ 'ի ժամանակին՝ յորում զրեցաւ Թուղթն, Մանդակունի վախճանեալ էր արդէն, իսկ «զլիաւորդ Հայոց քահանայութեան» այլ ոմն էր անձն, զորոյ զանուն՝ եթէ յերկիւղէ և եթէ յատելութենէ՝ չըտայ Ազգար: Յետ այնորիկ՝ 'ի բազում ակնարկութեանց ևս Ազգարայ Պատմութեան պարզապէս երևի, զի չէ Յոհան այն «հիւանդտեալ հոգւոց», զոր այնպէս խտաադոյն իմն կըշտամբէր Փարպեցի 'ի Թղթին իւրում: Այսին զի դժուարաւ իմն՝ զինի այնչափ անիրաւութեանց, (եթէ այդոքիկ լեալ էին 'ի Յոհանայ), զայնա ցուցանէր Ազգար առ նա ակնածութիւն և զպատկասանա, զորս 'ի Պատմութեան անդ է՝ տեսանել ոչ սակաւ²⁾: — Մով ոք էր ուրեմն յաակապէս քահանայապետն այն, Բարդէ՞ն արդեօք՝ յաջորդն Մանդակունւոյ (յամն 487—491), թէ Սամուէլ (յամն 490—502) և կամ թերևս Մուշէ (յամն 502—510), — այժմ իսկ ստուգեացուք:

Գ) — Ի միոջէ ակնարկութենէ Թղթոյն, որ սակայն յոյժ կարևոր նպաստ լինի յորոշելն զժամանակ զրեւոյ նորին, տեսանի, թէ ժամանակդ այդ խնդրելի է 'ի միջի 488 և 491 ամայ, յայամանէ հետևաբար մարթ է ուսանիլ և զանուէն

1) Թուղթ. յէջ 595:

390, 392, 547, 382, 398, 442), Պատուա

2) — Չսա ոչ այլապէս կոչէ Ազգար 'ի Պատմութեանն, բայց եթէ՝ Երանելի կաթուղիկոս (յէջ 383), Սուրբ Պատմութիկոս և սուրբ հայրապետ (յէջս

կան կաթուղիկոս (յէջ 397). և 'ի վերջէ՝ Սուրբ այրն Աստուծոյ Յոհան. (յէջ 539):

առաջագրեալ քահանայապետին, որպէս և հաւաստեալ իմն կարգել, եթէ քանի՛ ամս տւէր Ազգարայ հոգաբարձութիւնն:

Ազգ ծանուցեալ է առ հասարակ, զի աշխարհայոյց խրնդիք ժողովոյն Քաղկեդոնի (յամի: 451), զինի խոռովելոյ ամս բազումս զեկեղեցիս Յունաց և Հռովմայեցւոց, անցանեն և՛ ՚ի Հայս և աստանօր ևս ստիթ լինին կրօնական սպարդիւն վիճարանութեանց և երկպառակութեանց: Ամին իրի Մարգէն կաթուղիոսին՝ կամեցեալ բառնալ ՚ի միջոյ զայս խոռովութիւնս՝ յամին 491 — «սանէ ժողով կպիսկոպոսաց Հայոց, Արաց և Աղուանից ՚ի Նոր քաղաքի՝ ՚ի Ա. Աաթուղիկէ՝ ՚ի մայրն եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս (որպէս և Յոյնք) նզովեալ խոռացին զժողովն Քաղկեդոնի¹⁾...: Աւ այսպէս՝ յայտ՝ ժամանակի մի հաւատ բարեարշառութեան առ հասարակ հաստատեալ լինէր յաշխարհին Հռոմոց, Հայոց, Արաց և Աղուանից՝ հաւասար ամենեցունց նզովեալ ՚ի բաց ընկեցեալ զժողովն Քաղկեդոնի»²⁾:

Ժողովն Քաղկեդոնի՝ որպէս յայտ է, գումարեցաւ վանն հերքելոյ զվարդապետութիւնս Աւտիքեայ, որ և նզովեցաւ՝ իբրև հերետիկոս: Հայք ևս ընդ Ախրս և ընդ Աղուանս՝ նախ քան զժողովն Ազգարշապատու՝ ըստ երևութին՝ նոյնպէս հերձուածող ճանաչէին զԱւտիքէս, բայց զինի ժողովոյդ այգորիկ, յորժամ «նզովեալ խոռացին» զՔաղկեդոնի ժողովն, — հետևաբար ծանեան զԱւտիքէս ոչ իբրև հերձուածող: Մինչդեռ Ազգար ՚ի յիշելն իւր ՚ի Թղթին զանուանս հերետիկոսաց ոմանց, «զորս Սուրբ Աաթուղիկէ և առաքելանման եկեղեցւոյ նզովեալ և արտաքս ընկեցեալ է... որ և «յայտնի են ամենայն ուղղափառ ժողովուր-

1) Պատմութիւն Յովհաննու Աաթու. (ի Մոսկուա):
ղիկոսի յէջ 36—37. հրատ. Մ. Էմին 1853 2) Թուղթ. յէջ 584:

դոց»— 1) ընդ Արիոսի, Ապողինարի և 'Սեստորի' դնէ և
զնոյն զայն Նւտիքէս: Ուստի բացայայտ է, զի 'Վաղար, որ
թերևս ներկայ լեալ էր ժողովոյն Վաղարշապատու, կարէր
բացարձակ դասել զՆւտիքէս 'ի շարս հերետիկոսաց գոնեա
նախ քան զժողովոյ այդ, յորժամ տակաւին չէր նշովեալ 'ի
Հայոց ժողովն Վաղկեդոնի' այնէ—նախ քան զամն 491:
Վանզի անհնար իմն է միանգամայն ընթաղրել, զի զինի
այսպիսի աշխարհասուամբ ժողովոյ (Վաղարշապատու)' հա-
մարձակէր 'Վաղար ընդ ոտն հարկանել սուրբ վճիռս նորին
և բացէ 'ի բաց քաղկեդոնիդ ճանաչել զինքն և այն' 'ի
Թողթին իւրում, որ առ Մարդպանն Հայոց:

Ըստուսա 'ի յայտ դայ, եթէ Թուղթն դրեալ է ըստ յա-
ռաջադրելոցն՝ ոչ կանխագոյն քան զամն 488, և, որպէս
նոր ուրեմն տեսաք, ոչ անագան քան զամն 491,—այլ 'ի
միջի երկոցունց այսց ամաց:

Ըրդ՝ 488 և 491 են խնդրեալքն 'ի մէջ թուականք, յո-
րոց տեսանի՝ թէ հոգաբարձութիւն Վաղարայ 'ի Աաթու-
ղիկէ վանա անտարակոյս տեւր ամն 2—3 և թէ ակնարկեալն
'ի նմանէ «զլիաւորդ Հայոց քահանայութեան» ոչ եթէ Յո-
հան Մանդակունի, այլ նորին յաջորդ՝ Վաբգէն էր, որ վա-
րեաց զկաթողիկոսութիւն 'ի 487 ամէ ց' 491:

1) Թուղթ. յէջ 584:

Պ Լ Ո Ւ Խ Պ.

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՓԱՐՊԵՑԻՈՑ:

Բ. — ԵՐՐՈՐԴ ՊԱՏԽՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ:

Բնագիր Պատճառ-Նեան Ղազարայ: — Սահա-աՆի- գուն գրչագիր քրիստոնեայ Պատճառ-
Նեան և պատճառաւ նորին: — Աղճատճառ-նո՛ւ՝ ճո՛ւժեալք 'ի Բնագիրն: — Աղբիւրք
Պատճառ-Նեան. — Բայց յԱգաթանգեղեայ, 'ի Փա-սարաբ և 'ի Կորին վարդապե-
տի, որոց անուանք յիշին 'ի Տարեկնին, քաջ ծանօթ էին Ղազարայ և՛ գործք Խորե-
նայոց, ինչ և զնճանի զք + ինչ յիշարակեալ 'ի Պատճառ-Նեան: — Տուցճառն: —
Տարբեր իմն ա-անդառ-Նի-նո՛ւ զգի-տի նշանագրաց Հայոց և զՆարգճանու-Նեանի Գրոց
Սրբոց առ Ղազարայ 'ի Տիոջէ կողմանի և առ Կորեան և Խորենայոց 'ի Տի-
ոջէ: — Մեկնա-Նի-նո՛ւ:

ԵԱՄԱՆԵՑԱՔ ահա՛ յերկրորդ և յրեւարձակ դործ Ղա-
զարայ Փարպեցւոյ, յորոց 'ի վերայ տիրապէս Հիմնին փառք
պատմադրիս: Գնորին «Նրբորդ Պատմութիւն Հայոց» կո-
չեցեալ երկասիրութենէ է բանա, զոր զրեաց նա ըստ Հրամա-
նի Ղազանայ Մամիկոնենոյ՝ սկիզբն առնելով, որպէս Մե-
կենասի իւրոց էին կամք, 'ի կարդէ զրոց Փաւստոսի Բու-
ղանդացւոյ, այն է՝ 'ի բաժանմանէ Հայոց «յերկու թագա-
ւորութիւնս» (յամի 378) «մինչև ցոր մարդպանութեան
Հայոց Ղազանայ» (յամի 484): Աւստի համօրէն մատեանն
Ղազարայ բովանդակեալ ունի յինքեան զպատմութիւն ա-
մաց իբրև 103—զայնպիսի ինչ ժամանակաց, որ հո՛ծ և խիտ
են քաղաքական և եկեղեցական իրօք: Բայց սակայն ո՛չ մէն մի

ի սոցուեց հաւասարապէս աւանդին ըստ չափու պարունակութեան: Մինչև ցվախճան Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ քաղաքական անցք պատմեալ տեսանին համառօտիւ՝ առ ՚ի պահելոյ զկարգ պատմութեան. իսկ բուն դործ Ղազարայ՝ Ղարղանանց և Ղահանանց են պատերազմուեք, զորս նկարագրէ մանրապատում:

Ու Ղազարայ պատմական դործ «Արրորդ Պատմութիւն Հայոց» անուանեցաք. և է՞ր վասն «Արրորդ» և ո՞չք էին երկու նախընթաց պատմագիրք:—Սկիզբն առնէ Ղազար իւրոյ Պատմութեան համառօտ իմն ծանօթութեամբք ՚ի վերայ «առաջնոցն պատմագրայ Հայոց», յորոց առաջին՝ ըստ նորին որոշելոյ, Ազատեանդեղոս է «ստուգաբան» և «յարմարագիր», երկրորդն՝ «ի կարգէ առաջին զրոց (Ազատեանդեղոս) պատմեալ Փոստոս ոմն Բուզանդացի», և ինքն Ղազար՝ երրորդ պատմագիր իրրև շարայարող Փոստոսի. — «Արրորդ Պատմութիւն, առէ Ղազար, ՚ի կարգէ նորին զրոց (Փոստոսի) շարագրեալ տկարամտութեանս մերում»¹⁾:— Բայց զինի Փաւստոսի մինչ ցՓարպեցի միթէ չեղնն այլ պատմագիրք Հայոց, ապա Խորենացի՞, ապա Աղիշէ՞: Ղազար ՚ի Պատմութեան իւրում ո՞չ ինչ յիշէ զանուանց և ըզվաստակոց նոցին: Աւասի հ.հ. Չամչեան²⁾, Կեճիճեան³⁾ և այլք այնպէս մեկնեին զընթիւն Ղազարայ, եթէ չէր նորա տեսեալ զԽորենացւոյ և զԱղիշեայ Պատմութիւնան, ըստ որում արդարև իրաւամբ կարէր նա «Արրորդ» կոչել զինքն պատմագիր: Սակայն կարծիքս այս չէ հիմնաւոր. Ղազար՝ որպէս ընդ հուպ ստուգեացուք, ո՞չ միայն ծանօթ էր երկասիրութեանց ծերունւոյն Խորնոյ և կպիսկոպոսին Ամատունեաց, այլ և ՚ի յօրինելն զգիր իւր՝ հանապաղ առձեռնպատրաստ

1) Պատմ. Ղազ. յէջ 2:

2) Պատմ. Հայոց Բ. 456—458:

3) Հնախօսութիւն Հայաստանեայց,

Գ. յէջ 76:

ունէր զայնս և բովանդակ հատածս քաղէր 'ի նոցունց յա-
ճախակի: Թուի իմն այնպէս, թէ քաջաբանս մեր պատմա-
գիր անտեսէ զնոսս յաւետ խորհրդով, քան անգիտաբար:
Եւ այց զայսմանէ ասասցուք 'ի ստորև զկնի հետաքննելոյ
զաղբիւրս «Երրորդ Պատմութեան Հայոց»:

Եսիս քան զձեռնարկելն մեր 'ի քնին արկանել զՊատմա-
կան գործ Փարպեցւոյ ըստ ներքին պարունակութեան՝ ան-
հրաժեշտ իմն համարիմք խմատասիրել զնոյն իսկ բնագիրն
քննելի Պատմութեան. եթէ զհարց կամ յորպիսի վիճակի
հասեալ իցէ առ մեզ. զինչ ինչ ակներև և գուշակաւոր
իցեն յայնմ աղճատունք. զինչ յապաւմունք և զինչ
յաւելուածք՝ եթէ զիտմամբ իմն և եթէ անգիտաբար
'ի ներքս խառնեալք: Եյսպիսի կանխածանօթ զիտելիք թե-
րևս ոչ սակաւ լիցին նպաստ առ 'ի լուսաբանել զքանի մի
շփոթութիւնս յոճ Պատմութեան Ղազարայ և մանաւանդ՝
նորին տարածայնութիւնս ինչ և կամ՝ ըստ երևութին՝ օտար
իմն տեղեկութիւնս յայլոց ոմանց մատենագրաց: Եյսու նմա-
նապէս զգուշասցին և բանադատք կանխիկս առնել եզրակա-
ցութիւնս, որ ըստ կշռելոյ ական և եթ թուիցին անժխտելի:

Չէ անյայտ ինչ բանասիրաց, զի յամենեցունց մատենա-
գրաց մերոց, ծաղկելոց 'ի Ա. և 'ի Ա. դարս, Ղազար է մի-
այն, որոյ վաստակոց զըջաղիր օրինակք սակաւաթիւ են կա-
րի յոյժ¹⁾: Մինչ քառասնեակ և յիսնակ հասեալ են առ մեզ

1) — Ծանօթ է բազմաց, զի բազմաշխատն
հ. Միք. Չամչեան միայն զկնի երկար իմն
աշխատութեանց գտանէր զմի և եթ զըր-
չագիր օրինակ Ղազարայ Պատմութեան,
որ և ապա ուրեմն՝ յամի 1793 արձանա-
ցուցաւ 'ի տիպ 'ի Վենետիկ Չանիւր Մի-
թարեան միարանից: Ի դմն իսկ օրինակէ
երկրորդ եղև տպագրութիւն յամին 1873
դարձեալ 'ի Վենետիկ՝ առանց իրիք փոփո-
խութեան. քանզի՝ որպէս ասի յառաջա-

բանի այդր տպագրութեան, ոչ միոյ յետ
այնորիկ (զկնի 1793 ամի) հանդիպեալ . . .
նորոյ օրինակի Պատմութեանս . . . — Եր-
կրորդ գրչագիր օրինակ Ղազարայ Պատ-
մութեան գտանի 'ի գրատան Ս. Եջմիածնի՝
գրեալ 'ի թուականին Հայոց ՌՄԻԳ (1774):
— Սակայն երկրորդն սորա՝ որպէս տեսանի
'ի բազդատութենէ, գաղափարեալ են 'ի
միոջէ բնագրէ, որ՝ առ աղէտի՝ չերևի զար-
դիս 'ի միջի:

օրինակք գործոց՝ Ագաթանգեղեայ, Խորենացւոյ, Աղիշեայ, Աորեան, այն և՛ Ազնակայ, Վաւթի Փիլիսոփոսի, որպէս և ոչ սակաւ Ասորի և Յոյն խրթին և տաղտուկ թարգմանութեանց, — Ապղարայ Պատմութեան՝ ոչինչ նուազ գիտնաւորին և ակտրութականին, — երկուք և եթ ևն այժմ գրչադիրք և այն՝ ՚ի միոջէ բնադրէ դաղափարեալք: Իսկ Թղթոյն՝ ցարդ միակ և եթ է օրինակ բաղդին բերմամբ թափեալ ՚ի ժանեաց ամենաճախ ժամանակին:

Աորի սակաւաւոր լեալ բնադրին Ապղարայ Պատմութեան ըստ թուոյ գրչադիր օրինակայ՝ զեղուն է ՚ի հակառակէն բաղմադիմի եղծուածովք բանից — ակնելու իմն յապաւմամբք և յաւելուածովք հասածոց և անթիւ վրիպանօք՝ յանհմուտն գրչայ ՚ի ներքս սպրդելովք: Այսպիսի իմն և այնքան աղճատմանց ՚ի յաճախագոյն ընդօրինակելոյ բնադրին՝ ապաքէն և յարկանելոյ նորին ՚ի կիր — հարկ էր ծաղել անշուշտ: Սակայն ուր իցեն բաղմաթիւ օրինակքդ Պատմութեան, ընդէր յայժմուս մին և եթ դժուարաւ դտանիցի: Թուի մեզ, թէ գրչադիր օրինակք Ապղարայ Պատմութեան որպէս և Թղթոյն՝ ճարակ լեալ ևն, բայց ոչ այնքան հրոյ կամ հողմոյ, որքան մատանց արանց ոմանց բանորսակաց, մի՛ ծանրալուր իմն թուիցի ումէք, եթէ ասասցուք՝ մատանց աբեղէնից ոմանց փրապէս:

Ապղ ուրեմն տեսար, եթէ, որպէս անխնայ ձաղէր և ձաղկէր Ապղար ՚ի Թղթի իւրում զկրօնաւորացն «անդիտութիւն և զանկարդ վարս»: Յայտ իսկ է, եթէ որքան ծանր իմն ունէր երևիլ կծու ճշմարտութիւնս այս յաչս աբեղէնից Հայոց առ հասարակ: Աւստի չեք զարմանք, եթէ խստաարտաց ոմանց ՚ի նոցանէ՝ ըստ դիպող բանից Ապղարայ՝ «անյադութեամբ գինով ընդ մեռելոյն կազեար», ջանահար լինէին զհարդ և իցէ արմատաքի առնել ՚ի սպառ

զատելին այն Թուղթ, և յաճախագոյնս յաջողէին աներկբայ: Աչ ապաքէն նոցին իցէ ձեռաց ճարտարութիւն, զի մի և եթէ տակաւին 'ի միջն' նորին օրինակ և այն—եղծուածովք և մանաւանդ յապաւմամբ երկց կամ չորից թերթից, որոց նիւթ ըստ բանից նորին իսկ Պարպեցւոյ, թերևս «ահաւոր նպովք» լեալ էին Խորնոյ ծերունւոյն «'ի վերայ գլխաւորաց քահանայութեան»: 'Վ կռան այսպիսի իմն ատելի Թուղթոյն կցեալ կայր և այլ վաստակ նորին իսկ «ազանդաւոր» մատենագրի՝ Պատմութիւն նորա: Նոյն նման խէթ և ատելութիւն հասանէր և այսմ ուստի բնաջինջ առնելով զԹուղթն՝ ընդ նմին 'ի դէպ և՛ զՊատմութիւնն բառնային 'ի միջոյ: Նայց՝ թերևս 'ի պատճառս բազմադիմի արժանաւորութեանց գործոյն՝ ոչ պակասէին ընթերցողք նորին, և եթէ 'ի միոյ կողմանէ գուն գործի զասելւոյ առն զիր անհետ առնել, 'ի միւսմէ ջան և ճիւղն առնու 'ի մէջ օրինակել զպատմութիւնն ակորժական:— Սակայն թուի՝ թէ եռանդն աւերչաց անցանէր զանցանէր զշինողացն ջանիւք...:

Այսպէս են մերս կարծիք յազազս սակաւաթիւ լինելոյ գրչադիր օրինակաց «Նրբորդ Պատմութեան Հայոց»:

Ազգի ազգի աղճատմունք բնագրին Պատմութեանս, որ 'պէս ասացաք, 'ի յաճախակի ընդօրինակելոյ իցեն ծագեալ բայց և ինքնին բնագիրն գողջիւր նպաստ լինէր իւրք իւրք առ աճեցուցանել զաղճատմունաք: Ենդստին 'ի սկզբանէ՝ Պատմութիւն Ապղարայ գրեալ էր, եթէ մարթ իցէ ասել՝ սակաւ իմն անսխալութեամբ ըստ արտաքին կարգաւորութեան նիւթոց: Նրութիւնն ընդարձակ սխալի լայնաճաւալ՝ սկսեալ յառաջին էջից մինչ ցվախճան մատենին— առանց իրիք պատուարի, չէին յայնմ ցանկք առարկայից, չէր և տրոհումն յառանձին զիրս կամ հատաճս, և

մանաւանդ ոչ գոյին որոշեալ գլուխք կամ պրակք ¹⁾։ Հանգիւրձ սոքխմբք՝ ոճն պարզ էր և դիւրամատոյց։ Աւստի իւրաքանչիւր ոք, որ օրինակէր զայն, անարգել իմն կարէր փոփոխութիւնս ածել ՚ի ներքս և աղճատմունս ըստ քմաց իւրոց և ըստ նպատակի, և մուծեալ իսկ է ոչ սակաւ։

Եւ արդարև՝ Պատմութիւն Ազգարայ կրէ յինքեան նշմարս եւրակի աղճատմանց։ Խօսեսցուք զայսմ ամենայնէ ՚ի մասնաւորի ²⁾։

ա.) Եւ ուրեք, զի յանհմուտն գրչաց սպրդեալ են վրիպանք ազգի ազգի՝ յապաւմունք կամ կրկնութիւնք բանից և կամ տեղափոխութիւնք բովանդակ հասածոց։— Անդստին ՚ի Յառաջարանի իսկ Պատմութեան (յէջս 7—10) տեսանի տեղափոխութիւն հասածոց (ըստ նոր տպագ. Պ. և Վ.),— ակներև իմն շփոթութիւն գրչաց, որ Ազգարայ չէ մարթ ընծայել բնաւ։ Վարձեալ այսպիսի ակներև խառնակութիւն գտանի յէջս 298—299 ըստ հին տպագ. որ ՚ի նորումն (յէջս 524—5) դասաւորեալ է ըստ իմաստից բանին։ Յետ այնորիկ՝ երևին ուրեք ուրեք և՛ կրկնաբանութիւնք, օրինակ իմն՝ յէջ 352, յորում պատմի զգարձէ Վիւտայ կաթուղիկոսի ՚ի Հայս՝ բան մի ողջոյն ՚ի միում պարբերութեան կրկնի երկիցս։ Վապէս և՛ յէջն 62 (ըստ հին տպագ.

1) Թերևս ՚ի թիւս այլոց ոմանց պատճառաց՝ պարագայքդ այդորիկ ըստ բաւականի նպատակաւ են բազմադիմի յաւելուածոց, մուծելոց ՚ի բնագիրն Պատմութեան Ագաթանգեղեայ (հասածքդ Ա. Բ...ճԻԵ, որ տեսանին ՚ի Աենեակեան տըպագիր օրինակին, տրամատեալ են ՚ի հրատարակչաց)։ Սապէս պարտ է ասել մասամբ և՛ զՎորեան Պատմութենէ, և ընդ հակառակն՝ ոճն ամփոփ, կարգաւորութիւնն նիւթոց (ցանկ) և տրոհումն մատենին ըստ

գրոց և ըստ գլխոց զերծին զբնագիրն Պատմութեանց Փաւստոսի, Խորենացւոյ և Նդիշեայ՝ ՚ի զգալի իմն աղճատմանց և յաւելուածոց ընդօրինակողաց։ Իսկ որ ինչ զն զնակայ՝ երկ նորա գիտնաւոր գոլով և ուսողական, չէր մատչելի բազմաց, ուստի և սակաւ կրեալ աղարամունս։

2) Ոմանք ՚ի ստորակայ աղճատմանց և վրիպանացս նշանակեալ են ՚ի լուսանցս յերկրորդում տպագրութեան Պատմութեան Փարպեցւոյ։

'ի նորումն ուղղագրեալ է), 'ի վերջ Տեպեան Ա. Սահակայ պարբերութիւնք երկուք միօրինակ կրկնին ամբողջապէս՝ մի զմիւսոյ կնի անընդհատ:

Այլ է պարտ անտես առնել և բանս ինչ չեղեալս կամ պակասեալս յանփութութենէ դրչաց. որպէս՝ յէջ 462 ատենաբանութիւն Վահանայ Մամիկոնենոյ զգալի իմն աղաւաղեալ է, թերևս կրճատեալ կամ նուազեցուցեալ. այսպէս և 'ի բազում այլ տեղիս:—Յէջն 458՝ ըստ իմաստին Պատմութեան յատուկ անուն տեղոյ իրիք լինել պիտի. բայց պակասի անունոք: Իսկ յէջն 149 քննակալ Աշուշայ բղեշխի Վարդան Մամիկոնեան յուցանի—փոխանակ եղբօր նորին՝ Հմայեկայ. ակներև իմն է այս շփոթութիւն 'ի պակասելոյ երկուց բառից ծագեալ, որ այսու ամենայնիւ տարակուսանաց առիթ լեալ է ոմանց¹⁾:

Բ.) Ի ուրիք, զի ախորժեալ ընդօրինակողին զինչ ինչ մասունս Պատմութեան՝ յերկարէ զմաստունսդ և կամ յինքենէ երկրորդէ զնոյնս՝ նովին իսկ ոճով. դուն ուրիք նաև զամբողջ հատածս կամ յաւելուածս թուի նորա պատուաստեալ 'ի Պատմութիւնն՝ թերևս Փարպեցւոյ անուամբ համարելով զիւրն հռչակել գործ: Արպէս են. յաւելուած ինչ յէջն 441, զոր զըջի ուրումն հայրենասիրի է անշուշտ հիւսեալ 'ի կարգ բանից՝ չհանդուրժելով անտարբեր իմն հայել աչօք 'ի գլխովին պարտութիւն Հայոց 'ի ձևաց

1) Ահաւասիկ բնագիրն. ... և ունէր յէջս 323, 334, 335 և այլն), քաջ ծանօթ է (բղեաշին վրաց՝ Աշուշայ) կին յազգէն և՛ յայլոց մերոց մատենագրաց, զի Վարդան Արծրունեաց զքենի մեծի սեպհին Մամիկոնէից (Հմայեկայ՝ եղբօր) Վարդանայ, յորում ոչ եթէ սեպուհ կամ մեծ սեպուհ (որպէս յիշի աստանօր), այլ Տէր Մամիկոնէից ըսալ էր: Իսկ սեպուհն Մամիկոնէից և յատկաբար՝ մեծ սեպուհն—Հմայեակ էր՝ աւագագոյնն յայլ իշխանաց Մամիկոնէից ըզկնի Վարդանայ: (Տե՛ս և յառաջին գլուխն գրոյս՝ յէջ 8):

Պարսից: Սակայն յաւելուածդ մուծեալ է յոյժ յանդէպս՝ ուստի և ակնյայտնի ¹⁾:—Յետ այնորիկ կարևոր են կրկնակի պատմեալ հատածք ինչ: Պատմութիւն Ազգարայ սկսանի համառօտ իմն յայտարարութեամբ զերից առաջնոցն պատմագրաց Հայոց՝ զԱգաթանգեղեայ, զՓաւստոսէ և՝ զինքենէ հեղինակէն՝ իբրև զերրորդ պատմագրէ (յէջս 1—4): Ի այց ընդ հուպ նոյն և մի տեղեկութիւնք զերեցունց պատմագրաց աւանդին կրկնակի՝ միայն ճոխ բանիւք գոլով ընդարձակեալք (յէջս 4—11, 14—15): Չի՞նչ պէտք էին Ազգարայ կրկնակի ճառելոյ զնոյն և մի իրաց մի զինի միւսոյ: Թուի՞ առաջնոյ—այն է համառօտագոյն մասին լինել յայլոց ոմանց՝ ի ճոխագունէն յարմարեալ քաղուածաբար: Ի այց յայսմանէ՝ բանքդ զհիմնարկութենէ Նիւղանդիոյ, զԱռստանդիանոսի պատերազմէն և զգիւտէ Ս. Իսաչին, իբրև յանդէպս բերեալք՝ ի մէջ և օտարոտի իմն աւանդեալք՝ դարձեալ կասկածաւոր են յոյժ (յէջս 11—14):—Իսկ որ ինչ յաղագս Տեալեան Ս. Սահակայ (յէջս 79—102)՝ ասասցուք զայսմանէ՝ ի վերջ քննութեանս մանրամասնաբար: Այսքան և եթ կանխիմք յուշ առնել յայսմ վայրի, թէ մեծի հաւանութեան թուի և զհատածդ զայդ յայլոց ոմանց համարել պատուաստեալ ի կարդ Ազգարայ Պատմութեան:

Գ) Եւ ուրեք, զի նպատակաւ իմն հանին ի բաց անուանք արանց ոմանց, զորոց զարիւթենէ քաջութեան պատմեալ էր պատմագիրն, որպէս և նոյն իսկ հանդէսք քաջութեան նոցա բառնան ի միջոյ: Սապէս՝ ըստ երևութին, փոփո-

²⁾ Կարդ պատմութեան այս և. պարտեալ ընդ նախընթացն. անդ շարաչար իս. Հայոց ի Պարսից՝ դատնան ի փախուստ. ցոտին և փախ չին զօրքն Պարսից. — արկանին ընդ համարու անուանք նահատակաց Հայոց և յետ սցսորիկ հետ ընդ սից և փախուստն Հայոց: հետ՝ այսպիսի ինչ բան անկապ և անյարիր

խեալ կամ այլայլեալ թուին իմաստք և իրակութիւնք ամբողջ հատածոց: Օրինակ իմն. — յէջն 441 հատեալ են մանրամասնութիւնք քաջութեան առն ուրումն, որ 'ի պատերազմին ընդդէմ Պարսից «մանաւանդ առաւել էր, ասէ պատմագիրն, քան զայլն», որոյ և անուն հանեալ է 'ի միջոյ: Մանաւանդ բացայայտ տեսանի յէջն 412 պակասելն անուանց արանց՝ նահատակելոյ 'ի դաշտին Ճարմայանու և զոյգ ընդ սմին՝ յապաւումն դիպաց մահուան Սահակայ Ասպետի, թերևս և Վասակայ Մամիկոնեանոյ: 'Ի բնագրի անդ գրի. «բայց որք ընտրութեանն ցանկացողք եղին... և կատարեցան յաւուրն, և անուանքն են այսոքիկ»: Սակայն զկնի բանիս «այսոքիկ» ոչ երևին «անուանքն» և պատմութիւնն շարունակի նոր իմն պարբերութեամբ: — Եսկ ասպետն Սահակ, որ մարդպան էր 'ի ժամուն և որ անշուշտ ոչ յետին լինելոց էր յարիւնասհեղ ճակատուն, յանկարծուստ 'ի սրբոցն դասի շարս, մինչ ոչ է տեսանել բնաւ, եթէ զհարիւ եղև վախճան նորս: Եյսպիսի իմն յեղակարծ անհետանալն միոյ յականաւոր դիւցազանց պատերազմին, որ՝ հանդերձ սովաւ հակառակ ելանէ միանդամայն լիապատում ոճոյն Վազարայ, — մարթ իցէ մեկնել յապաւմամբ մանրամասնութեանց, որ 'ի վերջինն հայէին սխրագործութիւն «սքանչելի» Ասպետին:

'Ի վերջէ՝ մատնացոյց արասցուք զկասկածաւոր կամ զայլայլեալ լինելն հատածոց ոմանց զգիւտէ նշանադրաց և ըզթարգմանութենէ Արբաղան Տաւից: Չսոցունց պարտ էր մանրապատում իմն անցանել բանիւ՝ ըստ արժանի կարևորութեան իրացն, այլ յանդէպս համարելով աստանօր, թողումք յարմարագոյն տեղոյ ¹⁾:

¹⁾ Զայսմանէ տես 'ի ստորև 'ի վերջ գլխոյս:

Թուի մեզ, զի և յայսց համառօտ դիտողութեանց մարթիցէ 'ի միտ առնուլ, թէ քանի՛ աղճատմունս իցէ կրեալ բնագիրն Փարպեցւոյ Պատմութեան յերեսաց անփոյթ և համկարի փոյթ դրչաց:

Յետ այսորիկ բունն հարցուք ճառել զաղբերաց «Նրբորս Պատմութեան Հայոց»:

Անտարակոյս չէր հնար ինչ Վազարայ առանց աղբերաց օժանդակութեան յօրինել զՊատմութիւն այնչափ երկարատե ժամանակաց (103 ամաց): Այք էին ուրեմն աղբիւրքդ այդոքիկ:

Յերկու կարգս մարթ իցէ արտհել զաղբերս Վազարայ Պատմութեան:

Ա.—Աղբիւրք՝ յանուանէ յիշատակեալք 'ի Պատմութեան, թէև ոչ կարևորք:

Բ.—Աղբիւրք՝ ոչ յիշատակեալք 'ի պատմադրէն, թէև կարևորագոյնք:

Յառաջին կարգէ են.

ա) Ազատանդեղոս, յորոյ 'ի Պատմութենէ վասն Տեալեան Ա. Սահակայ ²⁾ առեալ են պարագայք և ինչ ինչ մանրամասնութիւնք Առևսաւորչի Տեալեան ³⁾, թէև Տեսիլն Ա. Սահակայ՝ որպէս յիշեցաք, կասկածաւոր իմն թուի դրութիւն և թերևս ոչ Փարպեցւոյ գործ: Բաց յայսմանէ՛ 'ի գիրս Վազարայ է այլ ևս հասած ամբողջապէս 'ի Առևսաւորչայ Տեալենէն փոխ առեալ ¹⁾ և այն՝ 'ի մասին Վարդանանց պատերազմի—'ի բողբոստելն Վազարայ զուխտապահ և զուխտազանց նախարարան ընդ միմեանս ¹⁾:—Ահաւասիկ, որ ինչ առեալ են յԱզատանդեղեայ:

1) Պատմ. Ղազ. յէջս 79—102:

3) Ազատանդեղ. յէջ 557:

2) Ազատանդեղ. յէջս 552—568 (տպագր.

4) Պատմ. Ղազ. յէջ 116:

'ի Վենետիկ. 1862:

բ) Փաւստոս Բուզանդացի՝ յորոյ 'ի Վարուժեանց զմի և եթ 'ի մէջ բերէ Վազար վկայութիւն: Այդ՝ անէծք են Ս.Ներսիսի 'ի վերայ Արշակայ Բ'ի՝ ընդ այսմ և՛ մարգարէական գուշակութիւն Հայրապետիս յաղագս բառնալոյ թագաւորութեան Հայոց յազգէն Արշակունեաց, զորմէ յընթացս Պատմութեան իւրոյ Վազար յիշէ քանիցս ¹⁾:

գ) Աորիւն, յորոյ երկասիրութենէ քաղէ պատմագիրս ինչ ինչ 'ի ճառելն զվարուց Մեծին Մեսրոպայ, զգիւտէ նշանագրաց և զմահուանէ Ս. Սահակայ ²⁾:

Արեքին մատենագիրքս այսոքիկ՝ եթէ ըստ նիւթոց և եթէ ըստ ժամանակին, զորմէ ճառենն, ոչ կարէին բազում ինչ տեղեկութիւնս մատակարարել Վազարայ:

Յերկրորդ կարգէ են.

Խորենացի և Նդիշէ, որք զլիաւորագոյն աղբիւրք են Վազարայ: Ի Խորենացւոյ առնու նա նիւթս վասն իւրոյ Պատմութեան՝ սկսեալ յաւարտմանէ Փաւստոսի Վարուժեանց ('ի 378 ամէ)՝ մինչ ցվախճան Արբոց Սահակայ և Մեսրոպայ (յամի 440)—ընդ բնաւն անցս 62 ամաց: Իսկ Նդիշէ միակ և եթ է աղբիւր նորին վասն Վարդանանց պատերազմին: Նրկոքեան աղբիւրքս այսոքիկ ըստ կարևորութեան իւրեանց՝ արժանի են խորին մտադրութեան, ուստի զնոցանէ որոյն ուրոյն պարտ իցէ կարգել բանս:

Բաց 'ի դրաւոր աղբերաց՝ էին անշուշտ և բազմաթիւ անգիր աղբիւրք, զմանրամասնութիւնսն Վահանանց պատերազմին ուստի՝, եթէ ոչ յսկանատես արանց քաղել կարէր Վազար: Ինքնին պատմագիրն յանուանէ յիշէ միայն զԱրշաւիր Վամնարական ³⁾, որ աւանդեալ էր նմա զհանդամանս նահատակութեան Արբոց Վեռնդեանց:—Յանգիր աղբիւրսն

1) Պատմ. Ղազ. յէջս 62, 69, 70:

3) Պատմ. Ղազ. յէջ 316:

2) Պատմ. Ղազ. յէջս 35, 103, 205:

տակաւին դարձցուք. մատիցուք այժմ առ Խորենացի և
Նղիշէ:

* * *

Ղազար և Խորենացի: — Ըստ առաջագոյն ասացելոց՝
ցուցցուք նախապէս, թէ էր արդարև Ղազարայ 'ի ձեռին
Պատմութիւն Խորենացւոյ, և ապա՝ 'ի մէջ բերցուք զոր
ինչ յաղագս սյսորիկ կարևոր իցին դիտողութիւնք:
Ըհաւասիկ են մերս ցուցմունք.

'Ի ճառելն զորդւոյն Յազկերտի Ա՛ոյ՝ զՇապհոյ, որ ըզ-
կնի Խոսրովու Վ՛ի թագաւոր կարգեցաւ Հայոց, — Ղա-
զար առնու 'ի Խորենացւոյ զհատած ինչ ամբողջ և թէպէտ
զնորին իմաստն սփռեալ տարածանէ 'ի բովանդակ էջս, սա-
կայն և այնպէս բազում են բանք և դարձուածք Խորենաց-
ւոյ, որ անսփոփս սպրդեալ են 'ի կարգ Ղազարայ Պատ-
մութեան:

Ղազ. (յէջ 51) ասէ. «...և սո-
վորութիւն առնուն (նախարարք)
յօրէնս մեր (Պարսից) հանապազ
յանկէն խօսիւք ընդ միմեանս և
ընդելական բարեկամութեամբ 'ի
զբօսմունս որսոց... այլ և ամուս-
նութեանց տուրևառիւք հաղոր-
դեալք...: Չգիտէր զբան Ս. Հոգ-
ւոյն, որ ասէր. թէ Տէր ճանաչէ
զխորհուրդս մարդկան. . . »:

Ղազ. (յէջ 51—52) ասէ. «... 'ի
նմին աւուր և զորդի նորին (Յազ-
կերտի) զՀապուհ անդրէն 'ի
Գրանն մարդկանէ դաւով յար-
բունիքն սատակեցին »:

Խոր. (Գ. 55) ասէ. «... հանա-
պազ առ նմա (առ Հապուհ) նա-
խարարքն յանկէիցին խօսիւք, տու-
րևառիւք, խրախճանութեամբ և
զբօսանօք որսոց. այլ և եկամուտ
հարազատութեամբ մերձաւորես-
ցին խնամութեամբ...: Ոչ գիտե-
լով անմիտն՝ թէ Տէր ցրուէ ըզ-
խորհուրդ հեթանոսաց. . . »:

Խոր. (Գ. 56) ասէ. «... 'ի նմին
աւուր և նա (Հապուհ) անդէն 'ի
Գրանէ մարդկան նենգեալ սա-
տակեցաւ »:

Օ մերժելն Ս. Սահակայ զնախարարացն խնդիր, որ գուն զործէին ածել 'ի հաւանութիւն զՄեծ հայրապետն առ 'ի ամբաստանել զԱրտաշէ առաջի արքային Պարսից, — Խորենացի յիշէ զամ մի. իսկ Ապղար ըստ սովորութեան ճոխագոյնս պատմէ զգէպոս՝ երկիցս խնդրել տալով նախարարաց զՍահակ և բազում բանս ուղղակի 'ի Խորենացւոյ առնելով: Թէպէտ արդարև չէ մարթ ուրանալ, զի յոյժ հոգելից իմն խօսի աստ 'Ապղար՝ շրթամբք Սահակայ «զգորաւոր ասողն» յիշեցուցանելով:

Ղաղ. (յէջ 58—60) ասէ. «... և ինչ անօրինաց մատնելով 'ի ծաղր և յայպանումն՝ տալ զսուրբ խորհուրդ...: Զի թէպէտև մեղաւոր է, այլ դրոշմեալ է սուրբ աւաղանին ծննդեամբ...: Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի...:

Խոր. (Գ. 63) ասէ. «... և ինչ անօրինաց մատնել 'ի ծաղր և այպանումն: Քանզի դրոշմեալ է (Արտաշիր) աւաղանաւն, թէպէտև անառակ է...»: — Զի թէ էր թագաւորի առաջի...»:

Ղաղ. (յէջ 61) ասէ. «... Պոռնիկ, այլ զկնիք Քրիստոսի հօտին կրէ յանձին իւրում. գիճացեալ է մարմնով, այլ ինչ անհաւատ և հեթանոս. զեղիս, այլ ինչ կրակապաշտ. տկարացեալ 'ի կանայս, այլ ինչ ծառայէ տարերց... »:

Խոր. (անդ) ասէ. «... Պոռնիկ է, այլ քրիստոնեայ. գիճացեալ է մարմնով, այլ ինչ անհաւատ հոգւով. զեղիս է վարուք, այլ ինչ կրակապաշտ, տկար է 'ի կանայս, այլ ինչ ծառայէ տարերց... »:

Են և այլօրինակ փոխարինութիւնք 'ի Խորենացւոյ. առեալ Ապղարայ զխմաստն բանից 'ի համառօտ ինչ ակնարկութենէ նորին, ծաւալէ զայն ճապարհ բանիւք, սակայն նոր ինչ ոչ յաւելլով իրս: Յայսպիսի գէպս յոյժ ակներև նկատելի լինի ճապարհութիւն Փարպեցւոյ ոճոյն 'ի միոջէ կողմանէ և ազգու համառօտաբանութիւն Խորենացւոյ՝ 'ի միւսմէն: Օրինակ իմն.

Ղազ. (յէջ 62) ասէ. «...փոխանակ զի ոչ լուար բանից մերոց (ասին նախարարք առ Ս. Սահակ) և ՚ի միաբանութենէ մերմէ զանձնքո ՚ի բաց մերժեցեր, գիտասջիր, զի որպէս եղեալ է ՚ի մտի զթագաւորել սմա (Արտաշրի) և այլ ևս ՚ի վերայ խոստանամք չքահանայանալ և՛ ոչ քեզ առ յերկարս ՚ի վերայ աշխարհիս մերում... » :

Խոր. (Գ. 63) ասէ. «...վասն զի ոչ համակամեցար մեզ զթագաւորել նմա, արդ և մեք կամեսցուք և՛ քեզ (Սահակ) չքահանայանալ մեզ » :

Աչինչ անհնարին իցէ մեզ և զայլ բազմաթիւ օրինակս բերել յառաջ¹⁾. բայց ՚ի վերոյ զրեալքն ևս՝ թուի մեզ՝ անհերքելի իմն եղանակաւ հաստատեն զկարծիս մեր վասն ծանօթ լինելոյ Ղազարայ Խորենացոյ Պատմութեան:

Քկնի այսորիկ պարս է ՚ի քնին առնուլ, թէ զկորդ աւանդէ պատմադիրս զորս ՚ի Խորենացոյ է առեալ գէպս. համառօտ, եթէ մանրապատում, և կամ շիցե՞ն այլ ինչ տարբերութիւնք ՚ի միջի երկոցունց:

Ըստ վաղադոյն ասացելոց՝ սկիզբն առնէ Ղազար իւրոյ Պատմութեան ՚ի բաժանմանէ Հայոց «յերկուս թագաւորութիւնս» և յատկապէս յայնմանէ, յորժամ Արշակայ Պ ՚ի թողեալ «զբարի և զլնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Այրարատում» ՚ի վիճակէ բաժնոյ անօրինաց գնայր ՚ի Յունաց բաժինն:

Յոյժ վիպասանարար և մանրապատում իմն աւանդէ Ղազար զհեռանայն Արշակայ Այրարատ աշխարհէ՝ նիւթ առեալ ինքեան միայն զերկուս և եթ տողս Խորենացոյ²⁾

1) Բազդատեն և զառաջիկայսդ.

Խոր. Գ. 62. Ղազ. յէջս 29—30:

» Գ. 64. » » 66:

Խոր. Գ. 64. Ղազ. յէջ 67:

» անդ » » 72:

2) «...Լաւ համարեալ նուազ կողմանն և ոչ յողովից իշխել և մտանել ընդ լծով տիրել և ծառայել քրիստոնեայ թագաւորի, հեթանոսաց » : (Պատմ. Գ. 42)

և 'ի քանի մի էջս տարածելով զայնս¹⁾: 'Ի շարս սրտառուչ բանից՝ որ 'ի պատճառս մերժելոյն Արշակայ «'ի բնիկ աշխարհէն», իբրև զարտուղութիւն՝ դնէ Փարպեցի և զակահաւոր ներբողեանն զաւառին Այրարատայ, որ մի յընտրելագոյն մասանց է նորին Պատմութեան:

Ի այց սակայն այսպէս իմն մանրամասնութեամբ ճառելով զԱրշակայ՝ Աազար բնաւ մոռանայ, թէ մերժելն նորս Այրարատայ, բայց 'ի քաղաքական պատճառաց²⁾, զորովք նոյնպէս զանց առնէ՝ կասեալ էր յաւէտ զընտանեկան հանդամանաց նորին, զորս Խորենացի շեշտելով աւանդէ³⁾:—Յետ այնորիկ զյիշէ նա զգլխարդն և զվասնէրն ընտրութեան Խորովու Պ'ի—Խորովու, որոյ իբրև տէր և թագաւոր իւրոյ գովաբանեալ Այրարատ զաւառի՝ պարտ էր ապաքէն յինքն գրաւել զուշ պատմագրին: Մինչ Խորենացի 8 զլուխս⁴⁾ բովանդակ նուիրէ պատերազմին Արշակայ ընդ Խորովու՝

1) Պատմ. Ազգ. յէջս 19—22 և 28—30:

2) Զկնի բաժանման աշխարհիս մերոյ յերկուս (յամի 378), 'ի բաժնին Պարսից պաշտօն վարէր անկախ 'ի թագաւորէն Հայոց պարսիկ վերակացուս կամ առաջնորդ՝ թերևս իբրև հարկահան միանգամայն և հազարապետ: Այս տեսանի 'ի բազմութիւ ակնարկութեանց Խորենացւոյ. օրինակ իմն՝ յազգս Արտաշի մերոյ, որ թագաւոր կարգեցաւ 'ի Առամայ, Խորենացի ասէ. թէ՛ չի նա (յԱրտաշի) հաւատաց (Առամ) զաշխարհս Հայոց առանց պարսիկ վերակացուի: (Պատմ. Գ. 58: Տէս և յ'Գ. 54:) — Աստուտս պարտ է ընթացրել թէ 'ի մտանելն Հայոց ընդ լծով Պարսից, վերակացուն կամ առաջնորդն Պարսիկ անհրաժեշտ իմն էր անձն առնթեր արքային Հայոց: Առաջնորդացդ՝ ըստ երևութին՝ մեծ իմն լեալ

էր իշխանութիւն 'ի Հայս, մինչև առ ոչինչ համարեալ նոցա զարքայն Հայոց, նեղել բացարձակ գնախարարսն և զժողովուրդն:—Ահաւասիկ ըստ իս՝ ոյր վասն տիրապէս թողոյր Արշակ Գ ընդ նմին և նախարարք Հայոց զմասն բաժնին Պարսից և գնայր 'ի Յունաց բաժինն. «... վասն զի ոչ համբերէին (նախարարք) ընդ պարսիկ առաջնորդավարիք, ասէ ինքն Արշակ 'ի պատասխանի թղթոյն Շապհոյ, որ գրեալ էր նմա գառնալ յետս և ունիլ զիշխանութիւն ըստ առաջնոյն: «...Եւ արդ՝ եթէ հաւատասցիս, յաւելու ասել Արշակ, զմասինդ քո իշխանութիւն, որպէս և կայսր գիւրոյս (այն է՝ առանց առաջնորդի), պատրաստ եմ 'ի պաշտել զքեզ՝ որպէս զկայսր: (Պատմ. Գ. 42:)

3) Պատմ. Խոր. Գ. 42:

4) Պատմ. Խոր. Գ. 42—52:

ընդ այսմ և զերից թղթոց բերելով 'ի մէջ զպատճէնս, 'Ազար չ'իշէ զանցից զայսոցիկ և ոչինչ: — Նոյնպէս անտես առնէ նա աւանդել լիապէս և զյանցանան Խորովու, յորոց 'ի պատճառս դահապուրկ եղև արքայն Հայոց յորս և Խորենացի ըստ արժանւոյն դարձուցանէ զուշ մեր. «անհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զՄեծն Սահակ 1), — նշանաւոր իմն իրաւունք, որ յայնմ ժամու 'ի Պարսից արքայի ձեռս էին: 'Ազարայ առեալ 'ի Խորենացւոյ զառաջին և եթմասն մեղադրութեան Խորովու՝ «բարեկամանայն Արևադեայ անձամբ», զանց առնէ զերկրորդաւն, որ յոյժ կարևոր է մերոյս 'Աստուծոյն որոյ և միւս օրինակ յիւրում իսկ ժամանակի դիպեցաւ կաթողիկոսին Վիւտայ: 'Վ բանից Խորենացւոյ տեսանի, զի և զսպարապետութիւն Հայոց 'ի յիշեալ ժամանակին Արեաց արքայն տայր կամ հաստատէր: Իբրև մեծն Սահակ՝ դիմեալ առ Առամշապուհ, խնդրէր սպարապետ կարգել Հայոց զփեսայն իւր՝ զՀամազասպ Մամիկոնեան, արքայն Հայոց, ըստ Խորենացւոյ՝ «հրաժարէր առանց արքայից արքայի առնել զայն՝ յիշելով, թէ սակս այսպիսի իրաց կրեաց վիշտս եղբայր նորին Խորով» 2): Չայսմանէ ևս ոչինչ յիշէ 'Ազար, թէպէտև պատմագրին, որ 'ի մուսուցոնս ածեալ զ'Խորենացի՝ շարայարող Փաւստոսի և Արարորդ 'Աստմագիր Հայոց համարի լինել զինքն, — անպատշաճ իցէ այսպէս համառօտակի անցանել զկարևոր անցից Ազարայոյ 'Աստուծոյն 3):

1) Պատմ. Խոր. Գ. 50:

2) Պատմ. Խոր. Գ. 51:

3) Աստանօր չ'համարիմք յաւելորդս բերել 'ի մէջ և՛ զսարբեր ցուցմունս ժամանակին իշխանութեան Առամշապուհոյ, որ 'ի Խորենացւոյ և 'ի Ազարայ կարգին: Խորենացի ստէ որոշարար. թէ Վթապաւորեալ (Առամշապուհոյ) ամս քսան և մի՝ մուսունիս .(Պատմ. Գ. 55): Իսկ Ազարայ՝ առեալ

զտեղեկութիւնս զայս 'ի Խորենացւոյ՝ յոյժ տարբեր 'ի նմանէ աւանդէ. յերկարս պատմաւ զթարգմանութենէ Սրբազան Տառից և զնոցին բարերար հետեանաց՝ որ 'ի Հայս, յաւելու ասել ճիշտց յետ այնորիկ թապաւորն Առամշապուհ ամս քսան և մի և հասեալ 'ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ...» : (Պատմ. յէջ 84):

Այլ իմն են քան զառաջագրեալսն կարևորագոյն իրք, որք 'ի պատճառս Աստուծոյ Աստուծեան տարբեր մեկնութեանց և տարաձայնութեանց լինին առ ի թ. մանաւանդ զի ընդ սմին և՛ ստուգադրութիւն այլոց պատմագրաց կարիցէ անկանիլ ընդ կասկածանօք: Արքղ այդոքիկ նշանաւորագոյնք են հանդամանք մերոյս Ապրութեան պատմութեան, որոց պարզագոյն յայտնարանութիւնն բաղձալի է յաւետ:

Եթէ կամիցիմք խնաստասիրել զպարագայս դիւտի նշանագրաց և զթարգմանութեանն Վրոց Արբոց մի այն ըստ Աստուծոյ Աստուծեան, — ահաւասիկ որպէս 'ի յայտ ելաննն յայնմ անձնաւորութիւնք Արբոց Սահակայ և Մեսրոպայ:

Հայոց շնն սեպհական նշանագիրք. յայտանէ ծաղեալ ահագին ինչ աշխատութիւնք եթէ 'ի քաղաքական, եթէ 'ի կրօնական և եթէ յառտնին իրս՝ յայտնի են և դուշակաւոր: Մեծին Մեսրոպայ՝ յերկարս զմտաւ ածեալ զայսպիսի կարօտութենէ, դնէ 'ի մտի հնարել գտանել նշանագիրքս Հայոց լեզուիս և դնացեալ առ կաթուղիկոսն Սահակ՝ զիւրոյ բաղմաժամանակեայ մտածութեան զինդիրն զեկուցանէ նմա: Աւրախ լինի Սահակ՝ զայսպիսի օգտաւէտ ձեռնարկութենէ իմացեալ քաջալերէ զՄեսրոպ և պատուիրէ ընդ այլ արս օգնականս, զորս ինքնին ցուցցէ՝ փոյթ զայնպիսեացն առնել պիտոյից. «և ուր տկարանայք 'ի կարգել զհեզենայն, առէ Հայրապետն, բերեալ առ իս ուղղեմ զայն. քանզի, 'ի վերայ բերէ Աստուծոյ շնորհք Սահակայ, յոյժ գիւրին է գիւտ իրացդ զոր հայցես»: — Սմին իրի՝ հաւանութեամբ արքայի և կաթուղիկոսի առաքի 'ի Միջագետս առ Վանիէլ ոմն՝ Ահարիճ զհայերէն նշանագրաց՝ որ առ նմա: Ահարիճ բերէ զնշանագիրսն. բայց տեղեկացեալ զիտացին «ոչ լինել բաւական ստոյգ հօլովել զհեզենայ բա-

ւից հայկականաց հաղներգաբար մուրացածիւն այնուիկ
զծադրութեամբ» ¹⁾;

Յետ այնորիկ ինքնին Մեսրոպ երթայ յԱսորիս և զինի
յերկար մի թափառելոյ քաղաքէ 'ի քաղաք և ազգի ազգի
նեղութեանց տանելոյ «անշահ մնացեալ լինի, ապա յաղօթս
ապաւինի և տեսանէ ոչ 'ի քուն երազ և ոչ յարթութեան
տեսիլ, այլ 'ի սրտին գործարանի երևութացեալ հողւոյն՝
թաթ ձեռին աջոյ զրելով 'ի վերայ վիմի...: Աւ յարուցեալ
յաղօթիցն՝ ես տեղծ զնշանադիրս մեր հանդերձ Հռու-
փանոսիւ՝ կերպածեալ զգիրն առ ձեռնապատրաստ Մեսրո-
պայ՝ փոխատրելով զհայերէն աթուրթայսն ըստ ան-
սայթաքութեան սիլովբայիցն 'ի հելլենացւոյն»:

Արդ՝ կատարեցաւ ուրեմն զլիտվին նշանադրաց զիւտն:
Սակայն և զինի այսորիկ յաւելլու ասել Ղազար, «Աւ որպէս
զիպեալ զիւտի նշանադրացն՝ ձեռն 'ի գործ արկանէր երա-
նելին Մաշթոյ՝ յերիւրելով զնա ս. հայրապետին Հայոց
Սահակայ, զիւրահնար ճանապարհ ցուցանելով,—
կարգաւորութեան զրենոյս և հեղինային ուղղաձայնութեան,
տալով նմա օգնականս... որք էին սակաւ մի և նոքա՝
որպէս երանելին Մեսրոպ՝ մերձաւորեալք 'ի յունարէն
հեղինայսն...: Արոց օգնելով, յարէ զինի Ղազար, զօրէր
երանելին Մաշթոյ հանդիպեցուցանէր զհայերէն աթու-
թայսն ըստ կարգման սիլովբայիցն յունաց՝ ստէպ հարցմամբ
և ուսանելով 'ի սուրբ կաթուղիկոսէն 'ի Սահակայ զաթու-
թայիցն զազափար ըստ անսայթաքութեան յունին: Ասան
զի ոչ լինէին բաւական 'ի վճարել անաղալ՝ ուղղակի
առանց առաջնորդելոյ նոցա ս. հայրապետին Սահակայ» ²⁾:

Ապա՝ դտեալ զնշանադիրս, ցանկային կարգել զպրոցս
առ յուսուցանել բաղմութիւն մանկուոյ. «բայց տարակու-

1) Պատմ. Ղազ. յէջս 33—39:

2) Պատմ. Ղազ. յէջս 39—42:

սեպք կասէին, սակ Ղաղար, յանչքութենէ Գրոց Արբոց...: — Իսկ երանելին Մաշտոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին, ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ — թարգմանել զիրա 'ի յոյն լեզուոյն 'ի հայ բարբառ. վասն զի ոչ էին այնպէս տեղեակ զիանապէս հրահանդի յունարէն ուսման»: Սմին իրի աշխարհի աւագ քահանայք հանդերձ Մեսրոպաւ, ընդ նոսին և թագաւորն Առամշապուհ խնդրեն ըզՄահակ «արկանել զանձն յաշխատութիւն և թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս 'ի Յոյն լեզուոյ 'ի Հայ բարբառ»:— Գինի բազում պաղատանաց հաւանի Մահակ բանից նոցա և այնուհետև ըստ Ղաղարայ՝ «անվիհեր ջանալով զցայգ և ցերեկ թարգմանեաց զկտակարանս ամենայն՝ զխօսեցեալս ճշմարիտ մարդարէիւք 'ի Սուրբ Հոգւոյն (հին կտակարանս) և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն զլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին հոգւով»²⁾:

Այսպէս իմն հանդիսանաց առաջի մեր անձնաւորութիւն Մեծի առն այնորիկ, որ 'ի վերայ աղբայինն լուսաւորութեան միակերպ և հաւասարապէս տքնէր ընդ արժանաւոր «զուգականի» իւրում՝ ընդ Մեծին Մահակայ: Յոքներախտ և մեծավաստակ արդիւնք Մեծին Մեսրոպայ, աստանօր՝ որպէս տեսանի, սակաւ ինչ նսեմացուցեալ են, և այն՝ թերևս առ 'ի դերազանց ցուցանել զՄահակ, որ այսպիսում ներբողինի հաղիւ թէ կարօտ իցէ:

Իայց մեք մատիցուք 'ի քնին առաջադրեալ նկարագրիդ՝ բաղդատելով զայն ընդ աղբերան, յորոց քաղեալ է Ղաղար. տեսցուք, յորչափս ստուգին որ զՄեսրոպայ են բանք:

Նախապէս պարտ իցէ ասել, զի կանխադոյն և լիամասն

1) Պատմ. Ղաղ. յէջս 41—43:

2) Պատմ. Ղաղ. յէջս 43—47:

աղբիւր զվարուց Մեարտայ Աորեան է պատմութիւն՝
աշակերտի նորին իսկ երանելի Մաշտոցի, որ զոյգ ընդ վա-
րուց Մեծի վարդապետին իւրոյ՝ ոճով իմն աւանդէ մեզ ըզ-
հանգամանս գիւտի նշանադրաց և թարգմանութեան Աս-
տուածաշունչ գրոց: Յետ այնորիկ՝ Աորենացի, որ նոյն-
պէս աշակերտ էր Մեարտայ և նորին քեռորդի,— ՚ի ճա-
ռելն զՄեարտայ՝ զԱորեան բանս և զվկայութիւնս բերէ ՚ի
մէջ հանապազ, դուն ուրեք յաւելեալ և զանձինն նկատմու-
նրս, քանզի քաջածանօթ էր ամենայն պարագայից դործոց
լուսաւորութեան իւրոյ ժամանակի:— Երգ՝ Փարպեցի, որ-
պէս ՚ի վեր անդր ցուցաք, չէր աշակերտ Արբոց Սահակայ
և Մեարտայ որպէս և ոչ նոցուն ժամանակակից, ուստի
յոյժ բնական իցէ, զի՝ ՚ի յօրինելն զճառ իւր զվարուց
Մեարտայ և զորոց ՚ի նա հային պարագայք, քաղէ զայնս
յերկասիրութեանց երկուց առաջագրեալ մատենապրաց:
Բայց սակայն յայտ իսկ մատենապրաց տեսանի, եթէ
չէին այնպէս գիւրին իմն գիւտ նշանադրաց ևս և կար-
գելն զհեղենայս, որպէս Ազաղար տայ ասել Մեծին Սա-
հակայ՝ ՚ի ծանուցանելն Մեարտայ զիւրոյ զգործառնու-
թենէն: Բանզի յայնժամ չէր հարկ ինչ ոչ Ահարիճ առն եր-
թալ առ Աանիէլ, ոչ ինքնին Մեարտայ իջանել ՚ի Միջա-
դեսս և պէսպէս աշխատութեանց տալ զանձն, եթէ Սահակայ
արդարեւ «յոյժ գիւրին» էր անձամբ կատարել զայս: Տակաւին
Ազաղար անխութութեամբ, թէ գիտմամբ իմն զանց առնէ
զժողովով որ՝ ըստ բանից Աորենացոյ՝ գումարեցաւ ջանիւք
Սահակայ և Մեարտայ «առ ՚ի հողալ զգիւտս գարու-
թեան Հայոց»¹⁾,—որ և գամ մի ևս հաստատէ, թէ «գիւտ
իրացն՝ զոր հայցէր» Մեարտայ կարի դժուարին էր:

Յետ այնորիկ՝ առեալ Ազաղարայ ՚ի Աորիւն վարդապետէ

1) Պատմ. Խոր. Գ. 52:

ամբողջ հատածս ինչ, թէ «...Մեարոպ ետեղծ զնշանագիրս մեր...փոխադրելով ըստ անասյթաբութեան սիղովբայիցն հելլենացւոց»¹⁾), — գողցեա իմն մոռանայ զասացեալն յինքննէ և այնուհետև յերկու էջս կրկնէ անդադար. թէ «կարգադրութեան գրենոյն և հեգենային ուղղաձայնութեան ձեռն ՚ի գործարկանէր Մաշտոց՝ յերկրելով Ս. Սահակայ, գիւրասնար ճանապարհ ցուցանելով». թէ «Մեարոպ քահանայից օգնութեամբ զօրէր հանդիպեցուցանէր զհայերէն աթուրթայսն ըստ կարգման սիղովբայիցն Յունաց՝ ստէպ հարցմամբ և ուսանելով ՚ի կաթուղիկոսէն ՚ի Սահակայ». թէ «առանց Սահակայ բաւական չէին ՚ի վճարել անաղար, ուղղակի...» և այլն: — Այժմէ նշանագիրք ստեղծան կատարելապէս ձեռամբ Մեարոպայ և այն՝ «ըստ անասյթաբութեան սիղովբայիցն ՚ի հելլենացւոյն», զինչ հարկ էր ուրեմն յետ այնորիկ այսքան աշխատանաց: Աւուստի՞ առնու Ղազար «զանդադար յերկրելն», «զուսուցանելն», «զառաջնորդելն» և «զգիւրասնար ճանապարհ ցուցանելն» Ս. Սահակայ, մինչ ՚ի վերոյ գրեալ աղբիւրք ոչինչ յիշեն զայսմանէ:

Ի վերջէ՛ ճառելով զթարգմանութենէ Ս. Ղրոց Ղազար ասէ. «ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարևոր գործ երանելին Մաշտոց և որ ընդ նմա պատուական քահանայք»: Ի այց անհիմն թուին բանքդ: Խորենացւոյ՝ առեալ զգիւտ նշանագրաց բառ առ բառ ՚ի Աորեան Պատմութենէ, (յորմէ քաղէ և՛ ինքն Ղազար), զինի տեսլեան Մեարոպայ և ստեղծելոյն զնշանագիրս՝ յաւելու ասել՝ անընդմիջաբար. «Աւ իսկոյն ՚ի թարգմանութիւն ձեռն արկեալ՝ խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան և երկու յայտնիսս և զնոր Ասակս յեղուլ ՚ի հայ բան, նսև աշա-

1) Կորիւն Վարդապետի պատմութիւն հայկ ժԱ. յէջս 10—11: Թիւն վարուց Սրբոյն Մեարոպայ.—Սոփ.

կերտք նորա Յոհան Եկեղեցային և Յովսէփ Պաղնացի ¹⁾։—
Սորին՝ յայնմ իսկ տեղւոջ, յորում Խորենացի ընդ «Առա-
կացն» թարգմանութեան զնոր Ատակս դնէ, «Հին Ատակա-
րանսն» ասէ՝ ոչինչ մոռացեալ յիշատակել և՛ «զԱռակաց
խմասանոյն Սողոմոնի» ²⁾։ Զինոքի ասա՛ զՀին, եթէ զնոր
Ատակարանս իցէ թարգմանեալ Մեծն Մեսրոպ Հանդերձ
աշակերտօք (մանաւանդ զի յոյժ դիւրին էր դրչաց շփոթել
զբանս նոր և Հին), այլ այն ինչ, թէ «զօրէր» նա և «բաւ-
ական» էր ՚ի թարգմանել և թարգմանեալ իսկ է զմասն ինչ
Ս. Գրոց, որպէս հաւաստեալ իմն և միաբան վկայեն զայս
նորին իսկ ձեռնասուն աշակերտք։

Թուի մեզ, զի և յայսմ համառօտ բաղդատութենէ դաց
՚ի յայտ, եթէ ուրբան սարբեր իմն ՚ի նախկին և ստուգապա-
տում մասնապարաց մերոց յիշատակին յերկասիրութեան
Ղազարայ քանի մի նշանաւորագոյն իրակութիւնք մերոյս
Վարդութեան պատմութեան։

Ըստանօր հարցումն՝ մանաւանդ թէ ապշումն ելանէ ընդ
առաջ ակամայ. Ղազարայ իցեն արդեօք բանքդ, մանրթ իցէ
արդեօք ենթադրել, եթէ անձանօթ էին նմա էական մա-
տունք այնպիսի կարևորագոյն իրաց՝ որպիսի ինչ են նշանա-
դրացն գիւտ և թարգմանութիւն Գրոց Արբոց, զի՛ է նկր-
տումն այն ՚ի բաց խլել ՚ի Մեծն Մեսրոպայ զարժանաւոր
վաստակս նորին։—Վակայն թողցուք զհարցմունսդ և փոր-
ձեսցուք ՚ի խնդիր անկանիլ առաջադրեալ հատածոցդ. թե-
րևս նշմարք ինչ կամ ակնարկութիւնք դացին յայնս, որք
ցուցանեն, թէ անպարտ իցէ Ղազար և թէ այս մասն
ևս նորին Պատմութեան, որպէս և այլք բազումք, այլայլ-
մունս ինչ իցէ կրեալ յայլոց։

*) Սակաւ ինչ կանուխ քան զգիւտ նշանադրաց և զթարգ-

1) Պատմ. Խոր. Գ. 53:

2) Սոփ. Հայկ. ԺԱ. յէջ 11:

մանութիւն Սրբազան տառից՝ Ազգար յիշատակէ մի ըստ միոջէ զամենայն նշանս թերութեանց և կատարելութեանց պատմագրին առ հասարակ. «...չառնել մարդահաճութեան բանից յաւելուածս, չյաւելուլ զանեղեալսն... ճոււղեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել 'ի յայտնութիւն...»:—Այսպիսի իմն «երկիւղագին պատրաստութեամբ» բուն հարկանէ Ազգար զՊատմութենէ՝ ընդ սմին ինքնին աղօթս առնելով և զայլոցն հայցելով «խնդրուածս առ Աստուած, որովք արդարապատումն ճշգրտաբանեալ, ասէ նա, հասից բարեխօսութեամբ սրբոց... յապահով նաւահանդիստ» 1):

Թուի մեզ՝ զի զինի այսպիսի «երկիւղագին պատրաստութեան» հազիւ թէ կարէր Ազգար՝ ընդ քանի մի անցեալ էջս՝ այնքան տարբեր իմն կացուցանել յանդիման զանձնաւորութիւն Մեծին Մկարտայ, զորոյ զվաստակոցն արդասիս նա ինքն առաւել քան զայլ ոք՝ 'ի ժամանակակցացն պարտ էր ճանաչել արժանապէս:

Բ) Աժուարաւ մարթ իցէ հաւատար, զի Ազգարայ՝ առեալ զնիւթ իւր՝ 'ի Պորեան պատմութենէ և այնպէս օտար 'ի նմանէ զայն աւանդեալ, մինչև զգալի իմն յեղաշրջել զամենեցուն քաջածանօթ իրան, — դարձեալ յերկոցս յընթացս բանից իւրոց յիշատակէր զմատենագիրոջ 2), մինչ և՛ հարեանցիկ իմն բաղդատութիւն երկոցունց ճառից, զոր իւրաքանչիւր ընթերցող կարէր առնել, բաւական էր առ յակնուրև կացուցանելոյ զնոցին բուն տարածայնութիւն:

Գ) Պարտ է դիտել, զի այն մասն Ազգարայ Պատմու-

1) Յառաջաբան Պատմութեան յէջս 9 և 17—18:

2) «... Եւ զայս (որ ինչ զՄկարտայ), թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ, ասէ Ազգար, 'ի պատմութենէ գրոց առն

ցանկալի Պորեան կարդացեալ տեղեկացի... ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալ:» (Պատմ. Ազգ. յէջ 35)

Թեան, յորում զնշանագրացն պատմի զիւտէ և՛ ըստ ոճոյն կրէ նշմարանս ինչ աղաւաղման կամ բռնի կողման: Աարէ՞ր արդեօք Աւղար զայնպիսիս առնել սխալանս, որ հակառակ ելաննն պարզ իմն տրամաբանութեան: Քանզի մերթ աւանդի, թէ «Մեարոպ ետակոճ զնշանագիրս մեր... ըստ անսայթաքութեան սիրովբայլցն 'ի հելլենացւոյն».— և մերթ յերկուս էջս շարունակաբար կրկնի, թէ «կարգադրութիւն գրենոյն և հեգենային ըստ անսայթաքութեան սիրովբայլցն 'ի հելլենացւոյն» լինէր յերիւրելով, ցուցանելով, առաջնորդելով, զիւրահնար ճանապարհ ցուցանելով Ա. Սահակայ:

Մեք ինքնին ճանաչեմք, եթէ չնն այնպէս ակներև մերս ցուցմունք, մինչև զլիտվին լուծանել կամ գոնեա պարզաբանել զինձիւսն կարևոր խնդրոցդ: Սակայն յաւելեալ յայսմ և 'ի վերոյ բերեալ ձիւ շարս ակներև կողմանց և աղճատմանց բնագրին, ոչինչ անմարթ իցէ կարծել, եթէ ձեռն իմաստակի ուրումն մխեալ իցէ և յայս մասունս Աւղարայ Պատմութեան:—Միայն հնագոյն և անվթարն իցէ պրչազիր օրինակ Պատմութեանս, եթէ բողբին բերմամբ գտանիցի այն ուրեք, որ կարէր փարատել զածեալն 'ի վերայ առաջադրեալ իրացդ զմտախոտղ և մեծ իմն սփռել լոյս ընդ կողեալն բնագիր Փարպեցւոյ Պատմութեան առ հասարակ: Իսկ մինչ ցայն՝ զճառն 'ի վերայ զիւտի հայկական տառից և թարգմանութեան Գրոց Արբոց՝ որպէս զարդիս աւանդի «Երրորդում Պատմութեան Հայոց»,—գէթ ընդ կասկածանօք համարիմք:

«ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ».

Ա Ղ Բ Ի Ի Բ Բ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ւ Ն Ղ Ա Ջ Ա Բ Ա Յ . — Ե Ղ Ի Շ Է :

Ղաղար թանօ՞ն էր և՛ Եղիշէայ Պարճաթեան: — Տոցճոն: — Տարբեր ասան-
քոթիւնէ՞նք զքանի՞ զի հանգամանայ՝ որ 'ի Ղարբանանցի հային պարճաթեան: —
Ղերաբէրոթիւն էրկոցանց պարճաթրացս առ Ղարբան Մաթիկոնեան: — Ազ-
գային զրոյցք զՂարբանանցի պարբերազէ՛ն՝ իբրև ազբիւր Ղաղարայ պարճաթեան:
— Մանրամանութիւնք զՄոթիայ և զՆոնոյն նահապետայ՝ որ 'ի դաշտին Աա-
րայի: — Ընդէր իոյս որայ Ղաղար 'ի յիշէայ զանուանս էրկոց գլխաորագոյն
ազբերաց իրոյ՝ զՄորենացոյն և զԵղիշէայն:

ՏՈՒՑԵԱԼ զճանօթ լինելն Ղաղարայ Խորկնայուոյ պատ-
մութեան որպէս և զտարածայնութիւնն, որ ծաղին 'ի մէջ
երկոցունց, — անցցուք ընդ կարգ բանից որ յԱզիշէ հային և
ակներև կացուայուք՝ թէ Ղաղար և՛ զտրայն ունէր Պատ-
մութիւն առաջի աչաց: Առ ասա կէտ նպատակի մերոյ չէ՛ լոկ
ինչ հետաքրքրութիւն. կամ էր մեզ լուսաբանել զայն կարև-
որագոյն խնդիր, եթէ՛ զինչ տարբերութիւնք իցեն 'ի միջի
երկուց համանման երկասիրութեանց, որ զխեմագոյն ժամա-
նակէ մերոյս պատմութեան ճառեն. ուստի՛ ծաղին տարբե-
րութիւնքդ և զխարդ մարթ իցէ զայնա բացատրել: Ամանց
բանասիրաց՝ միա եղևալ քանի մի մանրամասնութեանց
Ղաղարայ Պատմութեան (զնորին Ղարբանանց պատմու-
թենէ է բանս), համարեցան զնա լինել ինքնուրոյն պատմա-

գիր և ընդ Եղիշեայ ևս հաւասար դասեցին. թողից՝ զի քան զԵղիշէ գերադաս համարողք ևս գտան: Սակայն անաչառն քննադատութիւն զայս ինչ բերէ 'ի յայտնութիւն. թէ աւանդեալն 'ի Ղազարայ Ղարդանանց պատմութիւն՝ ծայրէ 'ի ծայր յԵղիշեայ գոլով քաղեալ, գրեալ թէ նոր ինչ և կամ կարևոր տեղեկութիւնս ոչ մատակարարէ Ազգայնոյ պատմութեան: Իսկ ինչ ինչ ըստ երևութին նոր գէպք և հանդամանք՝ որ 'ի Ղազարայ գիրս, յառանձին իմն հայեցողութենէ մատենագրիս ծաղեալ՝ յաւելուածք իցին և կամ 'ի զրուցաց ազգայնոյ առեալ պաճուճանք պատմութեան, որք ընդ սմին 'ի հակառակութիւն երեալ բանից Եղիշեայ՝ դժուարալոյժ առեղծուածս կարկն բերել յառաջ և թերևս զսորին իսկ Պատմութիւն դուն ուրեք նաև կասկածելի առնել յաչս ընթերցողաց:

Ղնելով 'ի ստորև, որպէս և 'ի վեր անդր 'ի բաղդաստին զՂազար ընդ Խորենացւոյ, վկայութիւնս ինչ, թէ Փարպեցի յիւրում Ղարդանանց պատմութեան բաց 'ի քայլ առ քայլ զհետ Եղիշեայ ընթանալոյ և առ հասարակ զնորին իմաստս միայն ճոխ բանիւք ծաւալելոյ՝ 'ի բազում տեղիս նաև զբանքս նորին և բովանդակ պարբերութիւնս բերէ 'ի մէջ անփոփոխ ¹⁾),—արասցուք զհամառօտ բաղդաստութիւն համա-

¹⁾Սուղ իմն էջք քննութեանս շտան թող մի ըստ միոգէ բերել 'ի մէջ զհամանման հատածս երկոցունց պատմագրաց. մանաւանդ զի ընդ քանի մի անցեալ էջս՝ տակաւին ունի տեսանել ընթերցողն աղիւսակ մի բաղդաստութեան բանից Ղազարայ և Եղիշէի: Ուստի շատասցուք աստանոր մի-

այն զտեղիս հատածոց նշանակելով: (Առաջիկայ վկայութիւնք յԵղիշեայ Պատմութենէն բերեալ են 'ի տպ. օրինակէն, որ հրատարակեցաւ 'ի Վենետիկ՝ յամի 1859— ընդ խորագրաւ. «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի Ղարդապետի Մատենագրութիւնք»):

Ղազ.	Եղիշ.	Ղազ.	Եղիշ.	Ղազ.	Եղիշ.	Ղազ.	Եղիշ.
յէջս 121	յէջս 9	յէջս 154	յէջս 39	յէջս 189	յէջս 58	յէջս 194	յէջս 60
» 124	» 22	» 176	» 40	» 192	» 59	» 195	» 57
» 134	» 32	» 183	» 57	» 193	» 61	» 253—4	» 108—9

նման գործոց երկոցունց պատմագրաց: Այսու թուի մեզ, պայծառապէս ՚ի վեր ցոլասցին տարբերութիւնք երկոցունց երկասիրութեանց, որպէս և առանձին իմն կատարելութիւն իւրաքանչիւրոյն ՚ի նոցանէ:

Սկիզբն առնու Ղազար Ղարղանանց պատմութեան այնպէս, որպէս և Նդիշէ, այնու տարբերութեամբ, զի ՚ի ներքս ածէ զՂարաղվաղան Սիւնի՝ իբրև զառիթ մեծի պատերազմին. թէև ընդ հսւպ մուանայ զնա և միայն ՚ի վախճան պատերազմին՝ ՚ի հարցափորձին Ղասակայ՝ հանէ ՚ի լոյս: Աչ մարթ իցէ զիտել, ուր էր նա և զինչ առնէր յընթացս բոլոր պատերազմին:— Մինչ յուզողս Յազկերաի Նդիշէ զմոզս լինել համարի, Ղազարս զյուզումնոյ Միհր-ներսէհի ընծայէ. և այն ինչ է յոյժ նկատելի, զի զնմատըն բանից որպէս և բազում դարձուածս ուղղակի յՆդիշէայ առնու, միայն փոփոխէ զանուանս արանց և ըստ սովորութեան պատմէ ճոխ բանիւք ¹⁾:

Յետ այնորիկ Ղազար ՚ի բաց թողու զՆդիշէայ պատմութիւն 9-րորդէ մինչ ցէջն 20-րորդ, թողու նաև զառ ՚ի նմանէ բերեալ զառաջին «հրովարտակ» Յազկերաի «առ ամենայն ազգս տէրութեան», որ առաքեցաւ ՚ի Հայս յամի 444, — և անմիջաբար դնէ զգրեալն ՚ի 449 ամի՝ զականաւոր նամակ նորին Յազկերաի, յորում արքայն Արեայ սպառնալեօք առաջի առնէր Հայոց թողուլ զքրիստոնէութիւն և ընդունել զդէն Մազդէզանց ²⁾:

Յոյժ հարցասիրական և ընդ ամին՝ դժուարալոյծ իմն ինդիր յառաջ ելանէ մեզ աստանօր: Անկալեալ Հայոց ըզհրովարտակ արքային Պարսից մոգուցն վարդապետութեամբ հանդերձ՝ ժողով դումարեն ՚ի թաղաւորանիստն Արտաշատ

1) Պատմ. Ղազ. յէջս 107—130: Եղիշէ. Պատմ. Վարդ. յէջս 5—9:

2) Պատմ. Ղազ. յէջս 121—123: Եղիշէ. Պատմ. Վարդ. յէջս 20—22:

վան պատասխանի առնելոյ նամակին: Աղիշէ՛ իբրև մասնակից ժողովոյս՝ աւանդէ զպատճէն պատասխանւոյն, որ առաքեցաւ առ Յազկերտ: Պատասխանիս այս ընդարձակ է ըստ բաւականի. քանզի վարդապետութիւնն Պարզաշտի զոյդ ընդ առաջարկութեանց արքայի՝ ջրեայ և հերքեայ են մի ըստ միոջէ, ընդ այսմ և յամիտի բանա աւանդեալ են հիմունք քրիստոնէական հաւատոյ ¹⁾: — Եւ այց զի՞նչ պատմէ զայսմանէ՛ Ասղար. նա ստէ, թէ ժողովն Արտաշատու բնաւ աւելորդս համարեցաւ ընթեռնուլ զառաքեալն յարքայէ զՄազդէզանց վարդապետութիւն և թէ՛ ՚ի նմին իսկ պատասխանուց առ Յազկերտ դրեաց, եթէ զվարդապետութիւնս ձեր «ճանաչեմք, եթէ սուտ են և անսիտ մարդոյ բարբանջմունք . . . յազադս որոյ և ո՛չ զմեր օրէնս դրել և տալ բերել առ ձեզ ըստ հրամանիդ ձերոյ՝ ՚ի դէպ և ՚ի պատշաճ համարեցաք . . .» ²⁾:

Չի՞նչ դայ՝ ՚ի յայտ յայսմանէ. Աղիշէ ստէ՛ թէ Զայք դրեցին առ Յազկերտ զպատասխանի հանդերձ օրինօք հաւատոյ իւրեանց. իսկ Ասղար՝—թէ «՚ի դէպ և ՚ի պատշաճ համարեցաք ո՛չ դրել զմեր օրէնս և տալ բերել առ ձեզ»:—Յերկուց մի լինել պարտ իցէ, կամ բերեալն Աղիշեաց պատճէն նամակի կեղծեալ իցէ ծայր ՚ի ծայր (կեղծեալ ստեմք և ո՛չ զարդարեալ ըստ ոճոյն) և կամ Ասղար յեղաշրջէ զպատմական իրս՝ վանն ճմանելոյ Աղիշեաց, որպէս տեսանի այս և յայլ տեղիս: Մերս կարծիք այն է, թէ Ասղար յեղաշրջէ զկարևոր իրողութիւնն և բնաւ ոչ կարեմք ենթադրել, զի Աղիշէ՛ թէ՛ իբրև ժամանակակից պատերազմին Արդանանց և մերձաւոր Արդանայ, թէ՛ իբրև մասնակից աշխարհաստեմք ժողովոյն Արտաշատու—բովանդակ 10 էջս յինքենէ հնարեալ կամ կեղծեալ լինէր և այն՝ զայնպիսի

¹⁾ Աղիշէ, Պատմ. Աարդ. յէջս 22—31:

²⁾ Պատմ. Աարդ. յէջս 127—130:

անցից, որ ամենեցուն ժամանակաց քաջածանօթ լինել պարտ էր և մանաւանդ Վաւթի Նրիցու Մամիկոնին, որոյ հրամանաւ իսկ զրէր Նղիշէ զՊատմութիւն իւր:

Չե՞ն արդեօք զարմանք ինչ Վազար առնու Նղիշեայ զընդհանուր իմաստ պատասխանոյն, առնու բառ առ բառ զցուցակն անուանց այնոցիկ, որ մասնակից էին ժողովոյն որպէս և ՚ի պատճառս նամակին ասացեալ բանս ինչ ՚ի Վրբանն Վարսից, — սակայն զպատճէն նամակին զլիտովին տարբեր բերէ ՚ի մէջ: Նադ այսմ պարտ է դիտել և զկծու իմն նաև զկարի համարձակ ¹⁾ ոճ Վազարայ պատճենի, զոր հազիւ թէ ՚ի կիր արկանէր պատկառելի ժողովն Երտաշատու և այն՝ առ արքայից արքայն: Թողից ասել, զի սուրբ ժողովն զընդունայնութիւն հայհոյակից նամակաց քաջ դիտել պարտ էր առ հասարակ:

Յասացելոցս աստի դայ ՚ի յայտ, եթէ ստուգութիւն Վազարայ պատճենի զոնեա ընդ բազում կասկածանօք է ուստի Նղիշեայն կայ մնայ տակաւին անժխտելի:

Օկնի բուն հակասութեանդ ՚ի միջի երկրոցունց պատմադրաց՝ արժանի են մտադրութեան այլ իմն դէպք, այն է՝ երթալն Վարդանայ «դրամք և ընտանեօք» առ Յոյնս, զորմէ Վազար պատմէ բազում մանրամասնութեամբ ²⁾, իսկ Նղի-

1) Ահաւասիկ հատած ինչ ՚ի Վազարայ պատճենէ. «...Այլ վասն օրինաց ձերոց, զրեն չայք առ Յազկերտ, զոր գրեալ էր և տուեալ յերեւառ մեզ, միք ձեզ ո՛չ երբէք լսեմք: Մինչ որ այդր լինիմք ՚ի Վրբանն, և կամ ՚ի մոգուցդ՝ որ ձեր օրէնսուսոյցքդ իմն կոչին, այպն արարեալ արհամարհեմք...» Զի զօրէնս՝ զոր ճանաչեմք եթէ սուտ են և անմիտ մարդոյ բարբանջմունք, զոր բազում անգամ մեր լուեալ է՝ ի ձեր անուանեալ սուտ

վարդապետացդ... զայն ո՛չ կարդալ պարտ է և ոչ լսել: Վասն զի ընդ կարդալն՝ հարկիմք և ծագը առնել, ուստի օրէնքն և օրէնագիրքն և որք պաշտեն զայդպիսի խարէութիւնս՝ ՚ի միասին թշնամանին...» Զի եթէ զձեր սուտ և զարժանի ծագու օրէնագ շհամարեցաք արժանի կարդալոյ... և այլն: (Պատմ. Ղազ. յէջս 128—129):

2) Պատմ. Ղազ. յէջս 165—172:

շէյիշէ և ոչինչ: Աւտօ^օ իցէ տարածայնութիւնս. այս. Աղի-
շէ արդեօք մոռացեալ իցէ կամ դիտմամբ իմն անտես արա-
րեալ զայսմանէ, թէ 'Աւաղար ասէ 'ի ներքս զայս միջնավէպ,
թերևս այսու զգերազանցութիւն Մամիկոնեան տոհմի 'ի
միոջէ կողմանէ և զթուլութիւն և նուաստութիւն այլոց
նախարարաց 'ի միւսմէ կամեցեալ օրինակաւ իմն կացու-
ցանել յանդիման:—'Ա դէպ է ասանօր միանդամ ընդ միշտ
ցուցանել զվերաբերութիւն երկոցունց պատմադրացս առ
Աւարդան Մամիկոնեան. այս դուցէ նպաստ լիցի մեզ առ 'ի
գտանել առիթս քանի մի տարածայնութեանց նոցա:

Մինչ Աղիշէ՛ իբրև ականատես և մանաակից Մեծի պա-
տերազմին, որպէս և մտերիմ Մեծին Աւարդանայ, ճշգիւ
համարս տայ որոց տեսեալ և լուեալ է (թէպէտև ոչ առանց
բանաստեղծական նկարագրաց և զարտուղութեանց)—կեն-
դանադրէ զԱւարդան, որոյ ժամանակակից քաղաքավար ա-
րանց հաւասար է ընդարձակութիւն մտաց, որ քաջ ըմբռնէ
զօդուտ աշխարհին և զՆկեղեցւոյն ճանաչէ զկարևորու-
թիւն, որչափ ըստ հանդամանաց պարտ էր ունել նա 'ի ժա-
մուն, 'Աւաղար՝ իբրև յետ ժամանակի պատմադիր, յորժամ
Մեծ պատերազմն անշուշտ բազում զարդուք և յաւելուա-
ծովք շրջէր 'ի բերանս բազմութեան ժողովրդոց, մանաւանդ
զի 'ի շնորհս կղերի՝ զիւցազունք պատերազմի՝ իբրև նահա-
տակք եկեղեցւոյ 'ի շարս սրբոց էին դասեալ և այսու առա-
ւել ևս զըուցաց ազգայնոց տուեալ նիւթ,—'Աւաղար, ա-
սեմք, հակառակ Աղիշեայ՝ կարի կրօնական հայեցուածս
ընծայէ Աւարդանայ: 'Նա պատկերացուցանէ զքաջ Ապարա-
պեան Հայոց, որ «քառասուն երկու»¹⁾ մարտս մղեալ էր
քաջապէս, իբրև զկրօնաւոր ոմն, իբրև զաբեղայ, յորոյ 'ի

¹⁾ Այսպէս ասէ զմանէ Աւարդան Պատմիչ. յէջս 75 (տպ. 'ի Մոսկուա):

չըթանց չպահասին սաղմոսերգութիւնք ¹⁾: Նա նկարագրէ զվսեմագոյն և զկորովամիտ այրն, որ 'ի Հայս էր 'ի ժամուն' իբրև զմոլեռանդն քրիստոնեայ, որոյ կէտ նպատակի յամենայն պատերազմունս զմարտիրոսականն էր և եթ ընդունել զպատկ, յորոյ աչս ամենայն խնդիրք կարևորք՝ եթէ ազգային, եթէ քաղաքական—«անտախ» ինչ էին ²⁾: Հիացեալ Ղազարայ ընդ Վարդան՝ կամէր շոշափելի իմն եղանակաւ յառաջ մատուցանել զանձն նորա՝ 'ի աոյժ այլոց նախարարաց և զպատերազմն ողջոյն ներքողեան ինչ յօրինել 'ի փառս Վարդանայ և տոհմին Մամիկոնէից: — Յայս իսկ հայեցողութենէ իցէ, զի Ղազար առիթս որոնէ 'ի կշտամբել ծանրալուր բանիւք զնախարարեանն Հայոց՝ թերևս 'ի բերանոյ Մեկենասին իւրոյ, զնոցին 'ի վաղ ժամանակաց առ Մամիկոնեանս ցուցեալ «զնենդաւոր խարէութիւն», յորմէ տոհմս այս «վաշտաց մեծաց և մահու պատահեալ է» ³⁾: Յայսպիսի իմն հայեցողութենէ է, զի Ղազար տայ ասել Վարդանայ առաջի Յաղկերտի և ամենայն աւարանւոյն Պարսից ինքնահաճ բանս ինչ՝ մթինս և անորոշս, որք բնաւ հակառակին խոհեմ բարուց առաքինի Սպարապետին զորոց և զարձեալ ոչինչ յիշէ Նղիշէ.— «Յայսմհետէ հնարիմ ամենայն զօրութեամբ... ասէ Վարդան, գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և 'ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեացի

1) Այս տեսանի նաև յաճական անուանց, զորս 'ի կիր արկանեն մատենագիրքդ զՎարդանայ: Մինչդեռ Եղիշէ անուանէ զՎարդան՝ «կորովի սպարապետ», «քաջ Վարդան», «առաքինի զօրավար», — Ղազար հանապազ ասէ՝ «երանելի Վարդան» և «մուրս Վարդան»:

2) «...Բանդի շխորհէր (Վարդան) զյաղթութեան ինչ անուն գտանել ասէ բազ-

միցս Ղազար, այլ զհեղումն արեան անձինն 'ի վերայ շինութեան ուխտին եկեղեցւոյ մնչէր ըմբռնել...» որ և արհամարհելով զամենայն սնտոփ կեանս աշխարհիս... վասն անուան «Քրիստոսի» ընտրէ զնալյօտարութիւն» (յէջ 164): Այսպիսի հայեցողութիւն տեսանի և՛ յէջս 146, 169—170, 174, 197, 199, 202, 218 և այլն:

3) Պատմ. Ղազ. յէջս 170—171:

համբաւն այն մինչև յաւիտեան»... 1):—Այն ինչ յոյժ հետաքրքիր է, զի զայսպիսի բանս եղեալ Ապղարայ 'ի բերան Աարդանայ՝ հուսկ ուրեմն փախուցանէ զնա առ Յոյնս և այս՝ յայնպիսի անձուկ վիճակի, յորժամ՝ ըստ իւրուհն իսկ ասացելոյ «էր տեսանել 'ի Հայս զամենեսին քակտեալս 'ի միմեանց և պատառեալս»... յորժամ «սուգ առեալ կոծէին կանայքըն», «կառաչ բարձեալ՝ լային 'ի տանն Աստուծոյ սուրբ եպիսկոպոսք, քահանայք, ծերովք և աղայովք» յորժամ «ծեփեալ արեանց համամբք զամենայն դէմս ուղղափառ մարդոց» 2):—Միթէ «վասն անուան Վրիստոսի... յօտարութիւն գնալ իցէ, որով 'ի զարմացումն կամէր շարժել Աարդան զԱայսր և զԱրեաց արքայն որ և յայլ ազգս պատմեսցի... մինչև յաւիտեան»:

Բաց յայսպիսի տրամաբանական հակասութենէ, զոր առնէ Ապղար ընդդէմ անձին, է՛ և այլ իմն փաստ 'ի պատմութեան, որ նոյնպէս հարկեցուցանէ չընծայել մեծ հաւատ ինչ առաջադրելում միջնավիպի — չուելոյն Աարդանայ առ Յոյնս: Աստ բանից նորին իսկ Ապղարայ՝ նախ քան զամենեսին Ասասկ իսկ, որ 'ի սկզբանէ անտի նորին Աստմութեան 'ի կերպարանս դաւաճանի ելանէ 'ի յայտ, ջանահար լինի յետս դարձուցանել զԱարդան 'ի Հռոմոց՝ առաքելով առ նա «քահանայս ընտիրս և աւագս 'ի տանուտիրացն Հայսց»։ Սակայն ո՞չ ապաքէն սեպհական իսկ օգուտն ուրացելոյն Ասասկայ պահանջէր՝ ընդհակառակն նպաստ լինել չուելոյն Աարդանայ, հեռացուցանելով յաշխարհէն Հայոց յայնմ իսկ նեղ վիճակի զկանխատես և զքաջարի Սպարապետն:

Մերժելով զստուգութիւն յիշեալ միջնավիպի Ապղարայ իսկ բանիւք, որպէս և այնու, զի ոչ յիշատակէ զայնմանէ Եղիշէ, այսու ամենայնիւ Համարիմք զայնս իբրև զկեղծիս

1) Պատմ. Ղազ. յէջ 158:

2) Պատմ. Ղազ. յէջս 161—162:

ինչ յինքենէ պատմադրէ մուծեալս 'ի ներքս: 'Աէպքս այսո-
քիկ թերևս մի յայնց իցեն զըուցաց կամ աւանդութեանց,
որք յետ ժամանակի յորինեալ 'ի միջի ժողովրդեան՝ 'ի բե-
րանոյ բերան պատմէին իբրև յաւելուածք ինչ կամ պաճու-
ճանք մեծի պատերազմին, յորոց և ոչ դամ մի քաղեալ է 'Ա-
զար: 'Ա շարս այսպիսի աւանդութեանց պարտ է դասել զմիւս
ևս նկարագիր՝ զպատահումն 'Ասասկայ ընդ երանելեացն ¹⁾
Սահակայ, Յովսէփայ և 'Աւետի 'ի ճանապարհին անդ՝
յորժամ կապանօք ածէին զնոսս 'ի 'Ղուռն 'Աարսից,—որ
ոչ միայն չիշի յՆդիշեայ, այլ նորին բանից զօրութեամբ և
չէր իսկ մարթ այսպիսի ինչ դիպաց լինել պատահեալ ²⁾:
'Ա իպասանական մանրամասնութիւնք նկարագրից և կեն-
դանի իմն ոճ՝ դորին ցուցանեն, եթէ 'ի զըուցաց անտի ազ-
գայնոց իցէ քաղեալ:

Ըսաց 'ի նշանաւոր տարածայնութեանցս կն կն և այլ
մանր ինչ դէպք անմխարանութեան 'Ազարայ ընդ Նդիշեայ,
զորոց զպատճառս չէ դիւրին բացատրել: Օրինակ իմն. Նդի-
շէ պատմէ, եթէ նախ քան զմեծ պատերազմն՝ Հայք առաքե-
ցին «զգիր պաղատանաց» առ 'Ասյսրն՝ օգնութիւն հայցելով
'ի նմանէ ընդդէմ 'Աարսից—'ի ձեռն Ետոմայ 'Վնուռն-
ւոյ ³⁾, իսկ 'Ազար դնէ՝ 'ի ձեռն 'Ասահայ Եմատուռնոյ,
Հմայեկայ Մամիկոնենոյ և Մեհրուժանայ Երծրուռնոյ ⁴⁾:
Եստ մանաւանդ գրաւէ զուշ մեր Հմայեկայ անուռն, որ
ըստ Նդիշեայ առհասարակ սակաւ ուրեք ունի մասն 'ի մեծի
պատերազմին (դուցէ խոյս տուեալ 'ի Տայս՝ կեայր անդ 'ի
'սեպհական կայրուածս աղղի իւրեանց) որոյ և պատգամաւո-

1) Պատմ. Ղազ. յէջս 225—228:

միայն չյետ երկուց ամսոց և քսան
աւուր հասանէին 'ի ձմերոցն արքունիս:
(յէջ 101)

2) Քանզի՝ ըստ Նդիշեայ՝ 'Ասասկ յա-
ռաջագոյն քան զՍահակ, զՅովսէփ և
զ'Աւետի ելեալ էր յաշխարհէն հայոց և
հասեալ 'ի Գուռն, իսկ Սուրբ քահանայք

3) Նդիշէ. Պատմ. Վարդ. յէջ 54:

4) Պատմ. Ղազ. յէջս 184—5:

բութիւն առ Յոյն ոչ կարէր անյայտ մնալ յԱղիշեայ: Թե-
րևս դիտացեալ Վազարայ զբացակայութիւն Հմայեկայ 'ի
դաշտէն Աւարայրի յաւուր մեծի ճակատուն՝ և՛ զՀմայեակ
կարծեցեալ իցէ պատգամաւոր առ Յոյն (պատգամաւորք
Հայոց յիրաւի՝ ժամանեցին 'ի Հայս զինի ճակատուն Աւա-
րայրի), ուստի և մանրամասնութեամբ պատմէ զնորին դարձն
'ի Տայս և զնահատակութիւն յայնմ դաւառի ¹⁾ այն ինչ
Նղիշէ դամ մի և եթ յիշէ զՀմայեակ և այն՝ պատահարար:

Վոյնպէս շփոթեալ տեսանի 'ի միջի երկուց պատմադրաց
անուն դատախազին Վասակայ, Նղիշէ՝ որոշաբար զԱտոմ
Պնունի գնէ ²⁾, ընդ որում և առաքեցաւ թուղթ առ Այսու-
րըն՝ հանդերձ կնքով Վասակայ—մի 'ի կարևորագոյն փաս-
տից դատախազութեան, իսկ Վազար—զմտերիմն իւր՝ զԱր-
շաւիր Աամարական, զորմէ առաւել տեղեկութիւնս աւան-
դէ, քան Նղիշէ դիտել տայ մեզ ³⁾: Նւ այս՝ թերևս 'ի պատ-
ճառս քաջ ծանօթ լինելոյ Վազարայ «հրաշալի» տանու-
տեառն Աամարականաց: Բայց որ ինչ յազազս անուան
դատախազին՝ ցուցումն Նղիշեայ այնու ամենայնիւ հաւա-
նականագոյն թուի մեզ, թէև Արշաւրայ ևս մարթ էր զոյդ
ընդ Ատոմայ միանուազ դատախազ լինել իշխանին Սիւնեաց:

Ե վերջոյ, զի հակասութիւնք և տարաձայնութիւնք
Վազարայ ('ի պատմութեան Վարդանանց) Նղիշեայ պատ-
մութեան և կամ ըստ երևոյթին ամին ևս անծանօթ նոր
դէպք ինչ, որպէս վաղագոյն ասացաք, կասկածաւոր իցին
յաւելուածք և կամ յաւէտ՝ յաւանդութեանց անտի քաղեալ
զրոյցք, — տեսանի պարզապէս մանաւանդ 'ի բանից, որ ըզ-
Խուժիէ: Ասացուք զայսմանէ սակաւ ինչ մանրապատում
խնդիրն, զորոյ հայցեմք զլուծումն, արժանի է մտադրութեան:

1) Պատմ. Ղազ. յէջս 218—220:

3) Պատմ. Ղազ. յէջս 245—250:

2) Եղիշ. Պատմ. Վարդ. յէջ 103:

՚Ի ճառերն Եղիշեայ զնահատակութենէ Սրբոց Աւոնդեանց՝ կամեցեալ ցուցանել, թէ զիարդ ինքնին կարէր զիտել զմանրամասն դէպս, որ բազմօք հեռի ՚ի Հայոց աշխարհէն՝ ՚ի բարբարոս կողման անդ կատարեցան,—ասէ, եթէ էր «այր մի Խուժիկ անուն ՚ի զօրացն արքունի, որ ՚ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւն և վիճակեալ էր ՚ի դասս դահճացն...»¹⁾ Խուժիկս այսորիկ՝ իբրև դահճի՝ զխակալ տեղւոջն առ Սրբոց Յովսէփայ, Սահակայ և Աւոնդի և ականատես եղեալ տանջանաց և մարտիրոսական մահուան նոցա, որպէս և ապա ուրեմն զնոցին մարմինս գաղտ բառնալով և քրիստոնէից յանձնելով—«երկրորդեայ մեզ, ասէ Եղիշէ, զամենայն կարգաւ. զչարաչար քարշումն, և զհարց և զփորձ դատաւորացն և զԼրաքանչիւր անձանց սրբոցն ըզպատասխանիան, և զկատարումն մահուան նոցա... և զանիփոումն սուրբ ոսկերաց նոցա...»²⁾։ — Մինչդեռ Ասղարայ՝ զամենայն բանս զՍրբոց Աւոնդեանց միայն Եղիշեայ առեալ և սխալ իմն իմացեալ զբանն «Խուժիկ»՝ ոչ իբրև զանուն առն, որպէս նմին իսկ ծանօթ Եղիշէ աւանդէ, այլ զազդի ուրուք՝—«վաճառական» զնա համարի լինել «որ էր ազգաւ Խուժիկ»։ Եւ այն իսկ է զարմանալի, զի Ասղար տակաւին տրտունջս բառնայ, թէ զանուն այսպիսի սքանչելի առն (Խուժիկ) «ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ»³⁾, —զողցես նկրտելով եղծանել միանդամայն զԵղիշեայ վիայութիւնն, որ յականէ յանուանէ ճանաչէր զԽուժիկ։—Արդ՝ կասկած յարուցեալ Ասղարայ զստուգութենէ Եղիշեայ վկայութեան, անդէն ՚ի վերջ պատմութեան զՍրբոց նահատակաց փութայ ծանուցանել, թէ՛ զամենայն անցս զայսոսիկ «զրեցաք հաւատեալ, որպէս ստուգիւ և ջերմ խնդրով

1) Եղիշ. Պատմ. Վարդ. յէջ 125:

3) Պատմ. Ղազ. յէջ 314:

2) Եղիշ. Պատմ. Վարդ. յէջ 142:

Վամնարահանին Արշաւրայ հարցեալ ցերանելի Խուժիկն և լուեալ 'ի նմանէ պատմեաց մեզ»¹⁾: Աւայլում տեղեղ. թէ «մեր յոլովագոյն լուեալ 'ի հրաշալի Վամնարահանէն՝ դրեցաք յօժարապէս հոգալով, զոր թէպէտ՝ ըստ տկարամտութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել զբովանդակն 'ի կարգի, այլ և ոչ բնաւ գտեալ անյուշք յապաղեալ՝ մոռացաք ինչ ծուլանալով»²⁾:—Օ՛խարի մարթիցէ ասել «ըստ տկարամտութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել զբովանդակն 'ի կարգի...», յորժամ Ղազար ունէր առաջի աչաց զմատեան Աղիշեայ և ոչ միայն քայլ առ քայլ գնայր զնորին հետ, այլ և բովանդակ պարբերութիւնս և ճառս քաղէր յայնմանէ: Թող զի չկամէր Ղազար ցուցանել, եթէ ծանօթ իցէ ինքն Աղիշեայ պատմութեան, բայց նա ազաւաղէ զասացեալն 'ի նմանէ և կասկածս յարուցանէ զնորին ցուցմանց, նա նոր աղբիւրս ինչ մատնացոյց առնէ, մինչ բացայայտ է, թէ բաց Աղիշեայ չէր նորա այլ իմն դրաւոր աղբիւր:

Արպէս զի չերևեսցին անհիմն բանք մեր յաչս ընթերցողաց՝ գիցուք վիպութիւնս ինչ աղիւսակ մի բաղդատութեան համանման հասածոյ Ղազարայ և Աղիշեայ թերևս լուսաբանեացէ զինդիւրն:

Ղազ. (յէջ 291—2) ասէ.
«...այնչափ բազում արեանց՝ որ անդ հեղան. և ամենայնի այնմ դուք էք պարտաւորք (ասէ Վ. Ե. հ. գենչապուհ ցտւրբսն)... և որպէս եղէք պատճառք բազում արեանց, լերուք այժմ պատճառք բազմաց կենդանութեան...»:

Եղիշ. (յէջ 126) ասէ. «...ամենայն աւեր աշխարհին Հայոց և կոտորածք զօրացն... 'ի ձէնջ եղեն վնասքն ամենայն... որպէս եղերուք պատճառք ամենայն չարչարանաց մահուն, այսօր լերուք պատճառք կենաց ձերոց...»:

1) Պատմ. Ղազ. յէջ 305:

2) Պատմ. Ղազ. յէջ 316:

Ղաղ. (306) ասէ. «Եւ Վեհդեն-
 շապհոյ և այլ իշխանացն...ընտ-
 րեալ արս...Թողին 'ի տեղւոջն...
 որոց հրաման տուեալ ասէին ցը-
 պահապանն, թէ մինչև ցաւուրս
 Ժ և կամ ևս աւելի պահեսցին ըղ-
 դիակունսնդ...մինչև եկեալ անցցէ
 'ի բաց կարաւանն արքունի. դու-
 ցէ, ասէ, եկեալք 'ի քրիստոնէիցն
 ...գտանիցեն զոսկերս դոցա, և
 առեալ սիռիցեն յամենայն քրիս-
 տոնեայս...» :

Ղաղ. (307) ասէ. «...Խորհէր 'ի
 մտի իւր Խուժիկն, եթէ զինչպիսի
 հնարիւք ցուցանիցէ Աստուած
 ճանապարհ առնն, որով արժանի
 լիցի գողանալոյ զնշխարս սրբոցն
 յայլոց պահապանացն...» :

Ղաղ. (307) ասէ. «...յերեկո-
 րեայ գիշերոյն՝ լինէր շարժումն
 մեծ...բումբիւնք սաստիկք և ձայնք
 ահագինք յանդնդոց հնչէին, կու-
 տեալք բազմութիւնքամբոց զեր-
 կիրն ծածկէին, ձայնք որոտմանց

1) Արարեալն 'ի Ա. Պօլիս յամի 1764 ա-
 ռաջին տպագրութիւնն Եղիշեայ Պատմու-
 թեան, թէև ոչ իցէ անդերձ 'ի բազմադի-
 մի աղճատմանց, սակայն յայտ տեղւոջ ու-
 նի ընթերցուած ինչ, որ ստուգադոյն
 թուի մեզ քան զՎենետիկանն (1859), «...զի
 մի՛, ասեն, համակդենքն եկեալ...» և
 այլն:—Նախ՝ բանս ասեն, որ առ Ղաղա-
 րայ ասէ՛ս գրի որ և անշուշտ 'ի հնագոյն
 դրչադրաց իցէ աւանդեալ 'ի զուր թո-

Եղիշ. (139) ասէ. «...Իննշա-
 պուհ և Մոգպետն և Չնիկանն
 անդէն 'ի տեղւոջն պահապանս
 ընտրեցին, և պահել հրամայեցին
 զմարմինս երանելեացն ցաւուրս
 Ժ կամ ևս աւելի, մինչև կարա-
 ւանն արքունիանցեալ գնասցէ. զի
 մի՛ 1) այլադենքն եկեալ բառնայ-
 ցեն զոսկերս դոցա, և բաշխեալ
 սիռեսցեն ընդ աշխարհս ամե-
 նայն...» :

Եղիշ. (140) ասէ. «...Խուժիկն...
 գէտ ակն ունէր՝ եթէ որով օրի-
 նակաւ հնարս գտցէ զոսկերս սրբ-
 բոցն գողանալ 'ի նոցանէ ('ի պա-
 հապանացն)...» :

Եղիշ. (140) ասէ. «...հասարակ
 գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք հըն-
 չէին և թնդիւնք և որոտաձայնք
 'ի ներքուստ՝ որպէս դղողումն
 գետնաշարժի. երկիրն դողայր 'ի
 ներքոյ նոցա և շողիւնք սուսե-

զեալէ 'ի բաց 'ի Մխիթարեան հրատա-
 րակչաց: Եւ երկրորդ՝ իշխանք Պարսից
 (Իննշապուհ և այլք)՝ հրամայելով զինուո-
 րաց պահել զմարմինս սրբոց, երկնչին, զի
 մի՛ եկեալ բառնայցեն զոսկերս դոցա ոչ
 եթէ «այլադենքն», որպէս դնի 'ի
 Վենետիկանն տպագր. այլ համակդենքն՝
 այն է—սրբ ընդ սրբոց հայոց զհամակ
 ունին դէն՝ քրիստոնեայք: (Տե՛ս յառաջին
 տպագր. Պատմ. Վարդանանց, յէջ 182):

և փայլատակունք զլերինս դողա-
ցուցանէին... և կործանեալ յեր-
կիր պահապանքն կիսամեռք լի-
նէին, չգիտելով այր զընկեր բնաւ
արգեօք թէ ո՞ր իցէ...» :

Ղազ. (313) ասէ. «...Բայց զա-
ռաջին պտուղ... գանձուն... մատու-
ցանէր (Խուժիկ) կապելոց նա-
խարարացն...» :

րաց փայլատակմունս արձակէին.
...Եւ այսպէս տագնապեալք (պա-
հապանքն)... մինչև այր զընկեր 'ի
փախուստ չգիտէր ընդ որ եր-
թայր...» :

Եղիշ. (141) ասէ. «...Եւ զառա-
ջին պտուղ ընծային մատուցանէ-
ին կապեալ նախարարացն...» :

Յերկարաբանութենէ խուսեալ՝ քանի մի օրինակս եղաք
աստ և այն՝ համառօտեալս. սակայն թուի մեզ՝ զի սոքիմք
ևս հաստատին մերս առաջադրեալ կարծիք:

Յետ այսորիկ բացայայտ իցէ, թէ՛ որ 'ի Ղազարայ յի-
շատակին այլ աղբերք Ղարսբանանց պատմութեան, մինչ
ինքն միայն զՆղիշէ և եթ ունի առաջնորդ յամենայն դէպս,
— հազիւ իմն արժանի իցեն մեծի հաւատոյ: Ահաւասիկ ոյր
վասն մարթ իցէ առ ոչինչ համարել և զայն ծանրակշիռ և
խորհրդաւոր բանս, զորս 'ի մէջ բերէ Ղազար՝ օրինակ — 'ի
գրին զթուոյն մեռելոց 'ի մեծի պատերազմին. «...և որպէս՝
շատ խուզիւ և բազում քննութեամբ հարցեալ՝ ու-
սաք զնահատակելոցն թիւս... լինին միահամուռ 1036 այր,
զորոց իւրաքանչիւր անունն վարձահատոյցն Վրիստոս
դրեալ պահէ 'ի դպրութեան կենաց: Եսկ զօրացն Պար-
սից, որք անկան 'ի պատերազմին յաւուրն յայնմիկ՝ զոր
ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք՝
'ի զօրադիւսացն Պարսից՝ 3544 այր»¹⁾: — Աչ գիտեմք, զինչ
պէտք էին «շատ խուզիւ և բազում քննութեամբ հարցանելոյ
և ուսանելոյ», մինչ Ղազար առաջի իւր ունէր զպատմու-
թիւն Նղիշեայ, որ զմի և նոյն թիւ նահատակաց զնէ, 'ի

1) Պատմ. Ղազ. յէջս 213—214:

Հայոց կուսէ՛ 1036 այլ և ՚ի Պարսիցն՝ 3544—յաւելիալ զՀայոց նահատակաց՝ «որք զանուանա իւրաքանչիւր ՚ի դպրութիւն կենաց գրեցին...», պարբերութիւն իմն, զոր Վաղար ամբողջապէս առնու Վղիշեայ¹⁾: Վարձեալ ՚ի պատմելն զՎասակայ տանջանաց և մահու՝ Վաղար ասէ, «խօսէին ընդ մեզ զայս արդարապատումն սպասաւորք նորին իշխանին Վասակայ», ²⁾—բնաւ ինչ ոչ յիշելով զՎղիշեայ մատեանն, յորմէ տիրապէս քաղեալ էր զմանրամասնութիւնսրն անցից այսոցիկ:

Յամենեցուն ասացելոցս զոյ առնուլ ՚ի միտս, թէ Փարպեցի ամենայն հնարս արկանէ ՚ի դործ առ ՚ի չիշել զՎղիշեայ մատեանն ճգնի շնամնիլ նմա յընթացս պատմութեան իւրոյ՝ զանատոյզ աղբիւրս մատնանիշ առնելով, ՚ի սեղիս սեղիս հակառակ նորին աւանդութեան դէպս հաղորդելով, որպէս և զանուանա արանց ոմանց շփոթելով: Աւ ընդէր այսպէս առնէր Վաղար: — Փորձեսցուք մեկնել զտարօրինակ ընթացս պատմադրին որ ինչ յաղագս կրկուց զլիաւորագոյն աղբերաց իւրոյ երկասիրութեան՝ Վղիշեայ և Նորենացւոյ:

Քաջածանօթ իսկ է առ հասարակ, զի ՚ի ժամանակս հեթանոսութեան որպէս և ընդ երկար ուրեմն՝ զկնի տարածելոյ քրիստոնէութեան ՚ի Հայս, աղգային երգք էին, որ առ նախնեաց մերոց ունէին պատմութեան զսեղի, որպիսի ինչ են—Նրգք վիպասանաց, Վողթան երգք, Վուկելեաց երգք, այլ և այլ վէպք և աւանդութիւնք, որ վիպասանաբար պատմէին կամ երգէին զսիրագործութիւնս ոմանց դիւցազանց մերոց և թագաւորաց ³⁾: Չկնի քրիստոնէութեան՝ ընդ հուպ մուտս գործին ՚ի Հայս յոյն, և ասորի ձեռամբ գրաւոր պատմու-

1) Եղիշ. Պատմ. Վարդ. յէջ 93:

2) Պատմ. Ղազ. յէջ 225:

3) Վէպք հնոյն Հայաստանի. քննութ.

Մ. Էմին. ՚ի Մոսկուա, 1850:

Թիւնք, որք՝ ըստ բովանդակութեան իւրեանց ազգայնոց բերելով աւանդութեանց զնմանութիւն՝ ուրեք ուրեք նաև իբրևարձագանդ նոցա, — յօժարութեամբ ընդունին յընթերցողն դասէ: Խորենացի՝ իբրև քաջ հեռեող յոյն գալութեան, փորձէ զնոր իմն և առաւել ուսողական տիպար ընծայել Պատմութեան, սակայն փորձ նորա լինի անյաջող: Կազմութիւն ժողովրդեան՝ թէպէտև քրիստոնեայ՝ մեծաւ հաճութեամբ երգեն և պատմեն «ի նուագս բամբուսն» զհեթանոսական վէպս, կրթեալ դասն՝ նախարարազունք և ազատք, ոչինչ պակաս ՚ի նոցունց ակտորժելով զազգային վէպս, — մանաւանդ յօժարեալ հաճին ընդ պատմութիւնս վիպասանաբար գրեալս: — Աւստի սիրելի էր Ազատանդեղ, որ ոճով իմն պատմէր զՏրդատայ շահատակութիւնս, «զքնադապեղն» նուիրսիմեայ քաջասրտութիւնս, զԱռսաւորչայ հրաշալի վարս, զնորին տեսիլ սքանչելի և առ հասարակ արկածս հրաշահիւսս: Հաճելի էր և՛ Փաւստոս, որոյ ինչ ինչ յազգայնոց առեալ վիպաց և զրուցաց՝¹⁾ զոյգ ընդ հրաշալի վարուց Ա. Ներսիսի՝ ամփոփէր և զբովանդակ շարս փայլուն և գրաւիչ պատկերաց անհուն քաջագործութեան, — սիրելի իմն նիւթեթէ՛ վասն ամբոխին և եթէ՛ կիրթ արանց: — Ահաւասիկ զորպիսի պատմութիւն խնդրէր հոյակապն այն Սահակ Կազարատունի՝ թերևս հիացեալ ընդ գեղեցիկ իմն նկարագիրս Փաւստոսի, ՚ի յիշեցուցանելն իւր անդադար զհայրն Պատմագրութեան, որ հայրաբար յանդիմանելով զնորին «կարտութիւն առ փոյուն և անմիտ առասպելս»¹⁾, աւարտեաց զՊատմութիւն իւր: Չայսպիսի պատմութիւն կամէր և Ահաւան Մամիկոնեան, յորժամ պատուիրէր Ազգարայ յարմարել զգիր իւր՝ իբրև զչարայարութիւն Փաւստոսի՝ Արպ-

1) Библ. Оч. Арм. Ист. Лит. К. II. Пам-
какова. СПб. 1879.

2) Խոր Պատմ. Ա. շի Պարսից առասպել-
եաց: ՏԵՍ և յ'Բ, 63:

լուծեանց, (որ գեղեցիկ իմն ներքող և մեծագին յիշատակա-
րան սոհմին Մամիկոնէից համարիւր), — խոյս աալով՝ յորոց
այլում նպատակի ծառայէին և կամ թերի իմն պատմէին մա-
տենագիրք:

Այսորիկ վասն ահա՛ պէտք էին Աղարայ 'ի բաց թող-
լոյ զԼորենացի, որոյ այլ իմն էր հայեցողութիւն 'ի Պատ-
մութիւնն, մանաւանդ զի սակաւս աւանդէր նա զգործոց
քաջութեան ազգին Մամիկոնէից, — առաւել յօժարու-
թեամբ յիշատակելով զնոցուն նախանձորդաց՝ զԱղբա-
տունեաց մեծագործութիւնն:

Այսորիկ վասն ահա՛ պէտք էին Աղարայ 'ի մոռացօնս
արկանելոյ և՛ զԱղիշէ, որ թերևս ոչ այնպէս շօշափելի և լիա-
մասն էր կենդանագրեալ զփառս և զպարծանս Մամիկո-
նէից՝ — զՄեծն Աարդան, ևս և զմասնակցութիւն 'ի մե-
ծի պատերազմին հօր Մեկենասայ իւրոյ՝ Հմայեկայ և մեր-
ձաւորաց ազգին Մամիկոնէից՝ Աամնարականաց, — որպէս
Ահանայ էին կամք: — Չամկնայն զանցառութիւնսդ և
զթերութիւնսդ երկոցունց մատենադրացս, որպէս և զպատ-
մութիւնն Հայոց յաւարամանէ Փաւստոսի մինչ ցպատե-
րազմն Աարդանանց, ունէր լցուցանել Արրորդ կոչեցեալ
պատմութիւն Հայոց Աղարայ Փարպեցւոյ:

Աթէ զիւրդ 'ի կատար էած զայս Աղար և յորչափս
յաջողեցաւ նմա՝ թերևս նպատակաւ իմն 'ի մոռացօնս մատ-
նելով զերկոսին հանձարեղ մատենագիրս՝ նոցունց վաստակոց
փոխանակ զիւրն մատուցանել յառաջ, — վաղ ուրեմն կտես
ընթերցողն:

«ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» .

Վ Ա Ս Ն Վ Ա Հ Ա Ն Ա Յ Ե Ի Հ Ա Ց Ո Ց Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ի Ն :

Վարեորո-նիան ինքնուրոյն ճառին Ղազարայ Պարճո-նիան: — Սերդ կապակցու-
նիան հանգանակայ՝ որ 'ի միջի Վարդանանց և Վահանանց պարերազնայ: — Հար-
ցաախրական հարածք 'ի «Վահանանց Պարերազնին» . Երկնակի ինչ յարեմաքանու-
նիանց Վահանայ Մասիննէնոյ: — Լեզու և ոճ Ղազարայ Պարճո-նիան: — Վա-
հանանց պարերազն. ուրայեալ նախարար և Գիւր կախողիկոս: — Վահան Մա-
սիննէան և ապարաճքո-նիան Հայոց: — Վեցեքին ճակարտ Հայոց ընդդէմ Պար-
սից: — Մահ Պերոյի 'ի Հեթմարայ. խաբարելն Վաղարշու և հաշտո-նիան ընդ
Հայոց: — Նիւոր և պայճանտ Հայոց դաշանց: — Վահան Մասիննէան — Մարզպան:
Եմէ Երբ գրեայ Ղազար զՊարճո-նիան իւր:

ՅԱՅՍ վայր ճառէաք զայնմ մասնէ Պատմութեան Ղա-
զարայ ('ի բաժանմանէ Հայոց յերկուս՝ մինչ ցվախճան պա-
տերազմին Վարդանանց), զոր չէր մարթ ինքնուրոյն իմն
կամ անկախ համարել զորճ. այսինքն է, թէ զբուռազսօ վայ-
դոսիկ գրեալ է Ղազար յայլոց մատենադրաց քաղելով զը-
վանդակ 'նիւթն՝ առանց աւանդելոյ նոր ինչ և կամ
նոցուն անճանօթ տեղեկութիւնս: Առ այսու ամե-
նայնիւ այս մասն «Երրորդ Պատմութեան Հայոց» յոյժ
կարևոր է վասն մերոյս Վարդութեան պատմութեան, — որ-
պէս տեսցուք 'ի ստորև:

Քան զայս կարևորագոյն իցէ վասն Պատմագրութեան
երկրորդ մասն Ղազարայ մատենին — այն է՝ պատերազմն

Ահա՛նանց, յորում նա ինքնակայ և անկախ հանդիսանայ պատմագիր, ազատ 'ի թերութեանցն, զորոց 'ի վեր անդր յիշեցաք: Աարևորութիւն այսր մասին առաւել ևս բացայայտ երևեսցի, յորժամ միտ դիցուք սերտ կապակցութեան հանդամանաց, որ 'ի միջի Աարդանանց և Ահա՛նանց պատերազմաց:

Ըստ իս՝ «Աարդանանց և Հայոց պատերազմն» Նդիշեայ՝ իբրև զինուորեալ իմն բողոք համօրէն ազգի ընդդէմ բռնութեան՝ Աարսից, թերի և անմեկին լինէր տակաւին առանց Ազգարայ Պատմութեան. այս սկիզբն է մեծի իրիք բանագործութեան ¹⁾, որոց բնական և անհրաժեշտ իմն շարայարութիւն և վախճան Ահա՛նանցն է պատերազմ. թող զի ամք իբր երեսուն իցին անցեալ 'ի միջի երկոցունց պատերազմացդ:

Մարտն Աւարայրի, ուր անկաւ քաջն 'ի քաջաց Հայոց՝ բնաւ իսկ ոչ վճարեաց զինուորան, որք առիթ լեալ էին մեծի պատերազմին՝ այն է — զխղճի մտաց ազատութիւնն: Կրնդիրքս այսոքիկ չվճարեցան և յայնժամ, յորժամ Պերոզ զականաւոր նախարարս մեր՝ զինի երկարս մաշկոյ 'ի դերութեան անդ, արձակէր 'ի Հայս: Ազատութիւնն խղճի մտաց այսու դարձեալ չեղև ծանուցեալ 'ի Պարսից. արձակումն նախարարաց շնորհ ինչ էր, զոր արար Արեաց արքայն ծառայից իւրոց՝ թերևս դէպ ժամու պատահեալ: Հայք ոչ էին վստահացեալ հաւաստեալ, եթէ 'ի վաղիւն իսկ ոչ կարանաւորեսցին «ուխտապահ» նախարարք իւրեանց և ոչ բացցին ատրուշանք յաշխարհին անդ՝ վասն բռնի տարածելոյ զՎէնիմազդէզն, — որպէս և եղև իսկ: Պարաւականս ²⁾, զառհաւատչեայս պարտ էր նոցա բերել 'ի ձեռս այնու դիամամբ, եթէ երբէք ոչ ևս կրկնեսցին 'ի վերայ իւրեանց նոյն չարիք և բռնութիւնք: Պարտ էր նոցա՝ ոչ իբրև ծառայից ոմանց

1) Drame.

2) Garantie.

զողորմութիւնս հայցել և զթողութիւնս, այլ իբրև ազատ և ինքնագլուխ արանց զինու զօրութեամբ կռիլ զգաշն ընդ նմին իսկ Արքային Պարսից — «որպէս օրէնքն են թագաւորաց՝ զրով և կնքով»: — Հայոց յայսպիսի խորհրդոց յուզեալ՝ ճշգիւ երեսուն ամօք զինի մարտին Աւարայրի՝ դարձեալ զինեցան ընդ առաջնորդութեամբ Վաջին Ասհանայ և չեղեն զինաթափ, մինչ ոչ ընկալան զցանկալին գրաւական: Յայնժամ Արքայից արքայն ոչ իբրև առ ծառայս իւր, այլ իբրև առ անկախ յողթականս՝ բանադնաց լինի ընդ սպարապետին Հայոց և լիապէս ընդունի զպայմանս նոցա «զրով և կնքով»¹⁾:

Ահաւասիկ ո՛րքէ ստոյգ իմն վախճան պատերազմին Աւարդանանց և սովին հանդերձ՝ նոյն իսկ Ասհանանցն կոչեցեալ պատերազմ, զորոյ զպատմութիւն լիաման և ճարտարագիր Փարպեցոյ միայն եմք պարտական որ և նորին փառք են արժանապէս:

Բաց յընդհանուր կարևորութենէդ՝ երկրորդ մասն Աւարայ Պատմութեան զեղուն է և այլ հետաքրքիր պարագայիւք: Գրեցեալ ըստ հրամանի նորին իսկ դիւցազին պատերազմի՝ դուն ուրեք թերևս և նորին թելադրութեամբ, «պատերազմն Ասհանանց» ամփոփէ յինքեան կարևոր տեղեկութիւնս մանաւանդ զքաղաքական հանգամանաց ժամանակին: Յայսմանէ և եթ ՚ի միտ առնումք զթշուառ վիճակն Հայոց և զանհնարին չարութիւնս ուրացեալ նախարարաց «մոխրասիրաց»: Յայսմանէ տեղեկանամք բուն պատճառաց սպտամբութեան Հայոց և արիւնասեղ մարտից և ճակատուց, զորս մղէին Հայք՝ կալեալ ՚ի բռին զողի՝ զերաւունս ինդրելով: Այսու և եթ իմանամք զստոյգ պայմանաց դաշին՝ որ ՚ի միջի Պարսից և Հայոց կռեցաւ, և զրով

1) Պատմ. Նազ. յէջ 533:

և կնքով հաստատեցաւ 'ի թագաւորէն: Աւ զայս ամենայն՝
քանզի 'ի ձև ճառից է յօրինեալ Վաղար զՊատմութիւն
իւր, գողցեա կենդանի իմն բարբառով խօսին յունկս մեր նո-
քին իսկ դիւցազունք պատերազմին:

Մհալտաթիկ օրինակ իմն, թէ որպէս յաջող բացատրէ Վա-
հան զքաղաքական կարևորութիւն իւրաքանչիւրոյն 'ի սահ-
մանակից ազգաց Հայոց աշխարհին, յորժամ նախարարաց՝ 'ի
նոսա յուսացեալ աիրապէս՝ խորհէին նիւթէին ապատամբիլ
'ի Պարսից. «...Միտքանել խորհրդոյդ, պատասխանի առ-
նէ 1) քաջն Մամիկոնեան նախարարաց, — զոր դուքդ խոր-
հիք և սակ ձեզ՝ թէ լաւ է իմաստդ և արարէք, ոչ կա-
րեմ սակ և չիշխեմ. վասն զի զԱրեաց ոյժն և ստամբակու-
թիւնն քաջ դիտեմ, և զՀոռոմոց թուլութիւնն և զխարէու-
թիւնն և՛ ձեր ծանուցեալ է փորձիւ 2), թէ որպէս հա-
րանց մերոց ուխտեցին (Հոռոմք) երգմամբ և ստեցին: Աւ
վասն Վրաց արքայի և Հոնաց՝ զորս սակք, Վիրք առանձին
թիթե ինչ աշխարհ են և այրուծիով սակաւաւորք. բայց
վասն Հոնաց, ո՞ն զխաաց, հաւանին դալ թէ ոչ, որք չենն 'ի
միջի և չերւին: Վայց քան զամենայն ևս առաւել՝ յանձանց
երկերուք, վասն զի մարդիկ սուտք էք և անխտասէք...»:

Նոյնպէս մեծաւ իմաստութեամբ մեկնէ Վահան զպատ-

1) Պատմ. Նագ. յէջ 362:—Չայս և պա-
մենայն զառաջիկայ հաստատոյ յառաջ բե-
րեմք սեպհական բանիւք Նազարայ, վարկա-
նելով, զի՝ բաց 'ի դեղեցիկ իմն ստեղծարա-
նութեանց՝ և՛ ըստ ոճոյն օրինակ կարիցեն
համարիլ այդոքիկ պարզ և ընտիր հայկա-
բանութեան:

2) Մեր այսպէս ընթեռնութիւն զտպագի-
րին. «...և զձեր ծանուցեալ է փորձիւ իՏ,
թէ...», — զոր աղճատեալ համարիմք լինել
'ի պիտակարար մուծելոյ զնախորին (զձեր)
և իՏ գերանուանն: Աստ՝ յիշեալ Վա-

հանայ զՀոռոմոց խարէութիւնն՝ յարե
զկնի, թէ և՛ դուք, նախարարեանդ Հայոց,
փորձիւ ճանաչէք գնոցին խորգախութիւն
(և՛ ձեր ծանուցեալ է փորձիւ). քանզի ոչ
դամ մի հարանց մերոց ուխտեցին երգմամբ
գորավիզն լինել ընդդէմ Պարսից և ստեցին:
— Իսկ եթէ գնապուք զհեա ընթերցուա-
ծոյն՝ որ 'ի տպագրին անդ, յայնժամ հար-
կիմք զակնարկեալն 'ի Վահանայ զխարե-
ութիւն զոյդ ընդ Հոռոմոց՝ ընծայել և՛
Հայոց, որ կարի անդեպ իցէ, որպէս այս սե-
տանի և՛ յառաջիկայ բանից Վարապետին:

ճառս սպասամբութեան Հայոց առաջի զօրավարին Պարսից՝ Միհրանայ, որ բանագնաց լինէր առ ՚ի խօսել զհաշտութիւն: Բան զբազումս ՚ի պատճառաց կորստաբեր համարեալ Վահանայ զքսու բանաարկութիւնն՝ որում մտադիւր իմն գնէին ունին ՚ի Վուռն Տիղբոնի, այսպէս յարմարէ զբան իւր. «...Արեաց տէր որ լինի՝ արդար աչօք պիտի նայել յամենայն մարդ՝ իբրև զթաղաւոր, և արդարապէս տեսանել և արդարապէս լսել, ըստ արժանի թաղաւորի: Կայց այր թաղաւոր, որ ուղիղ աչօք հայի ՚ի ծառայս, և ուղիղ լսողութեամբ չսէ ուրուք բանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի և ոչ ըստ արժանի իրաւանց քննութեան. այլ առաւել ևս որ կարի դժնդակագոյն է և աշխարհի կորստեան պատճառ, և հանապաղ զայն առնէ, և կամի տեսանել այլոյ աչօք և լսել այլոյ ականջօք, ծանր է ծառայութիւնն այն և դառն, և վտանգ որում ոչ ոք կարէ կալ առաջի»¹⁾:

Յետ այսորիկ անցանէ Վահան յուրացութիւնն ՚ի հաւատոց, որ միակ հնար լեալ էր ժամուն անցարուչ և հացկատակ արանց բարձի և պատուոյ տիրանալոյ որ և հաւասարապէս վնասաբեր էր եթէ Հայոց և եթէ Պարսից:— «Արդ՝ Հայոց աշխարհս որպիսի մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցոյց ինձ այր մի յայնպիսի աշխարհի՝ որ թէ առաւելաւ թաղաւորութեամբ՝ արժանապէս հասեալ ՚ի տանուտէրութիւն. այլ որեար աւազակ և անպիտան, հացկատակք և վատտոհմիկ, որ դան զայնպիսի մեծ թաղաւորութիւն խաբեն, և ընդ կրակի՝ վատս գնեն և տէրութիւն. և ՚ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միղեն ՚ի կրակն և յանթեղ զազբ իւրեանց արկանեն, և վաճառականն և զվաճառն ՚ի միասին թշնամանեն: Աւ այլ լաւութիւնն և քաջութիւն և միտք և գիտութիւն՝ որով աշխարհ շինի և միջի լինի, այն չինդրի և

1) Պատմ. Նաղ. յէջս 415—416:

արհամարհեալ է, այլ անպիտան և վատտոհմակ մարդկան պատրոզութիւնն 'ի մէջ անցեալ՝ յարդի և դուք առ ճանաչող ունիք զձեզ: Առեալ է քո, որ Միհրանդ ես, և ամենայն Պարսից՝ զբանս զայս յԱրեաց տեառնէն 'ի Պերոզէ՝ առաջի յամենեցունց յասննի. թէ՛ » Այր վատ և գունդ անպիտան Ասորի է, բայց քան զԱսորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անպիտան «:—Աւ ոչ արբեօք լաւ էր մահ, քան զայն լուր յայնպիսի թաղաւորէ»¹⁾:

Մանաւանդ ազգու իմն է և վճիռ վերջ 'ի վերոյ բերեալ ատենաբանութեան Ահաճանայ. իմաստութիւն քաղաքագէտ առն զոյգ ընդ հայրենասէր ողբոյն 'ի դուրս ծաւալին աստ պայծառապէս: — «Բայց, դու զոր խօսիսդ, ասէ սպարապեան Հայց առ Միհրան, և արգանք և արեա սունել և հաւանի թաղաւորն նուաճել զմեզ: Աւ նախ քան զամենայն՝ զքրիստոնէութիւն շնորհէ աշխարհիս, և զադտեղի վաճառդ հատանէ յաշխարհէս մերմէ...: Աւ զմարդ ճանաչէք զլաւն և զանպիտան և գործ խնդրէք յիւրաքանչիւր ումեքէ, ոչ կատակաբանութիւն և 'ի գործ հայիք՝ տալ ըստ վաստակոց զհատուցումն և ոչ 'ի լիտեբանութեան խաբէութիւն: Աւ կարէք դրել և կիքել՝ թէ 'ի մերմէ բռնութենէ եղև ձեր յանցումնդ և ոչ 'ի ձեր ստահակելոյ և յանդգնութենէ, և թողուք...: Ապա եթէ նոյնպէս զյեախնան առ լաւն ունիք և լաւն յետ տանիք և աղտեղի մեղաց վաճառէք զիշխանութիւն աշխարհիս...մէք, որ ապստամբեցաք...միայն զմեռանելն եղաք առաջի և նմին պատրաստ եմք...եղուք ըստ աշխարհ և կորիցուք և խնդութեամբ մեռցուք, այլ պարսկի առն երկիր ոչ պաղցուք...»²⁾:

Օկնի քաղաքական հանդամանաց՝ յերկրորդում մասին Պատմութեան Ապղարայ արժանի են մտադրութեան նոյն-

1) Պատմ. Ղազ. յէջս 416—417:

2) Պատմ. Ղազ. յէջս 422—423:

պէս գրաւիչ իմն և կենդանի նկարագիրք արկածից և ճակատուց, թերևս քաղեալք ուղղակի 'ի շրթանց որոց մասնակիցք էին պատերազմաց անձինք: — Սուղ իմն սահման քննութեանս չթողացուցանէ օրինակս բերել 'ի մէջ սակայն շատ իցէ ընթերցողին վերծանել զորօրինակ՝ — զլրտեսելն Վասակայ՝ սեպհի Մամիկոնենոյ զբանակն Պարսից, որ 'ի Առուակս և 'ի Վարազկերտ ¹⁾, կամ զթշնամարար պատահումս Անձեացի, Մոկացի և Արուանթունի իշխանաց Հայոց ²⁾, կամ զճակատն՝ Ներսէհապատու ³⁾, կամ զքաջութիւնն նորին իսկ Վասակայ և Աամսարականին՝ Ներսէհի 'ի դաշտին Ճարմայանու ⁴⁾ և կամ զհանդիսաւոր մուտս Վահանայ 'ի բանակն Պարսից ⁵⁾, — զի հաւանիցի, եթէ քանի բնական, քանի կենդանի և վառիվառ պատկերացուցանէ Վազար զամենայն արկածս պատերազմին Վահանանց, հակառակ արուեստեալ և մտացածին իմն նկարագրաց, զորս յառաջնում մասին է՝ տեսանել մերթ ընդ մերթ: Արդարև, դուն ուրիք 'ի նմանութիւնան՝ են և աւելարանութիւնք ⁶⁾ ինչ բայց սակայն յաւէտ ճարտասանական եղանակք կամ ձեք իցին դոքին, առ որս 'Վազար՝ իբրև քաջ ճարտասան, կարի հակամէտ էր ⁷⁾:

1) Պատմ. Ղազ. յէջս 373—376:

2) Պատմ. Ղազ. յէջս 390—398:

3) Պատմ. Ղազ. յէջս 387—389:

4) Պատմ. Ղազ. յէջս 408—411:

5) Պատմ. Ղազ. յէջս 502—504:

6) Hyperbole.

7) Թուելով զկարևորութիւնան ինքնուրոյն մասին Ղազարայ Պատմութեան՝ չհամարիմք յաւելորդս մատնացոյց առնել և՛ զայլ իմն հանգամանս, որ մանաւանդ յայտմ մասին գրաւեն զուշ մեր: Ղազարայ՝ քաջ ծանօթ լեալ տեղագրութեան աշխարհին

Հայոց, բերէ 'ի մէջ զբովանդակ շարս հայոցի անուանց՝ դաշտաց, գիւղօրէից, դաստակերտաց և որ 'ի սոցին սակի, ընդ այսմ և՛ զնոցին դիրս և լիամասն նկարագիրս, յորոց բազումք յայլոց մերոց մատենագրաց չյիշին բնաւ: Ուստի տեսանի, եթէ Պատմութիւն Փարպեցւոյ կարևոր իցէ և վասն տեղագրութեան Հայաստանեայց:—Որպիսի են՝ Ալվար, Արծաթաղբերք, Իու, Եղինդ, Զենակք, Կռուակք, Մկնառինջ, Շիրիմք, Ողին, Որկովի, Որջնահաղ, Վարչակի և այլն:

Աստանօր 'ի դէպ է ճառել առ հասարակ զլեզուոյ և զոճոյ Ազգարայ Պատմութեան:

Նախապէս պարտ իցէ ասել, զի լեզու Պատմութեան բազմօք տարբերի 'ի Թղթոյն լեզուոյ. չէ սա այնպէս վսեմ իմն, փայլուն, ասացուք և՛ ուսողական, որպէս 'ի Թղթին անդ տեսաք: Սակայն 'ի վերայ այսր ամենայնի Պատմութիւնն գրեալ է հարազատ հայկաբանութեամբ—ճոխ, դիւրմբունելի և ակտրժ հանդերձ մանրապատում բացատրութեամբ պարագայից գործոց: Ե՛ն են մանաւանդ 'ի խօսակցութիւնս և ընտանի զրուցատրութիւնք՝ սովորական ասացուածք ժամանակին, որովք առաւել բնական հանդիսանան նկարագիրքն 1): Ար ինչ հասարակ է եթէ՛ Պատմութեան և եթէ՛ Թղթոյն՝ այդ—սովորութիւն իցէ Ազգարայ վկայութիւնս բերել 'ի Վրոց Արբոց և կամ առնել ակնարկութիւնս 'ի մարգարէից և յառաքելոց ասացեալսն, յորոց բազումք նոյնապէս կրկնին յերկոսին երկասիրութիւնս նորին:

Օ կողուն է լեզու Պատմութեան և ճարտասանական ձևօք 2) և նմանութեամբք, և այս՝ յաւէտ յատենաբանութիւնսն, որք դէթ 'ի «Ահանանց Պատերազմին» գրեալ թէ զերրորդ ունին մասն համօրէն բնագրին: Յատենաբանութիւնսրդ մանաւանդ զայ 'ի յայտ կրկնաբանութիւնս Ազգարայ:

1) Աստանօր դիցուք օրինակս ինչ յայսպիսի ընտանի ասացուածոց, յորոց զբազումս է տեսանել զարդիս յաշխարհիկն բարբառ:

—Թողէք 'ի բաց զբաներդ (Պատմ. յէջ 363):

—Ոմանք 'ի Հայ նախարարացն խրատ տուեալ Մարզպանին...ասէին (368):

—Եւ քանզի Վասակ առաջապահ էր այն օր (373):

—Որ բազում զնասս առ իւր իսկ նմանի մարդիկք գործեալ է (426):

—Եւ ճաշակեալ՝ առ ին զհամ (սրոյն) և զարմացան (441):

—Քանզի ամենայն Հայոց գիտելով ասեմք զայս (448):

—Յուսալ 'ի մարդ և կամ պարծեւ մարդով՝ քաւ լեցի (464):

—Քաջի առն քան զլազում ժամս հարանօք կիցեալ՝ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն անձին (507):

—Եւ ոչ կորացեալ մտանէր ընդ գետին (513) և այլն:

2) Figure rhétorique.

Նորա չէ այն ոճն ամփոփ, զոր առ Խորենացւոյ և կամ առ Նդիշեայ տեսանեմք. իբրև ճարտասան՝ յանգայթ բանից իւրոց յափշտակեալ, յաճախ ախորժի Ղաղար սիռել ծաւալել զինասան բանի պերճախօս նմանութեամբք և օրինակօք, — մինչև դուն ուրեք սակաւ ինչ ճապաղի բանն ¹⁾: Հանդերձ սոքիմբք՝ ոչ է պարտ մուանալ, զի Պատմութիւնն զրեալ է առ հասարակ պարզ և դիւրամատոյց իմն ոճով՝ ոչինչ ընդհատ յրնասանի զըուցասարութենէ ²⁾ ժամանակին:

Օ կնի ասացելոցս՝ առ լիակատար իմացումն Ղաղարայ Պատմութեան, պատշաճ համարիմք դնել առաջի և զհամառօտ պարունակութիւն ինքնուրոյն մասին պատմական գործոյ նորա՝ այսինքն է— Ղազանանց Պատերազմի, ՚ի բաց թողլով զառաջնոյ մասինն, որ յայլոց աղբերաց գոլով քաղեալ՝ ըստ վաղագոյն ասացելոցս, չէ այնպէս ստոյգ և լիամասն, (թողից ասել զաղճատմանց բանից), որպէս գոքին աւանդին. ուստի անդէպ և աւելորդ անգամ յայտ վայրի բերիլ ՚ի մէջ: Յայդմ մասնէ ճառեացուք զընդարձակ հատածէ, որ բազմօք արժանի է մտադրութեան. զՊազակայ, աստ, զՏեպլենէ՝ հռչակելոյն ոչ միայն առ Հայս, այլ և առ Յոյնս, որք գործական իմն նպատակաց ծառայեցուցանէին զայն. և յաջողէին իսկ: Նայց թէ որչափ հարազատ՝ կամ լաւ ևս ասել՝ վաւերական իցէ Տեսիլդ, արդարև Մեծին Պազակայ է այդ գործ, թէ յայլոց ոմանց յետ ժամանակի յարմարեալ և ՚ի կարդ Պատմութեան մուծեալ զրաւոր իմն իցէ աւանդութիւն, — զայսմանէ ասացուք ՚ի վերջ քննութեանս. իսկ

¹⁾ Բաց ՚ի ճապաղ բանից՝ է ՚ի տեղիս և այնպիսի ոճ անողորկ, ուր՝ զըրօրինակ ՚ի միում պարբերութեան քանիցս դնի յարաբերական դերանունն և բազում անգամ (երբեմն նաև հնգիցս և վեցիցս) կրկին շաղկապք (մանաւանդ բաղճի-

սական և բացառոցական), յորմէ բանն՝ բաց ՚ի թուլացուցանելոյ զզօրութիւն իւր, անախորժ ևս լինի լեւեաց: (Տես յէջս Պատմ. 359, 424, 172—173, 344—345, 428—429 և այլն):

²⁾ La langue parlée.

այժմ մատիցուք 'ի պարունակութիւն Պատերազմին Աւա-
հանանց:

* * *

Ապաքէն յառաջագրելոցն ծանօթ է, թէ զի՛նչ ինչ պատ-
ճառք էին տժգոհութեան Հայոց 'ի Պարսից, ծանօթ է մեզ
և այն փորձ անյաջող, զոր փորձեցին իմաստուն կաթուղի-
կոսն Վիւտ և այլ հայրենասէր նախարարք ոմանք առ 'ի
դիւրացուցանել զճանր վիճակ աշխարհին: Սակայն Վիւ-
տաւ տակաւին չապառեցաւ դասն ճշմարիտ հայրենասիրաց.
զինի երանելի հայրապետիս էր 'ի Հայս և այլ ոմն, որ թէ-
պէտ և Ասկեհատ էր արքունի և մեծապէս պատուեալ 'ի
Պարսիկ արանց, այլ եղեալ էր զանձն միանգամայն 'ի վերայ
օգտից հայրենի աշխարհին: Աւահան էր այրն այն, որ 'ի
պատճառս գեղեցիկ յատկութեանցն՝ 1) ներդաշնակ իմն 'ի
նմա զուգաւորելոց, գողցես աւանդաբար դրաւեալ էր զսէր
ժողովրդեան առ դիւցադունս Մամիկոնեան ազգի, առ որ
և՛ ուղղեալ էին ակնկալութիւնք տառապեալ աշխարհին 'ի
յիշեալ ժամուն:

«Ներկեալք խամրէին և ծնկեալք թարշամէին դասք ու-
րացող նախարարացն, ասէ պատմագիրն, իբրև տեսանէին
զՄամիկոնեան Աւահան այնպէս երևելի յաճմունս բարւոյ
համակեալ» 2): Ինդրին այնուհետև 'ի վերայ նորա հնարս

1) Թուի թէ 'ի վիպասանաց լեւմք զա-
ռաջիկայ նկարագիր որպիսութեանց Աւ-
հանայ և եղբարց նորին, զոր Նազար աւ-
անդէ. «...Թէպէտև արհամարհեալք էին
(Աահան և եղբարք նորա) առ նախանձու,
սակայն լաւագոյնք էին և երևէին յամե-
նայնի, և ականաւորք 'ի խորհրդի, մտաւորք
և իմաստնադիւտք, 'ի նետաձգութեանն
գեղեցկաձիգք և դիպեցուցողք, յորս՝ թե-

թեւաշարժք և նախասպանք, յերկուց ձե-
ռաց աջողակք, և յամենայն կողմանս ուղ-
ղակիք և շնորհալիցք...: Նոքօք շքեղանա-
յին ընթրիք ամենայն տանուտէրանց Հայոց
նոքօք զարդարէին յամենայն տունս օտարք
և ընտանիք...»: (Պատմ.Նազ.յէջս 337—338):
2) 'ի յետին մատենագրաց մերոց՝ ոճով
իմն ճառերոց զԱահանանց Պատերազմն,
արժանի է ուշագրութեան բանաստեղծա-

պատճառանոց, որով և՛ զնա (որպէս Երբեմն և զՎիւտ) կորուսանել կարացին: Աւստի՝ տեղան հապատէպ բանասարկութիւնք զնմանէ՝ ՚ի Վուռն Տիզբոնի, մինչ զի կոչէ արքայն Պարսից զԱսհան առ ինքն և ՚ի վերայ հասեալ չարամտութեան բանասարկուացն և նորին անպարտութեան, պատանդ առնու զեղբայր նորին՝ զԱարդ և զնա արձակէ ՚ի Հայս մեծաւ պատուով¹⁾ (յամի իբրև 479):

Հաւատարիմ նախարարք, որոց՝ ՚ի ծայր թշուառութեան տեսեալ զաշխարհն, փորձեցին ընդ Վիւտայ առ Յոյնս զիմել և վրիպեցան յակնկալութեանցն, — չվհատէին ՚ի սպառ ՚ի դէպ ժամու առնուլ վրէժս յուրացեալ իշխանաց Հայոց և ամոքել զծանր լուծն Պարսից, որ ծանրագոյնս ճնշէր ՚ի վերայ աշխարհին ՚ի շնորհս այդց իսկ «մոխրասիրաց»: — Ժամն պատեհ ընդ հուպ ելանէր նոցա ընդ առաջ: Աչ կարացեալ Արայ՝ որք նոյնպէս մաշէին ՚ի յայտ և ՚ի գաղտ դարանաց Պարսից, և՛ս տանել անօրինութեանց ուրացեալ բոլեշխին Ասղղենի, սպանանեն զնա և ապատամբին ՚ի Պար-

կան մանրամասնութեամբ Սիմէոն վարդ. Ապարանցի (ի վերջ կոյս ծ.Ը դարու), յորմէ հասեալ է առ մեզ «Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս Պահլաւունեաց զարսի և Մամիկոնեացն սեռի»: — Օրինակ մի դրչազիր մատենիս է ՚ի գրադարանի Լազարեան ձեմարանի, որ՝ առ աղէտի՝ թերի է ՚ի վերջն, իսկ ՚ի մէջ տեղիս բազմօք մնասեալ ՚ի ցեցոյ: — Ա՛չ համարիմք յաւելորդս բերել ՚ի մէջ քանի մի տողս ՚ի վիպասանութենէդ. զորօրինակ՝ յաղագս ուխտազանց նախարարաց Ապարանցի ասէ.

«...Փոխան փառաց եղծականին՝
Չանեղծականն վատնէին.
Փոխան անմուտ արեգականն՝
Մտականինն ձաւնէին.

Փոխան անմահ սուրբ սեղանոյն՝
Դիւականին հաղորդէին:
«... ետ այսորիկ (զկնի մատնելոյ ըզ-
Վիւտ) լարեալ չարին,
Չիւր մեքենայսն բազմագունին.
ՉՄաղխազ միտեալ սլաք նետին
Չդեալ ՚ի ցեղն Մամիկոնին:
Չկայծեալ պատրոյկն ՚ի Ասակէ
Շիջուցանել զայն կամէին.
Չերծեալ որդիսն Հմայեկին
Մատնեալ ՚ի ձեռն Պերոզին:
Տեսին զԱսհան սէգ և պոռկ՝
Ընդ յաջողիլն մախային.
Այնքան զհուրն փքեցին,
Մինչ գրաւարին տոչորեցին...»:

1) Պատմ. Ղազ. յէջս 333—358:

սից՝ Ալախտանդայ առաջնորդութեամբ (յամի 481¹):— 'Ի սմին իսկ ժամանակի արքայն Պարսից Վերող գլխակոր դառնայր 'ի Հոնաց երկրէն՝ զամօթալից եղևալ դաշն ընդ թագաւորի նոցա: Երազել լեալ նորա զապստամբութենէ Ալրաց՝ կոչէ զզօրս հայագունդ Մորուանից 'ի դաշտն Շիրակայ՝ առ 'ի յղել զնոսա ընդդէմ Ալրաց: Ենդէն՝ նախարարք Հայոց հաստատեն զմիտս ապստամբիլ 'ի Պարսից: Եծեն նոքա 'ի հաւանութիւն և զԱլահան Մամիկոնեան՝ միանալ ընդ ինքեանս, որ 'ի սկզբան իմաստուն իմն եղանակաւ զնեղութիւնս ցուցանէր ապստամբութեանս. այն իսկ է՝ զանասուգութիւն օգնականութեան 'ի Յունաց, 'ի Ալրաց և 'ի Հոնաց և մանաւանդ զսովորական անմիաբանութիւն Հայոց: Նախարարք մի ըստ միոջէ երգուին յաւետարանն՝ հաւատարիմ մնալ ուխտին Հայոց ցվերջին շունչ. Ալահան առաջնորդ լինի զօրաց և ապստամբութիւնն հրատարակի առ հասարակ: — Յետ այնորիկ խոյս ետուն յաշխարհէն Հայոց մարզպանն և հաղարապետն Պարսից 'ի կողմանս Ետրպատականի. Դուին՝ քաղաք մարզպանութեան, առաւ 'ի Հայոց զօրաց և հաւանութեամբ նախարարաց կացուցան Սահակ Մազրատունի—մարզպան, իսկ Ալահան Մամիկոնեան՝ սպարապետ:

Մինչ Հայք կազմէին պատրաստէին 'ի պատերազմ՝ է՝ զև առ Վայսրն զգնդէ յղելով և է՝ զև ընդ Ալախտանդայ կռելով դաշն,—յուզմամբ նախարարացն ամբարշտելոց՝ վաղվադակի առաքեն Պարսիկք 'ի վերայ Հայոց դունդ մի Վատչաց՝ արս իբրև 7000: Մայց Հայք՝ թէև սակաւաձեռն զնդաւ, յաջողեցան առ Եկոռի գեղիւն ('ի ստորոտս Մասեաց) հարկանել զթշնամիս, սպանանել զմարզպանն Պարսից, որ առաջ-

1) 'Ի ժամանակագրութեան հետեւեցաք Պատմ. հատ. Բ «Հայք», որ ըստ իս քան ըզհ. Յովսէփ Ա. Գաթրճեան (Տիեզերակ. շատս ստուգագոյն իցէ:

նորդէր Աատչաց և 'ի փախուստ դարձուցանել զամենեսին ¹⁾
(յամի 481):

Չմեռն առաջնիկայ անցանէր 'ի պատրաստութեան, քան-
զի քաջ զիտէին Հայք, եթէ դարնայնի զօրն Վարսից ասպա-
տակ սփռեացէ ընդ աշխարհն ամենայն: Թագաւորն Ալայ
Ալախտանդ՝ ըստ բանի խոստմանցն իւրոց, առաքէր զունդ
մի Հոնաց՝ բայց յՅ00 արանց և եթ. և հուսկ ուրեմն զնոսա
ևս փոյթ պատճառախնդրութեամբ անդրէն առ ինքն կոչէր:

Հրաւէր կարգայր այնուհետև Ասհան առ երևելի և ա-
կանաւոր ազգս նախարարաց Հայոց՝ յորդորելով զնոսա դալ
միանալ յանուն հաւատոյ և «խնդրել զվրէժ եկեղեցւոյ թըշ-
նամանաց»: Ելլ սակաւք էին, որ յայս անգամ միաբանեցան ընդ
Մամիկոնեանա: Եհ և երկիւղ տիրեալ էր 'ի վերայ նախա-
րարաց Հայոց առ հասարակ. «'ի հոգեսպանութենէ մոլեկան
թագաւորին և 'ի կատաղութենէ ամբարշտեալ ժամանակի
իշխանացն, որպէս նապաստակք, այլաբանաբար իմն ասէ
պատմադիրն, 'ի սլացմանէ զիշակեր արծուեաց 'ի ծերպս
վիմաց և կամ 'ի մացառուտ տեղիս մայրեաց զօղեալք՝ թաղ-
չէին»: Իսկ բազմաց 'ի հրապուրանաց անտի Վարսից «մոլո-
րեալ և սայթաքեալ յուղղորդ ճանապարհէն», վաղ ուրեմն
ընդ զօրն նոցա էին հաղորդեալք:—Ասկայն ոչինչ յուսահա-
տէին յայսմանէ Ասհան և Բագրատունին Ասհակ, և լուր
առեալ զգալստենէ զօրուն Վարսից 'ի Հեր և 'ի Չարաւանդ,
ժողովէին զգունդ այրընտիր այլ ուխտակից նախարարօք հան-
դերձ և առաջնորդեալ ջերմեռանդն աղօթիւք յաջորդին
Գիւտայ՝ Արբոյ հայրապետին Յոհանայ Մանդակունւոյ՝ ²⁾

1) Պատմ. Ղազ. յէջս 358—384:

2) Փարպեցի և զկնի նորա ամենայն պատ-
միչք մեր (բաց 'ի Թոմ. Արծրունւոյ), որ-
պէս և ոմանք 'ի Յունաց, յաջորդ Գիւտայ

կաթուղիկոսի յաթոռ քահանայապետու-
թեան միսձայն զՅոհան Մանդակունի
դենն: ԶՄանդակունի ճանաչէ լինել անմի-
ջական յաջորդ Գիւտայ և՛ Յովհաննէս կա-

ելանէին նոցա ընդ առաջ: Վաշտին Արտապուր և զայս նուազ վիճակեալ էր վկայ հանդիսանալ արիւնասհող իմն ճակատու, թէև կարի յաջողագոյն վախճանաւ, քան 30 ամօք առաջ: Առ Ներսէհապատ գեղիւ հանդիպեցան Հայք և Վարսիկք:

Թուղիկոս Պատմագիր (Ժ դարու) 'ի Պատմութեան իւրում, 'ի Քաղուածան, որ յաղագս կաթուղիկոսաց և 'ի Գաւազանագիրս կանոնաց, — Յովհաննէս, ասեմք, կաթուղիկոս, որ անշուշտ քաջ գիտել պարտ էր զստոյդ շարակարգութիւն կաթուղիկոսաց Հայոց՝ ինքեան աւանդելոց յաջորդարար զքահանայապետականն իշխանութիւն: — (Պատմ. Յովհ. Կաթ. 35 յէջ. տպ. 'ի Մուկուա): — Միայն Արծունին Թոմա (նոյնպէս Ժ դարու), որպէս յիշեցաք, այլապէս պատմէ զյաջորդութենէ Գիւտայ՝ կարգելով յետ հայրապետիս զՔրիստափոր ոմն և ապա զՅոհան Մանդակունի: (Պատմ. Թոմ. Արծր. յէջս 91—93. տպ. 'ի Վ. Պօլիս): Աէ՛ անկ տեղոյս ճառել թէ քանի՛ արժանի իցէ հաւատոյ պատմիչն Տանն Արծրունեաց առ հասարակ. իսկ որ ինչ զժամանակաց Վարդանանց և Վահանանց աւանդէ պատերազմաց, այսչափ և եթ կանխեմք յուշ առնել աստանօր, թէ պարտ է մեծազգուշութեամբ ընդունիլ զասացեալն 'ի նմանէ, ըստ որում է՛ զի անճիշտք իցեն տեղեկութիւնք՝ ոչ ստուգեալք յայլոց մատենագրաց, և բազում այն է՛ զի յազգայնոց թուին զրուցաց քողեալ աւանդութիւնք: — Սակայն չհայեցեալ հ. Միքի Չամչեան յարժանահաւատ բանս Ղազարայ Փարպեցւոյ, որ ժամանակակից էր Մանդակունւոյ և սին ևս ծանօթ անձամբ, որպէս և առ ոչինչ համարեալ զվկայութիւնս ամենեցուն պատմագրաց՝ որ զկնի Փարպեցւոյ, — նախադաս համարի զԹոմայի ցուցմունս և նմին համաձայն դնէ 'ի Պատմութեան իւրում զՔրիստափոր (475—480) յաջորդ

Գիւտայ: Զայս շարակարգութիւն ընկալան և՛ այլ բանասերք նորոյ ժամանակի, որպիսի են՝ Ս. Մարտէն, Լանգլուա և այլք: Զստուգութենէ օտարոտի իմն շարակարգութեանս Միսիթարեան պատմագրին՝ ըստ իս՝ չէք պէտք ինչ երկարս վիճաբանելոյ. առ 'ի լուսարանել զխնդիրդ այսչափ միայն բաւական համարիմք յիշել: Հ. Չամչեան գերադաս համարի զԹոմա քան զայլ մատենագիրս մեր (որ ինչ յաղագս Քրիստափորի) կարծեցեալ, եթէ պատմագիրս այս ծաղկեալ էր 'ի հինգերորդ դարու և աչակերտեալ առ ոտս Ս. Եղիշէի, այսինքն է՛ թէ ժամանակակից և ականատես էր յաջորդին Գիւտայ՝ Քրիստափորի, զորմէ նա ինքն աւանդէ մանրամասնաբար: Եւ այս վասն այնորիկ, զի յաւուրս Միսիթարեան պատմագրին տակաւին չէր տեսեալ լոյս բովանդակ պատմական գործ Թոմ. Արծրունւոյ և միայն հատածք ինչ նորին երկասիրութեան ծանօթ էին բանասիրաց: Բայց զկնի հրատարակելոյ (յամի 1852) լիամասն Պատմութեան Տանն Արծրունեաց, յորժամ բացայայտ եղև, թէ Թոմա ոչ միայն 'ի Ե կամ 'ի Զ այլ 'ի Ժ եկաց դարու, — այսու ինքն ըստ ինքեան լուծան հիմունք ցուցման հ. Միքի Չամչեան և ստուգութիւն Թոմայի Արծրունւոյ. ուստի վկայութիւն Ղազարայ և այլոց մատենագրաց կայ մնայ անժխտելի, թող զի 'ի վկայութիւնսդ՝ որ ինչ հային յամս ժամանակաց կաթուղիկոսութեան Գիւտայ և Մանդակունւոյ, շփոթ ինչ իցէ: (Տես 'ի Պատմ. Հայոց հ. Մ. Չամչ. Ա. յէջ 14 և Բ. յէջս 470—472):

յարիւնուռչտ մարտին՝ Հայք թէպէտև 'ի սկզբան տկարանան, բայց յանկարծակի յարձակմանէ Ահաճանայ և նորին նիզակակցաց, խրախուսին յոյժ և յաղթութեամբ վճարին զձակատն՝ զանթիւ բազմութիւն 'ի Պարսից զօրուն դիաթաւալ յերկիր հորձանելով:— Աւրախութիւն 'ի պատճառս յաղթութեան պսակէր նոր իմն աւետաւոր համբաւով. Աարդ՝ եղբայր Ապարապետին, սքանչելի իմն օրինակաւ զերծեալ 'ի կապանացն, դայր հասանէր 'ի Հայս՝ 'ի մեծ խնդութիւն եղբօր և ամենայն մարդկան աշխարհի (յամի 482, ամարայնի 1):

Չև ևս էին հանդուցեալ յաշխատութենէ պատերազմին, այն ինչ հասանէր դեպան 'ի Ախտանդայ՝ որ ըստ դաշանցն օրինաց թիկունս օգնականութեան խնդրէր ընդդէմ զընդին Պարսից: Եւ որպէս զի յօժարութեամբ դայցեն Հայք, քաջալերէր զնոսա Հոն դնդաւ, զորմէ իբրու թէ ինքն առաքեալ է վաղ ուրեմն որոյ և դալստեան աին ունի աւուր աւուր:— Հայք թէև վաստակեալք, թէև անպատրաստք, սակայն գիտէին պաշտել զդաշանցն սրբութիւն, և փութանակի հասանէին առ Ախտանդ, որոյ ոչ կարացեալ Պարսից կալ առաջի, ապաստանեալ էր 'ի լերինս Հայոց: Եւ այց առ այս նուազ ահամայ խարդախութիւն Ախտանդայ վնասէր Հայոց կարի յոյժ. անդադար պատրելով զնոսա մօտալուտ դալստեամբ Հոնաց՝ իջուցանէր ուրեմն զզօրն ողջոյն 'ի լերանց անտի 'ի դաշան Ճարմայանու՝ առ Աուր գետով: Չև ևս անցեալ աւուրս ինչ ժամանէր այսր և զօրավարն Պարսից Միհրան և բանակէր դէմ յանդիման բանակին Հայոց՝ յայնկոյս Աուր գետոյ, մարան անխուսափելի էր. և Հայք 'ի շնորհս Ախտանդայ՝ մեծամեծ վնասս կրէին. քանզի յաւուրն յայնմիկ ընդ բազում քաջս անկանէին

1) Պատմ. Ղազ. յէջս 384—402:

'ի տեղեոջն հրաշալի մարդպանն Սահակ Բագրատունի և քաջարի սեպուհն Մամիկոնէից՝ Վասակ: Ապա հալածական եղեալ Հայոց 'ի զօրացն Պարսից՝ անկանին 'ի Տայս և ապաւինին յամուր տեղիս: Իսկ Միհրանայ զհետ նոցա պնդեալ՝ ջանայ «կամ ունել զՎահան հնարիւք և կամ հաւանեցուցանել և նուաճել»:— Մինչ 'ի գետոյն Վու (գաւառին Բասենոյ) բանակցութիւն սկսանէր 'ի միջն Պարսից և Հայոց առ խաղաղութեամբ վճարել զգործ ապստամբութեան, — յանկարծակի դեսպան հասանէր առ Միհրան և ստիպով 'ի Վուսն կոչէր զնա ¹⁾:

Աշնայնի՝ յամի 482 դառնայր Վահան յԱյրարատ գաւառ և զինի ուխտից և պատարագաց 'ի Վաթուղիկէ եկեղեցւոջ Վաղարշապատու, երթայր ձմերել յԱստանին իւր՝ 'ի Վուսն:

Մեծաւ փութով և ստուար զօրու կազմէին հանդերձէին Պարսիկք ընդդէմ Հայոց: Վահանայ չէր անցայտ ինչ այս պատրաստութիւն. բայց խաբէութեամբ շաղաւաշուրթն և չարամիտ արանց ոմանց տակաւին 'ի վերջ կոյս ձմերան այրընտիր գունդն Հայոց գնայր 'ի սահմանս Վրաց: Չայս դիտացեալ ուխտազանց նախարարաց՝ զգացուցանեն զօրավարին Պարսից Չառմիհր Հաղարաւուխտայ, ձեպեցուցանելով զալ հասանել 'ի վերայ Հայոց, այն ինչ Վահան լոկ թուով նախարարօք և սակաւ այրուծիով յամէր յԱստանին անդ: Աւստի գարնայնի (յամի 483) անսկիւսեալ իմն և յանկարծուստ զօրավարն Պարսից անցանէ ընդ Երասխ առ Երտաշատաւ և ժամանէ մերձ 'ի Վուսն:

Տեսեալ Վահանայ, եթէ անմարթ իցէ ինքեան սակաւութիւ այրուծիով ձակաս յօրինել ընդդէմ ծովացեալ զօրուն Պարսից, բայց և ոչ կամեցեալ առանց վնասս ինչ գործելոյ՝

1) Պատմ. Նաղ. յէջ 402—423:

տալ նոցա տեղի,—բաժանէր զգունդն 'ի մի մի և յերկուս նախարարս: Աւ յարձակեալ նոցա յանկարծակի 'ի վերայ գնդաց Պարսից՝ բազում արս ընտիրս յերկիր արկանէին զխտապաստ և իւրեանց դարձուցեալ զերասանակա երիվարացն՝ դնային 'ի բաց քաջաբար. «վասն զի և քաջաբար փախուստ առն հզօրի, նկատէ աստ պատմագիրն, սաստիկ ահ երկիւղի դուշակէ առ միւսանդամ գործ թշնամեացն դնդի»:—Հայք խոյս տան 'ի լերինս՝ ախտեաց. Հազարաւուխտ ջերմութեամբ իմն պնդէ զհեռ և բազում աւեր և կոտորած առնէ ընդ չուելն. կամ ձերբակալս առնել զԱւահան և կամ սպանանել զնա պատերազմաւ,—այս և եթ էին կամք նորին: Այրիպեալ նորա ըմբռնել զքաջն Մամիկոնեան 'ի Շաղաղոմք դաւառի՝ իջանի 'ի Ռասեան՝ 'ի դաշտն Արծաթաղբերք: Աստ ուրեմն զեսպան հասանէր առ նա 'ի Վրանէ հրովարտակաւ, յորում գրեալ էր թագաւորին Պերոզն՝ երթալ 'ի Այրս ընդ դէմ Ախտանդայ, և 'ի Հայս թողուլ գնդաւ մարդպան ըղճապուհ:

Շապուհ ևս՝ մանաւանդ զբղմամբ և աջակցութեամբ ուխտանկնդն Վդիհոնի Սիւնւոյ՝ որ ընդ կալուածոց Աւարազվաղանայ¹⁾ իբրև պայազատ նորա՝ գողցեա և զհոգի նորին ամբարիշտ էր ժառանգեալ,—փոյթ անձին կալաւ 'ի բուռն հարկանել զԱւահան: Սակայն ամենայն ջանք նոցա 'ի դերև ելանէին: Աւահան՝ թէպէտև սակաւ արամբք չորիւր (առ ծաղիկ զեղիւ՝ Հաշտենից, առ Արծաթեալ՝ Վարնոյ, առ Արեզն և Շտեայ դիւղօք՝ Արշամունեաց) քաջաբար զգիմի հարկանէր թշնամեաց, մինչև 'ի վերջին կռիւն անկաւ ուրացեալն Վդիհոն և ցրուեցաւ գունդն Սիւնեաց:—'Ի մեծի

¹⁾ Աւարազվաղանս այս, որ փեայ էր եղև առիթ մեծի պատերազմին Վարդա- ուրացելոյն Վասակայ Սիւնւոյ, ըստ Ղա- նանց: (Չամանէ տե՛ս 'ի Պատմ. Ղազարէջս զարայ գործեաց բազում շարութիւնս և 107, 111, 113 և այլն):

տազնապի էր յայնժամ Շապուհ, մի՛ գուցէ Վահանայ 'ի Հաշտենից (ուր ազգականք նորա էին) և յայլ մերձաւոր տեղեաց թիկունս օգնականութեան առեալ՝ յարձակեացի 'ի վերայ նուազեալ բանակին իւրոյ: Աւստի յետս նահանջէր 'ի միջոց աշխարհին, կամեցեալ ստուարացուցանել զզօր իւր՝ առ 'ի կրկին դիպմունս ընդ սպարապետին Հայոց: Բայց չև ևս հասեալ յԱլվարն դիւղ՝ (դաւառին Բասենոյ) առնու զգոյժ պարտութեան և սպանման Պերոզի 'ի Հեփթաղացն. վասն որոյ թողեալ զամենայն՝ աճապարէ հասանել 'ի Պարսս՝ 'ի խորհուրդ և յընտրութիւն նորոյ արքայի:

Երրորդ անգամ դարձ առնէր Վահան ուխտապահ նախարարօք 'ի Վաղարշապատ ¹⁾ և զկնի սովորական ուխտից՝ երթայր 'ի Նուին, ուր և կայր մնայր ելից գործոյն 'ի Նըրանէն Տիզբոնի ²⁾ (յամի 483):

Հաւանութեամբ աւազանւոյն Արեաց՝ թագաւոր կարգի 'ի վերայ Պարսից եղբայր Պերոզի «հեզն և բարերարն» Վաղարշ ³⁾: Աչ 'ի Հեփթաղաց հասեալ անհնարին մնասք, ոչ 'ի Պերոզի որդւոյ՝ Չարեհէ յարուցեալ ապստամբութիւնն և ոչ անձուկ իմն վիճակ աշխարհին, — չտային թոյլ «աշխար-

1) Ջդարձէն Վահանայ 'ի Վաղարշապատ այսպէս աւանդէ վիպասանաբար առաջադրեալն Ապարանցի.

«... Գարնանաբեր հողմոյն հնչեալ Բուրաստանացն ծաղկէին.

Ձայն տաարակին մեզ աւետէր՝

Ահաւասիկ ձմեռն անցին:

Երամք թռչնոց թափառնացեալ՝

Իւրաքանչիւր տուն խնդրէին.

Ձի Վահանայ հանդերձ գնդաւն

Վաղարշապատ քաղաքն եկին.

Հիմնարկեցին զՎաթուղիկէն,

ՁՊարսից քակտեալն նորոգեցին...»:

2) Պատմ. Ղազ. յէջ 430—480:

3) Ահանաւոր յոյն մատենագիրն Պրոպիոս (Ջ դարու), որ քան զՓարսեցի լիաման պատմէ զպատերազմն Պերոզի ընդդէմ Հեփթաղաց և զնորին մահ անակնկալ — զկնի Պերոզի՝ իբրև յաջորդ՝ դնէ զորդի նորին — զՎաւատ (Καβάδος) ամս երկուս, ապա զՎաղարշ (Βλάσις) ամս չորս և վերստին զնոյն իսկ Վաւատ: (Procop. Bel. Pers. Lib. I, c. IV): Ըիտթեալ տեսանի առնուն յաջորդին Պերոզի և՛ առ մերոյս Սերէոսի (Ե դարու), որ նոյնպէս զՎաւատ դնէ զկնի նորա. իսկ զՎաղարշէ չտիշէ և ոչինչ: (Սերէոս, յէջ 25, հրատ. Բ. Պատկանեան, 'ի Ս. Պ. Բ. 1879): — Բայց սակայն վկայու-

հաշէն» Ասղարշու ընթանալ զհետ աշխարհակորոյս քաղաքավարութեան անձնահաճն Վերոյի առ Հայս, առաւել ևս՝ արհամարհել զընտիր այրուձին Հայց, որ 'ի ժամուն մեծ իմն վաստակս կարէր վաստակել նմա: Աւ յիրաւի գարնայնի՝ յամի 484, առաքէ Ասղարշ 'ի Հայս զՆիխորոմն՝ զայր հեզ և մտացի, զի «որ ինչ օրինակաւ և է՝ ամենայն քաղցրութեամբ և սիրով ըստ կամացն Ասհանայ և նորուն ընկերակցացն նուաճեալ զորեարն՝ Նրեաց յաճեացէ՝ ի ծառայութիւնն»:— Տեղեկացեալ Ասհանայ 'ի ձեռն պատգամաւորաց Նիխորոյ զերացն դաշտեան նորա 'ի Հայս, որպէս և զխաղաղական հրովարտակէ Ասղարշու, ժողովէ առ ինքն զհաւատարիմ նախարարս և աղաոտ աշխարհին և միահամուռ հաւանութեամբ առաքէ առ զօրավարն Պարսից զերեսին պայմանս զայստսիկ.

ա) Օհայրենի և զընիկ օրէնս աղաոտ թողուլ, զհայ այր՝ մոգ չառնել, յաղաղս մոզութեան դահ և պատիւ չտալ, ատրուշանն յաշխարհէն Հայոց 'ի բաց տանել:

բ) Տոհմիկ արանց և աղաոտաց թողուլ ըստ հայրենի օրինակին, զվաստակաւորան և զանվաստական զիտել իրաւարար և զարդուրացն կամ զանարդան ոչ եթէ յառաջ մատուցանել, այլ և 'ի հրապարակէ ևս հալածել:

գ) Տեառն Նրեաց՝ բանից սուտակասարասաց և բանոր-

թիւնքդ, որ հակառակ ելանեն բանից Ղազարայ, մի՛ պղտորեսցեն զմիտս ընթերցողին. մարթիցէ առ ոչինչ համարել զայնս. նախ այնու՝ զի Ղազար ժամանակակից էր Ասղարշու, ուստի և քաջածանօթ աւուան նախորդի նորին. և ապա՝ է՝ առ Յոյնս և այլ մատենագիր՝ Ագաթիաս (նոյնպէս Զ դարու), որ՝ թէև զմահուանէ Պերոզի յար և նման Պրոկոպեայ աւանդէ. սակայն զյաջորդէ արքայիս ընաւ տարբերի

'ի նմանէ, համաձայն կարգերով ցուցման Ղազարայ: Իսկ վկայութիւն Ագաթեայ արժանի իցէ հաւատոյ. վասն զի զչարակարգութիւն թագաւորացն Պարսից, որպէս յայտ է, հանեալ էր 'ի դիւանաց նոցին (ἐκ τῶν βασιλικῶν ἀπομνημονευμάτων) 'ի ձեռն Սարգսի ուրումն երևելի թարգմանչի: (Agathias, IV, 27 et 30, p. 273—274, Bonn)— Տես և 'ի Ռուսերէն թարգմ. Պրոկոպեայ, յէջս 38 և 47, 'ի Ս.Պ.Բ. 1876:

սակաց ունին չդնել, այլ իւրովք աջօք տեսանել և իւրովք ա-
կանջօք լսել և ապա դատ առնել զամենայն:

Մ.յս «երեքին իրք» էին, զորս եթէ առնուին Պարսիկք
յանձն, խոստանային Հայք հպատակել նոցա՝ իբրև զհաւա-
տարիմ ծառայս. և եթէ ոչ հաւանէին և խոստանային, ապա
եղևալ էին 'ի մտի հաստատապէս՝ ելանել ըստ աշխարհ
և կորնչել և խնդութեամբ մեռանել, այլ պարսկի առն
երկիր ոչ պաղանել:

Հաճ և հաւան լինէր 'Նիխոր լիապէս՝ իմացեալ զպայմա-
նաց Հայոց և անդէն իսկ նամակաւ հայցէր տեսանել զՎա-
հան առ 'ի կուել զդաշն ընդ նմա: Յայնժամ սպարապետն
Հայոց բազում այրուծիով երթայ 'ի բանակն Պարսից և
ըստ առաջագրեւոցն պայմանաց՝ դնի դաշն խաղաղութեան,
զոր ինքն արքայն Վաղարշ հաստատելոց էր ապա «զրով
և կնքով»¹⁾:

Մտէն իսկ պէտք լինէին Վաղարշու օգնութեան այրու-
ծիոյն Հայոց: Ապստամբին Չարէհի զոր բազում ժողովեալ՝
դիմէր 'ի Տիզբոն և սպառնայր դահավէժ առնել զՎաղարշ
և բռնի ունել զաթոռն: Վահան պատեհ ժամ համարեցաւ՝
նախ քան զհաստատութիւն դաշանցն յարքայէն Պարսից,
զամ մի ևս ցուցանել զզօրութիւն զինու Հայոց և այնպէս
եղանել յանդիման նորա. ուստի ըստ խնդրոյ 'Նիխորոյ՝ ըզ-
մանն ինչ այրուծիոյն 'ի ձեռն Վրէնայ Վանանդացւոյ ար-
ձակեաց 'ի վերայ Չարէհի: Ապստամբն արքայորդի հարաւ
'ի դիմի գնդին Հայոց և մասնեալ 'ի պարտութիւն՝ կալաւ
կենդանւոյն և փողոտեցաւ 'ի հրապարակին նման անասնոյ:

Մինչ այս մինչ այն՝ ժողովեալ Վահանայ զայրրնաօր
զունդն այրուծիոյ, ուխտակից նախարարօք հանդերձ դայր
հասանէր 'ի Վուռն Պարսից: Յօժարութեամբ և սիրով ըն-

1) Պատմ. Նաղ. յէջ 481—523:

դունէր Ասղարը զսպարապետն Հայոց և զկնի անձամբ տեղեկանալոյ հանդամանաց ասպատամբութեան նոցա որպէս և անօրէնութեանցն՝ որ ՚ի վերակացուաց Պարսից և յուխտադրութ հայ իշխանաց, — հաստատէր զբով և կնքով զերեսին պայմանս ՚ի վերոյ բերեալ դաշանցն: Եպա՛ տուեալ Ասհանայ զտանուտիրութիւն տոհմին Մամիկոնէից և զսպարապետութիւն ՚ի վերայ Հայոց այրուծիոյն ևս և զտանուտիրութիւն Ամասրականաց՝ ժառանգին այդր տոհմին, արձակէր զնոսա ՚ի Հայս:

Մեծ իմն էր խնդութիւն ՚ի Հայոց աշխարհին, յորժամ դարձ տունէր Ասհան ՚ի հայրենիս փառօք և պատուով՝ բերելով ընդ ինքեան զքանկալի պայմանս դաշանց:

Հուսկ ուրեմն առաքի ՚ի Հայս մարդպան Ենդեկան ոմն՝ «այր մտադիր և իմաստահայեաց»: Աորին ջատադովութեամբ օգտակարագոյն իմն համարեցաւ Վուռն Տիղբոնի յանձն առնել Ասհանայ զոյդ ընդ սպարապետութեան և՛ զմարդպանութիւնն Հայոց, որոյ վանն և հրովարտակ հասանէր ՚ի թագաւորէն առ Ասհան (՚ի վերջ կոյս ամի 484): — Ի պատճառս անկարծելի աւետեացս այսոցիկ առաջի անթիւ բազմութեան ժողովրդոյ զգեղեցիկ իմն և զխնաստալից ատենաստութիւնս առնէր կաթուղիկոսն Յոհան, զոր ամբողջապէս ՚ի մէջ բերելով՝ կնքէր Ասղար զՊատմութիւն իւր ¹⁾:

* * *

Մարթ իցէ ասել հաւաստեալ, եթէ Պատմութիւն Ասղարայ գրեալ է զկնի Թղթոյ նորին՝ որ առ Մամիկոնէից Տէրն Ասհան, թէև ճշդիւ նշանակել զթուականն անձեռնհաս եւք տակաւին:

1) Պատմ. Ղազ. յէջս 524—559:

Ըստ վաղագոյն ասացելոցս՝ յամի 487 ըստանձնէ՝ Վաղար զհոգաբարձութիւն Վաթուղիկէ վանուց և թողու զայն հաւանականաբար՝ ՚ի միջի ամաց 488—490: Ուստի մարթ էր նմա գրել զՊատմութիւնն կամ նախ քան զամն 487՝ մինչ չէր նորա գեռեա ընկալեալ զհոգաբարձութիւնն, կամ առ հոգաբարձութեամբն նորին՝ այսինքն է՝ ՚ի 487 ամէ ց490 և կամ զկնի թողոյ զհոգաբարձութիւնն՝ զկնի 490 ամի: Ասացուք զայսմ ամենայնէ՝ ՚ի մասնաւորի:

Վաղարայ ոչ է գրեալ զՊատմութիւն իւր նախ քան զամն 487. քանզի ՚ի ճառելն իւր յայնմ զյաջորդէն Վիւտայ կաթուղիկոսի՝ զՅոհանայ Մանդակունոյ, որպէս զամ մի ևս յիշեցաք՝ արդէն վախճանեալ համարի գնա: Բսկ հայրապետս այս՝ որպէս յայտ է, փոխեցաւ յաստեացս ՚ի սկզբան ամի 487: Բայ յայտմանէ՝ ընդ հուպ զկնի պատերազմին Վահանանց (484) մինչ ցամն 487 Վաղար ՚ի Սիւնիա և Նղուանա շրջէր՝ ճգնողականա վարելով կեանս, ուստի և անձեռնհաս զստուար իմն շարագրել պատմութիւն:

Յետ այնորիկ անմարթ էր Վաղարայ գրել զպատմական երկ իւր և՛ յաւուրս հոգաբարձութեան իւրոյ, նախ՝ զի այնպիսում գործոյ, որպիսի ինչ է պատմադրութիւնն՝ առաւել պէտք էին խաղաղութեան հոգւոյ, քան որչափ ինչ էրն յայնժամ յամենեցունց հալածելոյն Վաղարայ: Նւ երկրորդ՝ եթէ նա զհարդ և իցէ լինէր գրեալ, — ապա՝ համարձակութեամբ Պաւղոսի մի ըստ միոջէ թուելով՝ ՚ի Թղթին որ առ Վահան՝ անձամբ զանձին զլաւութիւնան, կարէր արդեօք մոռանալ զայնպիսի մեծադին և Վահանայ այնչափ հաճելի զերկասիրութիւնն:

Ուստի՝ պարտ է ընդունիլ, թէ զՊատմութիւն իւր շարագրեաց Վաղար զկնի հոգաբարձութեան իւրոյ, (յաւէտ

զի առ այս ակնարկեն բանք ինչ ¹⁾ Հեղինակի Թղթոյն Յառաջարանի) — այսինքն է՝ ՚ի միջի ամաց 490 և 509: Մինչ ցամն 509 դնեմք և ոչ անազան, վասն զի ՚ի յաջորդ իսկ ամին վախճանեցաւ Աւահան, որ ՚ի դրելն Պատմութեան տակաւին կենդանի էր անտարակոյս:

Հաւանութեան թուի, թէ Ղազար «զԵրրորդ Պատմութիւն Հայոց» դրեաց սակաւ ինչ ամօք զինի վերադարձին իւրոյ յԱմթայ՝ ՚ի վերջին ամս Ե դարու և հազիւ թէ անազան քան զայս:

¹⁾ ...Առաքէ (Ղազար) զգրեալս (ըզ Թուղթն) ՚ի ձեռն բարեսէր մ.ծի և պատուական նախարս ըին՝ Մամիկոնէին Համազասպայ, որ և պատճառ իսկ եղև նմա այսրէն (յԱմթայ) դարձին. զի յաղբերէն գիտութեան նորա արբցին միւս ան-

դամ մարդիկ և պողարերք լիցին Աստուծոյ զարդարութիւն: Ասան որոյ և զերրորդ Պատմութիւնս Հայոց՝ երանելի իմ Ղազար պատմագրեաց: (Յառաջարան Թղթ. յէջ 567):

«ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ».

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՑ:

«ՏԵՍԻԼ» Ս. ՍԱՀԱԿԱՅ:

Կարևորութիւնն Պատճառութեան Փարպեցոց վասն Բայրութեան պատճառութեան — այն է՝ վասն քննութեամբ ուսանելոյ զպարունակութիւնս և զբնագիրս Երկաթրութեանց ոճանց ճարտարագիտոց՝ Ագաթանգեղոս, Փաստասի, Խորենացոց և Եղիշեաց: Ցուցնուի: — «Տեսիլ» Ս. Սահակայ: — Տարայայնութիւնս զՏեսլենին առ Խորենացոց և Ղազարայ: — Մեծն Սահակ չէր հեղինակ «Տեսլան. վայտութիւնս: — «Տեսիլ» զմտի լինել գործ և Ղազարայ: — Առ որոց ճարտարագիտոց՝ ելի է՛ ի Տերոյն և ելի յարդարանոց, յիշի զՏեսլենին: — Հաւանութեան Երեւի, ելի «Տեսիլ» գրեալ է ի Ժ դարոս և ճոճեալ ի կարգ Ղազարայ Պատճառութեան: — Մտանութիւնս ի իջի Տեսլանոց Լուսաւորչի և Ս. Սահակայ: — Մեհնութիւնս:

ԹԵՐԻ լիցի ապաքէն մերս քննութիւն, եթէ ոչ կացուցանեմք յանդիման զկարևորութիւն պատմական դործոյն Փարպեցոց վասն Ազգայնոց Բայրութեան պատմութեան:

Տակաւին ի ճառելն զաղբերաց՝ զխտեցաք, եթէ Ղազարայ զնիւթ առաջնոյ մասին իւրոց Պատմութեան յայլոց քաղեալ մատենադրաց (Ազաթանդեղ, Խորենացի, Եղիշէ և այլք), նորինչ և կամ կարևորս վասն պատմադրութեան ոչ մատակարարէ: Բայց սակայն առ այսու ամենայնիւ մասնա այս յոյժ պիտանի է և նպաստամատոյց վասն քննական ուսման պարունակութեան և բնագրաց՝ ոմանց ի վերոյ զրեալ մատենադրացդ. անթերի՞ իցին արդեօք հասեալ առ մեզ եր-

կասիրութիւնք նոցա և կամ զինչ ինչ փոփոխութիւնս իցէ կրեալ 'ի ժամանակաց մէն մի 'ի մասանց անտի բնադրաց նոցին,—ահաւասիկ երբ օգտակար լինին յոյժ ինչ ինչ ցուցմունք Ղազարայ:

Սկիզբն արասցուք յԵզաթանդեղեայ: 'Ի Պատմութեան սորա հասեալ է առ մեզ հատած ինչ ստուար («Վարդապետութիւն Ս. Գրիգորի առն Եստուծոյ»), զորոյ զկասկածաւոր կամ զանհարազատ ¹⁾ լինելն բաց յայլ ապացուցաց ²⁾, Ղազարայ Պատմութիւն ևս կարէ հաստատել:— 'Ի Յառաջարանի անդ իւրում՝ Ղազար 'ի ճառելն զառաջնոյ պատմագրէ Հայոց՝ զԵզաթանդեղեայ, յերկու և կէս էջս ամփոփելով զպարունակութիւն մատենի նորին՝ 'ի մի և եթ տող ³⁾ ակնարկէ զՎարդապետութենէ Ս. Գրիգորի, որ զարդիս առաւել է, քան զկէս համօրէն Պատմութեան Եզաթանդեղեայ, զորոյ և զպարունակութիւն անշուշտ չէր հնար 'ի մի բովանդակել տող ⁴⁾: Յայսմանէ մարթ իցէ հետեւեցուցանել, թէ ստուարն այն հատած 'ի ժամանակս Փարպեցւոյ տակաւին ոչ էր մուծեալ 'ի Պատմութիւն աջոյ քարտուղարին Տրդատայ:— 'Ի միւսմէ՝ 'ի ձեռն ակնարկութեանց Ղազարայ ⁵⁾, ընդհակառակն դայ 'ի յայտ, թէ «Տեսիլն» Առսաւորչի, որ ընդ նորին «Վարդապետութեան» անհարազատ համարելի է զրութիւն,—զէթ առ պատմագրաւ մերով անցեալ էր արդէն 'ի կարգ Եզաթանդեղեայ Պատմութեան:—Վարձեալ՝ և 'ի վերոյ յիշեալ ամփոփ պարունակութենէ Ղազարայ հնար է ցուցանել զանվաւեր դոյն այլոյ իրիք հատածոյ Եզաթանդեղեայ Պատմութեան՝ երկարապատում (էջք 27) Յառաջարանի նորին («Իղձք ըլ-

1) Apocryphe. 4) 'Ի 663 էջից՝ զ376 ունի բովանդակեալ միայն Վարդապետութիւնն: 2) Տէս Collect. Langlois. I. p. 99—101. 5) Տէս 'ի վեր անդ՝ 'ի Դ գլուխն գրոյս, 3) «...Զյորդորունն յայնմ հետէ վարդապետութեան կենաց»: (Պատմ. Ղազ. յէջ ⁶⁾ յէջ 59:

ձացեալք...»), զորմէ ոչինչ ակնարկէ 'Ղազար որ և յարդիս 'ի քանի մի ձեռագիրս և եթ է տեսանել, մինչ 'ի բազումս՝ չեք և նման ինչ այդմ Յառաջաբանի 1):

'Ի ձեռն 'Ղազարայ մարթ է պարզաբանել և զթիւ 'Ղըպ-րութեանց Փաւստոսի երկասիրութեան, որ սկսեալ դոյով յերրորդ 'Ղպրութենէ՝ փոխանակ առաջնոյ, — առ-իթ լեալ է այնքան տարբեր մեկնութեանց: 'Ն սակաւատող իմն հատածէ, զոր պատմադիր մեր ամբողջապէս առնու 'ի Փաւստոսէ՝ հանդերձ որոշ նշանակօք 'Ղպրութեան և դլխոյ, բացայայտ տեսանի, թէ հասեալն առ մեզ բնագիր 'Նուզանդի 'Պատմութեան՝ դէթ ըստ տրոհման 'Ղպրութեանց 2), նոյն և մի էր, որպէս և յաւուրս Փարպեցւոյ:

'Ի Խորենացւոյ 'Պատմութեան ևս են 'ի ժամանակաց

1) Տես և Coll. Langlois, I, p. 100.

2) Պատմութիւն Ղազ. Փարպեց. յէջ 71:

Անմեկնելի իմն թուի մեզ գլխովին, եթէ ընդէր հ. Վեսարեան 'ի գաղղիական թարգմանութեան 'Ղազարայ Պատմութեան (Collec. Langlois, II, 272) բանս բնագրին՝ զի պատմութեան երկրորդումն լոկ «Histoires և «Ճառին հնգետասաներորդի» — «le treizième (sic) chapitre» թարգմանէ: Նախ մեր գանդառութիւն համարեցաք լինել զայս. սակայն գերապատիւ թարգմանիչն յատկաբար 'ի պատճառս բանից այսոցից ընդարձակ ծանօթութիւնս դնէ 'ի ստորև, այսու իրրութէ կամեցեալ ցուցանել զաղճատմունս Փաւստոսեան բնագրին՝ զկնի 'Ղազարայ եղեալս: Ահաւասիկ են բանք հ. Վեսարեան.

«...Lazare en rappelant le meurtre de Kuel et l'indignation de S. Nersès, dit que cet événement est raconte „dans le treizième chapitre de l'Histoire“. Or, dans les manuscrits de l'Histoire de Faustus et dans les éditions qui ont été publiées d'après les manuscrits, la mort

de Kuel est donnée dans le chapitre „quinzième du livre IV du livre de Faustus“. — Բնագիր 'Ղազարայ Պատմութեան մինչ ցարդ երկիցս միայն տարգրեալ է՝ յամի 1793 և 1873 'ի Վենետիկ, 'ի միակ և եթ գրչագիր օրինակէ: Յերկուսին տարգրութիւնս ևս զհատածէն, որ հանեալ է 'ի Փաւստոսէ, առ պարզ 'ի պարզոյ ըստ գրեցելոց 'ի պատմութեան երկրորդումն, ճառին հընգետասաներորդի» (տպ. 1793 ամի, յէջ 46, տպ. 1873 ամի, յէջ 71): Աինչև ցայժմ ճանօթ երկրորդ գրչագիր օրինակ 'Ղազարայ Պատմութեան, որ գտանի 'ի մատենադարանի Ս. Եջմիածնի օրոյ և զինչ ինչ ընթերցմունս՝ տարբերս 'ի Վենետիկեան բնագրէ, յաղեալ է մեր 'ի բազդատական ցուցակէ գիտնական Պ. Մկ—ի Էմին, — զնոյն և մի ունի ընթերցումս. այն է՝ զի պատմութեան երկրորդումն, ճառին հնգետասաներորդի»: — Եթէ ուստի՝ առեալ է հ. Վեսարեան զիւրն «le treizième chapitre», բնաւ իսկ ոչ գիտեմք, թէպէտև յոյժ ցանկալի է զիտելը

անտի մուճեալ աղճատմունք բնագրին, յորոց ինչ ինչ մարթ է վերստին ուղղագրել Ալազարայ ձեռնառու թեամբ, և այս՝ յատկապէս յայնմ մասին, ուր երկոքին պատմագիրքս 'ի միջէ քաղեն աղբերէ զնիւթ իւրեանց: Օրինակ իմն, որ ինչ յաղագս զիւտի նշանադրաց, որպէս կանխազոյն ասացաք, երկոքին ևս 'ի Նորեան ատնուն պատմութենէ ¹⁾, ուստի առ երեցունց մատենադրացոյ բառ առ բառ կրինի տեսիլ Ա.Մ. Կարոպայ, յորում «երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ գրելով 'ի վերայ վիմի»: Նորին և Ալազար զինի ատղեցս այսոցիկ յաւելուն խիոյն, «զի որպէս 'ի ձեան վերջք գծին ունէր քարն...»: Իսկ 'ի բնագրաց Նորենացւոյ Պատմութեան են ոմանք ²⁾, որք 'ի միջի երկուց այս պարբերութեանց ունին եղեալ՝ «ա, է, է, ը, է, ա, —» — զիօթն ձայնաւոր զիրս, զորս երկոքին նախնիք մատենագիրք չիշեն բնաւ որ և յայն սակս յետ ժամանակի մուճեալ յաւելուածք համարելի են: Աարծիքս այս հաստատի և այնու, զի բազմաթիւ գրչապիր օրինակք նորին իսկ Նորենացւոյ Պատմութեան ոչ ունին զառաջագրեալ զիօթն ձայնաւորս: Գէթ 'ի վնցից գրչագրաց՝ որ 'ի Ալազարու Աննա, 'ի միում և եթ օրինակի դասնի յաւելուածոյ ³⁾:

Քան զայստակ կարևորազոյն իցէ Պատմութիւն Փարպեցւոյ փան բնագրին Նղիշեայ Պատմութեան: Ի շնորհս Թումայի Արծրունւոյ, որ 'ի պատերազմին Ալարզանանց զհարս և իցէ կամի տեսանել մեծագործութիւնս Արծրունի իշխանաց և այն՝ յատուկ Նղիշեայ գրչաւ կենդանագրեալս, — կասկած ինչ յարուցեալ է 'ի մերումս Գարութեան պատմութեան զամբողջութենէ բնագրին Նղիշեայ մատենին: Ա-

1) Նորին. Ստի. Հայկակ. ԺԱ յէջ 10:— թարեանց 1827 և 1865 ամաց:
Խոր. Պատմ. Գ. 53:—Նաղ. Պատ. յէջ 40: 3) Collect. Langlois. T. II, p. 162.
2) Որպէս երկոքին տպագրութիւնք Մխի-

մանք 'ի կարծիս եղևն, թէ 'ի նմանէ հատածք ինչ «որ ինչ վանն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Ասհանայ Արծրունեոյ¹⁾», յապաւեալ իցևն և կամ հանեալ 'ի բաց, ուստի և հասեալ է այն առ մեզ ոչ 'ի սկզբնական գիրս և կերպարանս իւր:—Նայ յանհաւատալի իմն և՛ զըուցախառն ևս լինելոյ ցուցմանց Թոմայի՝ և՛ Ասղար կարէր հաստատել, թէ Ասհան Արծրունի ոմն, զոր իբր թէ նախարարք «խորհեցան թաղաւորեցուցանել... 'ի վերայ Հայոց²⁾» որում և հրաշալիս քաջութեան ընծայէ պատմիչն Արծրունեաց,—հազիւ թէ լեալ էր 'ի Պատերազմին Ասարգանանց, մանաւանդ թէ յիշատակեալ 'ի գիրս եպիսկոպոսին Ամատունեաց, քանզի մանրամասնաբար աւանդելով Ասղարայ զԱսարգանանց պատերազմէն և քայլ առ քայլ հետեւելով Նղիշեաց պատմութեան, բնաւ և բան մի չյիշէ զԱրծրունի իշխանէդ: Թէ քաջածանօթ իրաց Ասարգանանց պատմութեան, թէ մանաւանդ աշակերտ Աղանայ Արծրունեոյ և սան քեռ Աղանայ (և մօր Ասհանայ) Ձուկայ, կրախտագէտն Փարպեցի բնաւ իսկ ոչ կարէր անտես առնել զականաւոր սխրագործութիւնս ազգակցի նոցին (Ասհանայ Արծրունեոյ),—եթէ 'ի պատմութեան Նղիշեաց արդարև ընթերցեալ զնմանէ զայսպիսի ինչ:

Արծարծեալն 'ի Թոմայէ կասկած, որոյ՝ որպէս ասացաք, հազիւ թէ հիմն ինչ իցէ, առ ի թ լեալ է և՛ ս ընդարձակ և կարևոր աղճատմունս կամ կեղծիս ընթադրելոյ Նղիշեաց Պատմութեան, այն իսկ է—կասկածելոյ զվաւերականութենէ³⁾ ընդարձակագունին և գեղեցկագունին 'ի յեղանակաց, Աւթերորդին ստեմ, և համարելոյ զայն ապա ուրեմն յայլոց ոմանց յարմարեալ յաւելուած ինչ: Աթէ ոճ և լեզու Աւթերորդն

1) Թոմ. Արծր. յէջս 84—89:

3) Տե՛ս Collec. Langlois, T. II, p. 180.

2) Թոմ. Արծր. յէջ 89:

յեղանակի շեցին բաւական ածել 'ի հաւանութիւնս զԹերա-
հաւատան, Ապար փարատէ միանդամայն զկասկածի:

Ի վեր անդր յիշեցաք քանիցս, եթէ Ապար զամենայն
մանրամասնութիւնս պատերազմին Աարդանանց ուղղակի
Նդիշեաց քաղէ, և թէպէտ անձանօթ ջանայ ցուցանել
զինքն պատմադրիոյ, սակայն յաճախ առնու 'ի Պատմութիւնէ
'նորին բազում բանս և դարձուածս, անգամ և ամբողջ պար-
բերութիւնս՝ ընդ այսմ զնոյն և մի պահելով զօր և զհետևո-
ղութիւն անցից և իրաց, զորս առ Նդիշեաց գոյ տեսանել:—
Եւ արդ՝ եթէ բաղդատեսցուք զԱւթերորդն յեղանակ ընդ
ԽԲ—ԱԲ հատածնս Ապարայ Պատմութեան, որք ամբող-
ջապէս քաղեալ են յայդ իսկ յեղանակէ, ապա՝ բաց յանթիւ
և ակներև նմանութեանց ¹⁾, զորս յիշատակել մի ըստ միոջէ
շատ աշխատութիւն համարիմք և աւելորդս, — տեսցուք և
զառաջագրեալ յար և նման մանրամասնութիւնս զՆուժիէն ²⁾
և զառաքինի կանանց Հայոց զմիակերպ և զնոյնօրինակ նկա-
րազիր առ երկուց ևս պատմադրաց՝ 'ի վերջին էջս նոցին
գործոց ³⁾:— Յայտնանէ երևի պայծառապէս, զի այսպիսի
ինն բառ առ բառ նմանութեանց յերկասիրութիւնն երկուց
ժամանակակից մատենադրացոյ մարթ էր լինել յայնժամ մի-
այն, եթէ Ապարայ էր 'ի ձեռին անթերի Պատմութիւն
Նդիշեաց՝ հանդերձ Աւթերորդ յեղանակաւ, զոր և զարդիս
ունիմք տեսանել 'ի գիրս մեզու աշուրթն մատենադրիս:

1) Բաղդատես զառաջիկայսդ.

Նազ.	Եղիշ.	Նազ.	Եղիշ.	Նազ.	Եղիշ.	Նազ.	Եղիշ.
յէջս 256—7	յէջս 310	յէջս 291	յէջս 126	յէջս 310—11	յէջս 141	յէջս 327	յէջս 152
" 257 8	" 111	" 292	" 126	" 312—3	" 141	" 330	" 152
" 259	" 111	" 302	" 138	" 319	" 145	" 331	" 156
" 260—2	" 111	" 307	" 140	" 320	" 146	" 332	" 156
" 290	" 125	" 308	" 140	" 321	" 146		

2) Տես 'ի Ն գլուխն գրոյս՝ յէջս 85—87: շէ. Պատմ. Վարդ. յէջս 155—158:

3) Պատմ. Նազ. յէջս 331—332: Եղի.

Յետ այսորիկ թող կասկածեն զվաւերականութենէ Աւթերորդ յեղանակին, եթէ հաճոյ ումեք այդ թուիցի:

Եւսքան զկարեւորութենէ Փարպեցւոյ Պատմութեան վասն բնագրաց ոմանց մատենագրաց մերոց շատ համարիմք ասել: Չէր անմարթ ինչ 'ի ձեռն Աւաղարայ դնել առաջի և զինչ ինչ վրիպանս յեանոց պատմագրաց, նոյնպէս ճառելոց զՎահանանցն պատերազմէ, որպիսիք ոմանք են Աբէոս, Յովհաննէս կաթողիկոս, Թոմա Երծրունի և այլք. բայց այս յերկարեացէ զբան մեր մինչև անցանել ըստ չափ և ըստ պատահութիւն մատենական:

* * *

«Տեսիլ» Ա. Սահակայ: Մնայ մեզ այժմ ասել զՏեպլենէ Ա. Սահակայ: 'Ի մատենագրաց մերոց, ծաղկելոց 'ի հինգերորդ դարու՝ երկուք—մին՝ հարեանցիկ իմն և միւսն՝ բազում մանրամասնութեամբ յիշեն զՏեպլենէդ:

Պատմէ Խորենացի, թէ զինի մահուան հակառակաթոռին Սահակայ՝ Շմուէլի, յորժամ նախարարք աղաչէին ըզՄեծ հայրապետն դարձեալ ունել զաթոռն, զոր 'ի նոցին իսկ քսութենէ մերժեալ էր, նա ոչ առնոյր յանձն և «'ի բազում թախանձելոյ նոցա հարկաւորեալ՝ պատմեաց զտեսիլն, զոր յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա 'ի քուն ապագայիցն յայտնութիւնք»¹⁾:

Եւանդեալն 'ի Խորենացւոյ բնական իմն և աւօրեաց դէպքս այսորիկ 'ի Պատմութեան Աւաղարայ 'ի յայտ վան յայլ իմն կերպարանս, որք յոյժ հեռի են 'ի ճշմարտութենէ, աստացուք, և՝ 'ի ձև զրուցի իրիք և կամ հասարակաց աւանդութեան: Պատմեալ Աւաղարայ՝ հանգոյն Խորենացւոյ, յա-

¹⁾ Խոր. Պատմ. Գ. 66:

զագս մերժելոյ Ս. Սահակայ զինուիր նախարարաց և յիշատակեալ զտեսչնէ նորին, յարէ զինի՝ թէ տեսիլք այդ ցուցաւ նմա յառաջ քան զձեռնադրելն նորա յեպիսկոպոսութիւն՝ ՚ի մեծի հինգշաբաթոջն, ՚ի ս. եկեղեցւոջն Ազաղարշապատ քաղաքի՝ յորժամ նստէր հայրապետն մերձ առ սեղանն Աստուծոյ: Ապա ՚ի 4 էջս բերի յառաջ տեսիլն հրաշալի, զորոյ զմեկնութիւն ՚ի 15 էջս հրեշտակն ասց Ս. Սահակայ կէտ առ կէտ, պատուիրելով նմա զտեսեալն « ՚ի մագաղաթի դրոշմեալ թողուլ հաւատացեալ ժողովրդոյ (՚ի) զգուշութիւն անսղալ մինչ ՚ի վախճան ժամանակի» ¹⁾:

Այդ ՚ի բաղդաանէն զբանա երկոցունց պատմադրացս, այսպիսի ինչ ելանէ ակամայ հարցումն ընդ առաջ. ընդէ՞ր Խորենացի, որ ոչ միայն ժամանակակից էր Ս. Սահակայ, այլ և ընտանի աշակերտ նորա, որ և քան զամենեսին լիաման և ըստ կարգի աւանդէ տեղեկութիւնս զվարուց նորին, — այնպէս իմն համառօտ խօսի զտեսչնէ, որ «երևութացաւ ՚ի քուն», ոչինչ յիշելով «զդրոշմելոյն ՚ի մագաղաթի», զոր տեսանեմք առ մատենադրի՝ ոչ եղելոյ աշակերտ և կամ ժամանակակից **Մեծի** հայրապետիս՝ առ Ազաղարայ ասեմք **Փարպեցւոյ**: — Անհնարին իմն է միանգամայն վարկանել, թէ յիշատակարանս այս դրաւոր (եթէ արդարև թողեալ էր Ս. Սահակայ դրաւոր պատմութիւն ինչ իւրոյ **Տեսչեան**) կարէր անձանօթ լինել **Խորենացւոյ**. քանզի, որպէս ասացաք, աշակերտ էր սա **Մեծի** հայրապետիս և քաջաձանօթ հանդամանաց կենաց նորին: — Վարձեալ ջմարթի ՚ի կարծիս լինել, թէ Հայրն պատմադրութեան զանց իցէ արարեալ զայսպիսի իմն կարևոր յիշատակարանաւ: Նախ՝ զի դրաւոր գործ ինչ վարդապետի իւրոյ և հոգևոր ծնողն՝ յոյժ սիրելի լինելոց էր երախտադէտն աշակերտին և ոչ արժանի անտես առ-

1) Պատմ. Նաղ. յէջ 87:

նելոյ զայն: Աւ երկրորդ՝ նոյն ինքն Խորենացի 'ի կատարածի Պատմութեան իւրոյ, յորժամ գառնագինս ողբայ զհանուրց հիւսիսականաց վեհագոյնն Աշխարհ՝ 'ի պատճառս բառնալոյ թագաւորութեան յազգէն Արշակունեաց և քահանայապետութեան 'ի շառաւիղէ Ս. Ղրիգորի, — նոյն ինքն Խորենացի, ասեմք, մուանայր արդեօք յիշել ինչ յերկարապատում Տեալենէ Ս. Սահակայ (զոր առ Ապղարայ է զարդիս տեսանել) և կամ դէթ ակնարկութիւնս ինչ առնել առ այն, մինչ զի և՛ համառօտ յիշատակութիւնս առաւել ոյժ և զօրութիւն բերէր բանից իւրոց:

Հանձարեղն Աամբրոնացի՝ ևս՝ նրբամտութեամբն իւրով տակաւին յԺԿ՝ դարու կասկածէր զվաւերականութենէ Տեալեանդ: 'Ի Թղթին, որ «առ Յուսիկ՝ արդելական ճգնաւորն 'ի Մեծն Անտիօք» դրէ այսպէս. «...Մնաց այսուհետեւ լուծանել զոր 'ի սրբոյն Սահակայ տեսիլն կարծիք 'ի մերոցս առ ձեզ անկաւ՝ եկելոց: Աւ... զայս ասեմք, թէ տեսիլն այն ոչ հաստատի առ մեզ դու Ս. Սահակայ, այլ 'ի կարծիս մնայ՝ վասն ոչ առնելոյ նմա 'ի դիրս իւր յիշատակ Մովսիսի Խորենացւոյ՝ որ զնմանէ ըստ կարգի պատմեաց»¹⁾:

Աւ եթէ զինի սոցունց՝ միտ դիցուք այնց կարեւոր և էական հանդամանաց, զի Տեսիլն ըստ Խորենացւոյ երևութացաւ 'ի քուն, իսկ ըստ Ապղարայ՝ յեկեղեցւոջ անդ, յորժամ նստէր Ս. Սահակ մերձ առ սեղանն Աստուծոյ, (զոր բնաւ իսկ ոչ կարէր Խորենացի աղաւաղել կամ փոխել ըստ կամի), — ապա բացայայտ իմն է, թէ պահեալն 'ի Ապղարայ Պատմութեան Տեսիլ ոչ է դրոշմեալն այն 'ի մաղաղաթի դործ Ս. Սահակայ և մինչև՝ անյայտ անգամ և տակաւին ոչ ածեալ 'ի լոյս յաւուրս Խորենացւոյ²⁾:

1) «Ճրտագ» ամսագիր, 1859. Տետր. Բ. յէջս 37—38:

2) «Տեսիլ» Ս. Սահակայ վաղ ուրեմն գրաւեալ է զբանասիրացն մերոց ուշ. տակաւին

Յետ այսորիկ՝ երկրորդ իմն ելանէ հարցումն ընդ առաջ. ով ոք իցէ ուրեմն հեղինակ դրութեանդ. Ապղար արդեօք, որոյ 'ի Պատմութեան դասնի յայժմուս Տեսիլն, թէ այլ ոմն յետին բանասէր:

Աթէ ո՞ճ և լեզու Տեսիան և եթէ այլ պարագայք ինչ նորին այնպէս կասկածելի առնեն զգրութիւնդ, մինչ հազիւ իմն մարթ իցէ Ապղարայ զայն համարել գործ ¹⁾:— Յառաջադրեալ Ամբրոնոսացոյ Քղթոյն ևս, յորում՝ յանուանէ յիշելով զԽորենացի, բնաւ և բան մի չափնարկէ զԱպղարայ, — չտեսնի՞ արդեօք, թէ Տեսիլն Ս. Սահակայ առ ժամանակաւ զիանական եպիսկոպոսիս շքէր 'ի միջի ժողովրդեան՝ իբրև առանձին իմն աւանդութիւն և տակաւին ոչ անցեալ 'ի շարս մատենին Փարպեցոյ: Թուի, թէ յետ ժամանակի 'ի վերայ համառօտ բանից Փարպեցոյ յարմարեալ իցէ մանրապատումն այն Տեսիլ՝ իբրև դրաւոր իմն աւանդութիւն, որպիսի է և 'ի վերոյ յիշեալ ընդարձակ «Ապրդապետութիւն Ս. Գրիգորի», ծագեալ թերևս 'ի քանի մի բանից Ագաթանդեղեայ և յետ ժամանակի մուծեալ 'ի կարգ նորին պատմութեան, կամ մանրամասնեայ զուշակութիւնք Ս. Ներսիսի յերկասիրութեան Սեպրուպայ Արիցու՝ ²⁾ 'ի յայտ եկեալ 'ի համա-

յամի 1861 Պ. Մ. Էմին 'ի Սուսեր. թարգմ. «Արդանայ Բարձրբերդեցոյ» 'ի ծանօթութիւնան բերէ 'ի մէջ զԿարծիս իւր յաղագս անվաւեր կամ անհարազատ լինելոյ Տեսիանդ, յորոյ քաղեալ է մեր ինչ ինչ:

¹⁾ Կարի ցաւադինս թուի մեզ, զի չէր հնար ինչ 'ի ձեռս բերել քանի մի օրինակս գրչագրայ Տեսիան Ս. Սահակայ, պահելոց 'ի մատենադարանն Էջմիածնի, Ապղարայ վանուց, Երուսաղէմի և այլոց, որովք մարթ էր բաղդատութիւն առնել ընդ տպագրին և թերևս լուսարանել աղճատմունս ինչ և

կամ կասկածաւոր յաւերածս նորին՝ 'ի յետնոց մուծեալս Առ աղէտի՝ յեթնեցունց գրչագիր օրինակայ Ս. Էջմիածնի չյաջողեցաւ մեզ ընդունիլ և ոչ զվիոյ 'ի նոցունց պատճէն: Աւտի շատացաք միով և եթ գրչագրաւ մատենադարանի ձեմարանին Ապղարեանց, որ սակայն յետին ժամանակս է գաղափարեալ և աննշանս ունի ուարրերութիւնս ընդ տպագրին:— Ակն ունիմք յայլում պատեհ տեղոջ վերստին յայս ձեռնամուխ լինել ինդիր հարցասիրական:

²⁾ Սոփ. Հայկ. Զ. Պատմ. Ս. Ներսիսի յէջս 88—104:

ուտ բանից Փաւստոսի,—և որ ինչ 'ի սոցին սակի:—Աար-
ծիքս մասամբ իւրիք հաստատի այնու, զի պատմագիրք ոմանք՝
ճաղկեալք զինի Ն դարու՝ մինչև ցորոշ իմն ժամանակ (ցժ-
դար) ոչ յիշեն ինչ զդրաւոր Տեպլենէ Ա. Սահակայ հան-
դոյն այնմիկ, որ աւանդի 'ի Պատմութեան Ազգարայ: Ի
Յոյն բարբառ, բայց անշուշտ 'ի Հայ առնէ ումեմնէ յօրի-
նեալ համառու իմն Պատմութիւն Հայոց, որ բազմօք միա-
բանի այլոց մերոց պատմագրաց որ և ըստ ահանաւոր հայե-
րենագէտ Աէն-Մարաէնի ¹⁾ եօթներորդ կամ ութերորդ դա-
րու պարտ է լինել դործ,—'ի ճառելն զմերժելոյն Սահակայ
զինդիր նախարարաց՝ յար և նման Խորենացւոյ հակիրճ
բանիւք շատանայ զնորին Տեպլենէ՝ յասելն.—«Ապա՝ պատ-
մեաց զաեսին, զոր ետես յազազս անկման նոցա եղելոյն և
ապագայիցն յայտնութիւնք»²⁾: Աստի տեսանի թէ հեղինակն
չէր ծանօթ Տեպլեան, որ դարդիս առ Ազգարայ դասնի:

Իսկ Յովհաննէս կաթուղիկոս պատմագիր (նստաւ յաթոս.
յամի 897) որ՝ որպէս տեսանի 'ի նորին մատենէ, ունէր 'ի
ձեռին զՊատմութիւն Ազգարայ, ոչ յիշէ զՍահակայ Տե-
պլենէ նաև 'ի Խորենացւոյ աւանդեալ համառու բանս. մինչ
հազիւ թէ ըութեամբ անցանէր զերկարագատում Տեպլե-
նէն, և թէ զայսպիսի ինչ ընթերցեալ էր առ Ազգարայ:

Չառաջինն՝ (և թէ զպահեալն 'ի Պատմութեան Ազ-
գարայ Տեսիլ համարեացուք յեան լինել յաւելում) զՏե-
պլենէ Ա. Սահակայ հանդոյն աւանդելոյն 'ի Ազգարայ, տե-
սանեմք առ Յոյնս, առ որս յոյժ հռչակեալ էր այն՝ որպէս
զիտեցաք և 'ի բանից Ամբրոնացւոյ:—Ապարն Աստան-
դին Աերիկուուժէն (†958) 'ի պատմելն զհաւոյն իւրոյ՝ հայ-

1) Histoire du Bas-Empire, par Lebeau,
T. VI, p. 40. edit. par Saint-Martin.

ὀπτασίαν ἣν ἐώρακε περὶ τῆς ἐκπτώσεως αὐ-
τῶν τῆς γενομένης καὶ τῆς ἐσομένης. (Pat-

2) Ὁθεν λοιπὸν διηγῆσατο αὐτοῖς τὴν
rologiae P. Migne, T. CXXVII, p. 900—901)•

ազն Ասալէ Արշակունոյ (867—886), թէ որպէս հասեալ էր նա յաթոռ կայսերութեան, պարծանօք իմն յարմարեցուցանէ զինչ ինչ ցուցմունս Տեպեան Սահակայ՝ ժամանակի կայսերութեան նորա. «կատարեցան, սսէ, յայնժամ զուշակութիւն և մարդարէութիւն երկք հարիւր և յիսուն ամաց, զոր աւանդեալ էր Սահակ՝ քաջագուշակն՝ ՚ի միջի ամենայն երկցանց և կրօնաւորաց, որ և ինքն իսկ Արշակունի էր ազգաւ՝ եթէ զինի անցանկոյ այսքան ժամանակի յարկցէ այլ յորդոց Արշակայ և տիրեցէ դաւաղանաւ իւրով՝ ՚ի վերայ թագաւորութեան Հռովմայեցոց»¹⁾:

Առանց իրիք երկրայութեան է, զի յակնարկելն իւր ՚ի Տեսիլ Ս. Սահակայ՝ Աստանդին ոչ զԽորենացոյ իմանայ համառօտ բանս, ուր չիք ինչ ոչ զբարձմանէ թագաւորութեան Արշակունեաց, ոչ զնորոգմանէ թագաւորութեան նոցին և մանաւանդ զամաց՝ որոշակի իմն կարդելոց, — այլ ՚ի Ասղարեան Տեսիլն, որում և յարմարին ամենայն ցուցմունք բանասէրն Ապսեր:

Յետ այսորիկ արդէն և մերս պատմադիրք սկսանին յիշատակ առնել զմարդարէական Տեպենէ Ս. Սահակայ՝ իբրև զգրաւոր իմն աւանդութենէ՝ համաձայն այնմ, զոր ՚ի Աստմութեան Փարպեցոյ տեսանեմք: Թումա Արծրունի, որ զպատմութիւն իւր ձգէ ցամն 936, այսպէս գրէ զՏեպենէն. «... զհանդամանս տեպեանն (պատմեաց նախարարաց Ս. Սահակ), զոր կցոյց նմա հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս զործելոց էր. զբառնալ կալիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ՚ի տանէն Արշակունեաց, և զկարգա-

¹⁾ Ահաւասիկ յոյն բնագիրն. «... τότε δὲ καὶ ἢ πρὸ πενήκοντα καὶ τριακοσίων ἐτῶν πρόρρησις καὶ προφητεία τὸ τέλος ἐλάμβανεν. Ἰσαακ τοῦ διορατικωτάτου τῶν ἱερῶν καὶ μοναχῶν, ὃς ἐξ Ἀρσακιδῶν καὶ αὐτὸς κα-

ταρόμενος δι' ὀράματος ἔμαθεν, ὅτι μετὰ τοσοῦτον χρόνον, τὸν μεταξὺ ἐκ τῶν ἀπογόνων Ἀρσάκου μέλλει τις ἐπὶ τὰ τῆς Ῥωμαϊκῆς βασιλείας σκῆπτρα ἀναβιβάζεσθαι.» (Patrologiae, P. Migne. T. CIX. p. 257).

պետիլ անարժանիցն և զընտրութիւն արբոյ: Աւ զարձեալ զնորոգումն հայրապետութեան և թաղաւորութեան 'ի նոյն զարմէ Արշակունեաց և զգալուստ նեւինն և զգալուստն Վրիստոսի և զհանդերձեալ դատաստանայն և զհատուցումն իւրաքանչիւր ըստ դործս իւր, զոր ետես 'ի մեծի հինդշարաթոջն ¹⁾:—Յայտ է աստի, զի Սոմա ընթերցեալ էր զգրաւորն աւանդութիւն:

Գողցեա 'ի նոյն և մի բանս յիշեն զՏեպենէ Ասողիկ ²⁾, Մագիստրոս ³⁾, Շնորհալի ⁴⁾, Աիրակոս ⁵⁾, Ալարդան ⁶⁾, որ հանդոյն Աստանդին Պերփեռուժէնի՝ Ալասիլ կայսեր յարմարեցունէ զայն, յասելն — «և կատարիլ թուէր ('ի Ալասիլ) Տեպեանն Սահակայ Արբոյ նստիլ թաղաւոր Արշակունի»: Իսկ Մխիթար Այրիվանցի ⁷⁾ նաև զթիւ դնէ որոշակի, եթէ երբ ետես Ս. Սահակ զՏեպին:

Միտ եղեալ 'ի միոջէ կողմանէ լռութեամբ անցանկելոյն պատմադրաց մերոյ զգրաւոր Տեպենէ Ս. Սահակայ ցժ դար, և 'ի միւսմէ՝ յիշատակելոյն զայնմանէ 'ի ժ դարէ սկսեալ, — մարթ է ընթաղրել, թէ զրաւորն այն Տեպիլ թերևս 'ի ժ իցէ յօրինեալ դարու և 'ի կարգ Ալաղարայ Պատմութեան յարմարեալ, թէև իբրև անդ իր աւանդութիւն դուցէ ընդ երկար շրջէր 'ի մէջ ժողովրդեան: Իսկ զինի առաջադրեալն Ալասիլ կայսեր և մերոյս Վրիգոր վկայասէր կա-

1) Թոմ. Արծրունի. յէջս 80—81:

2) Ասողիկ. յէջ 76, տպ. 'ի Փարիզ:

3) Մագիստրոս շատանայ սակաւք միայն ակնարկելով 'ի Տեպին. «Նւ արդ՝ բաւական են այսօրիկ թէև 'ի փոխճան ժամանակի հասեալ հանդիպեցոյս ըստ մարդարէութեանն Դանիէլի և կամ ըստ մերոյն Տեպեանն Իսահակայ Արբոյ և քահանայ ապետի, կամ ըստ Արբաղանին Մովսիսի յիւրումսքանչելի տախտակի մար-

դարէական տառի զողջս 'ի վերայ հայաստանեայցս առնելով: («Մագիստրոսի Թուղթք» թղթահամար ԻԴ ըստ գրչապիր օրինակի Պ. Մ. Էմին:)

4) Յէջ 20, տպագր. 'ի Մոսկուա:

5) Յէջ 72, տպագր. 'ի Մոսկուա:

6) «Ախպասան. Նախնեաց», տոմս. ՇԺԵ ըստ գրչապիր օրինակին մերոյս դրագարանի:

7) Յէջ 46, տպ. 'ի Մոսկուա:

Թուղիկոսի (+1105), յորոց առաջինն՝ ՚ի տոհմէն Արշակունեաց համարիւր և երկրորդն՝ ՚ի սերնդոց Առևսաւորչի, իբրև կատարումն ՚ի նոսա մարգարէական զուշակութեան Ա. Սահակայ, — ոչ ևս լինի կասկած ինչ զՏեպենէն և այն վաւերական համարէր ցվերջին ժամանակաւ:

Գիտելի է զի տեսիլն՝ իբրև ապագայիցն զուշակութիւնք, յոյժ սովորական ինչ էր առ նախնի և միջին դարուց քրիստոնեայ մասկնադրաց: Սովորութիւնս այս՝ սկիզբն առևալ յԱբրայականէ և տարածեալ ՚ի միջի Յունաց և Ասորոց, մուտս դործէ և՛ ՚ի Հայս: Չառաջին տեսիլ ըստ ժամանակի՝ իբրև զգրաւոր իմն աւանդութիւն, տեսանեմք ՚ի պատմութեան Ազաթանդեղեայ, յորում մանրամասնաբար աւանդի Տեսիլ Ա. Գրիգորի Առևսաւորչի¹⁾: Ըստ այսմ աւանդութեան՝ եթէ մարթ իցէ ասել, չափեալ և ձևեալ է Տեսիլն Ա. Սահակայ, նախ՝ ըստ չափու պարունակութեան զրեւս թէ հաւասար են երկոքին, երկրորդ՝ թիւ յորուածոց նոցին գարձեալ միաչափ է. և երկրորդ՝ յառաջնում մասին Սահակայ Տեսիւնն բազում բանք ուղղակի քաղեալ են ՚ի Առևսաւորչի Տեսիւնէն²⁾:

1) Ազաթանդեղ. յէջս 552--568:

2) Յառաջիկայս աղբւսակէ գիւրինէ բաղդատողացն կաւ ՚ի վերայ մուրացածոց բա-

Տ՝Լ Ս. Սահ. (Ղազ. յէջ 80) «...և դասք սրշածնէից ընդ նասել ծանր նիրհմամբ ՚ի սասակութենէ բազմօրեայ տքնութեանցն, որպէս կիսամ. ոք եղին...»:

Տ՝Լ Ս. Սահ. (Ղազ. 81) «Յանկարծակի բացաւ հաստատութիւնն երկնից, ընդ որ ծագեաց լոյսն...և ելից զամենայն երկիր: Եւ...երևեցաւ ինձ...բեմբ ամպեղէն...և ՚ի վերայ բեմբին...տեսորասկեղ յոսկւոյ սրբոյ

նից «Տեսիւնն» Աբրգին Սահակայ:

Տ՝Լ Լ՝-ս. (Ազաթ. յէջ 552) «...ի հասարակել զիշերիս, զի խնջեալ դուք ՚ի բուն լեալ էիք ՚ի ծանրութենէ աշխատութեան ՚ի տքնութենէ անտի...»:

Տ՝Լ Լ՝-ս. (Ազաթ. 553) Յանկարծակի...բացաւ խորանաչէն յարկն հաստատութեան երկնից...և լոյս հոսեալ վերուստ ՚ի վայր մինչև յերկիր հասանէր... (555) Եւ տեսանեմ...խարխիս ոսկի...և ՚ի վերայ նորա

Բայց սակայն այս նմանութիւն արտաքին է և եթ. իսկ ըստ ներքին պարունակութեան՝ իւրաքանչիւրոյն 'ի նոցանէ այլ ինչ է խորհուրդ և վախճան: Մի՛ այլաբանօրէն կամի ցուցանել զյաջող տարածումն քրիստոնէական հաւատոյ 'ի Հայս. այս ներբողեան իմն է արդեանց և վաստակոյ Առասաւորչի, որ ցուցականութեամբ վերին Տեսչութեան զփառաւոր ապագայս դուշակէ քրիստոնէութեան:—Այլ իմն է Տեսիլ Ս. Սահակայ. մնայլ և բօթալից են դուշակութիւնք նորին. «յարուցմունք թագաւորաց 'ի վերայ միմեանց, սովբ և սասանութիւնք և բազում նեղութիւնք, որք զգալուստ որդւոյն կորստեան նշանակին. . . բարձումն թագաւորութեան յազգէդ Արշակունեաց և քահանայապետութեան 'ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Նրիդորի»: Ակնարկութիւնք ինչ զանարժան քահանայապետաց ոմանց, «որք ոչ ըստ հրամանի սրբոյ առաքելոյն և ոչ ըստ կանոնի սրբոյ ժողովոյն ՅԺՎ-իցն լինին ձեռնադրեալք . . . արժաթասէրք առ աւել քան աստուածասէրք»: Կնչ ինչ դուշակութիւնք զԱրարա-

խորանարդ... 'ի վերայ խորանաձև ծածկութեան՝ յայտնապէս նշան խաչին երևէր :

Թակադաղ մի ամպեաց և խաչն լուսոյ 'ի վերայ նորա :

Տ՝Լ Ս. Սահ. (Ղազ. 85) ըն. գմանկտին, զոր տեսանէի 'ի տխ աղայութեան առ ժամայն վաղվադակի փոփոխեալք 'ի հասակ երիտասարդութեան կատարեալք լինէին. և եղեալ թեազգեցիկք՝ 'ի վեր սուրբ սեղանն... թուցեալ ընակէին :

Տ՝Լ Լոս. (Աղաթ. 558) ըն. տեսի հօտրս անթիւս... յանկարծակի ծնան հօտրն և... յանկարծակի այլ ճնունդք յաճախեցին ըստմացան... և բուսան թեք հօտիցն և եղեն թեաւորք և վերացան խառնեցան 'ի զօրս լուսեղենա :

Տ՝Լ Ս. Սահ. (Ղազ. 85—86) ըն. ահա... 'ի կերպարանս մարդոյ երևէր ինձ յերկնից այր լուսեղէն...: Եւ սլացեալ այրն՝ հասանէր ուր եմն էի և իմ առաւել ևս հիացմամբ ափշեալ՝ անկայ զողալով... յերկիր: Եւ նորա բուռն հարեալ՝ կանգնեաց զիս և ասէ ցիս.— քաջալերեաց, զօրացիր և մի՛ երկնչիր... :

Տ՝Լ Լոս. (Աղաթ. 553) ըն. իջեալ այր մի 'ի կերպարանս լուսոյ... և իմ նայեցեալ՝ տեսի զկերպարանս նորա զարհուրեալ զողացեալ յերկիր կործանեցայ (554) Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ... ինքն սլացեալ գայր (567)... և ասէ ցիս այրն.— պինտ կաց, քաջ լեր, զգոյշ լեր... :

նանց պատերազմէն. «զի ահա՛ յարդանդէ զաւակիդ (Սահակայ դատեր, որ մայր էր Վարդանայ) . . . ելցեն բազում շառաւիղք՝ արք ընտիրք զօրութեամբ, ընդ որս միաբանեալ և այլ բազմութիւնք լաւ արանց յաղդէ նախարարացդ Հայոց . . . զյարուցմունս թաղաւորաց և զսպառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ՝ միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն»: Այն, զոյդ ընդ սմին և մերձ երևումն պղծոյն անապատի «վերստին նորոգումն թաղաւորութեան յաղդէդ Արշակունեաց և աթոռոյն հայրապետութեան՝ ի շառաւիղէ Ս. Գրիգորի¹⁾»:

Բայց բօթալից դուշակութիւնքդ զբարձմանէ թաղաւորութեան Արշակունեաց և քահանայապետութեան՝ ի տանէ Առևաւորչի ջնն նոր ինչ: Ըստ Փաւստոսի՝ տակաւին քորկապիսիոսոսն՝ Վանիէլ դուշակէր զայսմանէ՝ յանիծելն իւր զՏիրան սակս սպանանելոյ նորս զՅուսիկ. «բարձցէ Տէր, սսէ Վանիէլ, զթաղաւորութիւնդ ձեր՝ ի ձէնջ, բարձցէ²⁾ և զքահանայութիւնդ՝ ի ձէնջ»: — Օայսպիսի ինչ անէծս յաղագս կործանման ազգին Արշակունեաց՝ ըստ աւանդելոյ զարձեալ Փաւստոսի, կարդացեալ է և՛ Ս. Ներսէս ի վերայ Արշակայ³⁾:

Օկնի սպանման Յուսիան և դեղակուր լինելոյ Ս. Ներսիսի՝ հաւատք իմն գողցես հաստատին՝ ի միջի կղերից և ի ձեռն սոցին՝ թերևս և ի ժողովրդեան, — եթէ աստուածայինն վրէժխնդրութիւն ի պատճառս սպանման սրբոց արանցդ խնդրեսցէ զկործանումն ազգին Արշակունեաց որպէս և զդադարումն քահանայապետութեան յաղդէն Առևաւորչի: Բազմադիմի հանդամանք և մանաւանդ քաղաքական իրք՝ առ աղէտի՝ նպաստ եղեն կատարման չարագուշակն

1) Պատմ. Նաղ. յէջս 79—102:

2) Փաւստ. Բուզանդ. Գ. 15:

3) Փաւստ. Բուզանդ. Գ. 14:

մարդարէութեան, ուստի 'ի վերոյ զրեալ Համառօտ իմն ա-
սացուածք՝ իբրև ստոյգ դուշակութիւնք 'ի բերանոյ բերան
շրջելով՝ զարդարեցան ճոխապածոյճն պարազայիւք ժա-
մանակին և 'ի վերջոյ յաջող իմն զրչի հանգիպեալ՝ և՛ զգրա-
ւոր զգեցան կերպարանս:—Մյայէս՝ 'ի Համառօտ բանից
Փաւստոսի ծագեցաւ մանրամասնեայ դուշակութիւնն
Ս. Ներսիսի 'ի 16 էջս՝ ձեռամբ Մեարտապայ Արիցու—
ի Ժ դարու: Թուի մեզ, եթէ ըստ այսմ օրինակի ընծա-
յեցաւ 'ի լոյս և՛ մերս այս երկարապատում «Տեսիլ Ս. Սա-
հակայ», յառաջացեալ 'ի հակիրճ բանից Խորենացւոյ և
Ղազարայ, այլ թէ որո՞ց ձեռամբ՝ գործ էր գտանել:

Յ Ը Ն Կ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ ԵՒ ԳՈՐԾՔ ՆՈՐԻՆ:

ԵՎ՛:

ԳԼ. Ա. Նխարաբիք լարոց Ղազարայ Փարպեցոց:—Ներածութիւն:—Ծագումն Ղազարայ Փարպեցոց:—Ամ ծննդեան Ղազարայ:—Ղազար 'ի Ախր:—Ղազար 'ի Գողթան գաւառի:—Ղազար ընդունի սքեմ կրօնաւորութեան:—Ղազար առաքի 'ի Հռոմն յուսումն գիտութեան:—Գարձ Ղազարայ 'ի Հռոմնց և թշուառ վիճակ աշխարհին Հայոց:—Պատերազմ Ասհանանց:—Ասհան Մամիկոնեան և բարեզարդութիւն եկեղեցեաց Հայոց:—Ղազար՝ հոգաբարձ Կաթուղիկէ վանուց:—Թշնամութիւնք արեղայից ընդդէմ Ղազարայ:—Ղազար հալածի 'ի վանուց:—«Թուղթ» Ղազարայ առ Ասհան և վերապի գարձ նորա 'ի հայրենիս:—Գերեզման Ղազարայ: 1

ԳԼ. Բ. Երկասիրո-Նի-նո-ր Ղազարայ Փարպեցոց:—Ա.—«Թուղթ» առ Մամիկոնեաց Տէրն Ասհան»:—Սակաւածիւ գոյն երկասիրութեանց Ղազարայ:—Մեկնութիւն այսց կարծեաց:—Ղազար՝ որպէս եկեղեցական հաւտոր:—«Թուղթ» Ղազարայ առ Ասհան:—Կարեւորութիւն թղթոյն՝ իբրև գրական գործոյ, ո՞՞ թղթոյն:—Պարունակութիւն թղթոյն՝ ամբաստանութիւնք արեղայից զՂազարայ և մի առ մի հերքելն նորա ըզզրպարտութիւնն:—Ընտիր մատուց թղթոյն:—Ժամանակ գրելոյ թղթոյն:—Եթէ ո՞վ ոք էր յուսուրս հալածման Ղազարայ զլիաւորն Հայոց քահանայութեան: 27

ԳԼ. Գ. Երկասիրո-Նի-նո-ր Փարպեցոց:—Բ.—«Երբորդ» Պարսնո-Նի-նո-ր Հայոց:—Բնագիր Պատմութեան Ղազարայ:—Սակաւածիւ գոյն գրչագիր օրինակաց Պատմութեան և սրտածառ նորին:—Աղճատմունք՝ մուծեալք 'ի բնագիրն:—Աղբիւրք Պատմութեան. —բաց Սպաթանդեղեաց, 'ի Փաւստասէ և 'ի Կորիւն վարդապետէ, որոց անուանք յիշին 'ի մատենին, քաջ ծանօթ էին Ղազարայ և՛ գործք խորենացոյ, թէև ըզնմանէ չիք ինչ յիշատակեալ 'ի Պատմութեան:—Յուցմունք:—Տարբեր իմն աւանդութիւնք զգիւտէ նշանագրաց Հայոց և զթարգմանութենէ Գրոց Արոց առ Ղազարայ՝ 'ի միոջէ կողմանէ և առ Կորեան և խորենացոյ՝ 'ի միւսմէն:—Մեկնութիւնք: 51

ԳԼ. Դ. «Երբորդ Պարճո-Նի-ն Հայոց» :—Ազգի-րդ Պարճո-Նեան Ղազարայ :—Եղիշէ :—Ղազար ծանօթ էր և՛ Եղիշեայ Պատմութեան :—Յուցմունք :—Ցարեր աւանդութիւնք զքանի մի հանդամանաց՝ որ 'ի Վարդանանցն հային պատմութիւն :—Վերաբերութիւն երկոցունց պատմագրացս առ Վարդան Մամիկոնեան :—Ազգային զոյցք զՎարդանանցն պատերազմէ՝ իբրև աղբիւր Ղազարայ պատմութեան :—Մանրամասնութիւնք զԽուժկէն և զԹուոյն նահատակաց՝ որ 'ի դաշտին Աւարայրի :—Ընդէ՛ր իոյս տայ Ղազար 'ի յիշելոյ զանուանա երկուց դիտարագոյն աղբերաց իւրոց՝ զԽորենացոյն և զԵղիշեայն :

ԳԼ. Ե. «Երբորդ Պարճո-Նի-ն Հայոց» :—Վան Ահանայ և Հայոց պարբերակի :—Կարևորութիւն ինքնուրոյն մասին Ղազարայ Պատմութեան :—Սերտ կապակցութիւն հանդամանաց՝ որ 'ի միջի Վարդանանց և Վահանանց պատերազմաց :—Հարցասիրական հատածք 'ի «Վահանանց Պատերազմէն» . որինակք ինչ յատենարանութեանց Վահանայ Մամիկոնենոյ :—Լեզու և ոճ Ղազարայ Պատմութեան :—Վահանանց պատերազմ. ուրացեալ նախարարք և Գիւտ կաթուղիկոս :—Վահան Մամիկոնեան և ապստամբութիւն Հայոց :—Վեցեքին ճակատք Հայոց ընդդէմ Պարսից :—Մահ Պերոզի 'ի Հեփթաղաց. թագաւորեն Վազարշու և հաշտութիւն ընդ Հայոց :—Նիխոր և պայմանք Հայոց դաշանց :—Վահան Մամիկոնեան-Մարզպան :

ԳԼ. Զ. «Երբորդ Պարճո-Նի-ն Հայոց» :—Կարևորութիւն Պարճո-Նեան Ղազարայ Փարպեցոյ :—«Տեսիլ» Ս. Սահակայ :—Կարևորութիւն Պատմութեան Փարպեցոյ վան Իսկրութեան պատմութեան :—այն է՝ վանքնութեամբ ուսանելոյ զպարունակութիւնս և զքնագիրս երկասիրութեանց ոմանց մատենագրաց մերոց՝ Ագաթանգեղեայ, Փաւստոսի, Խորենացոյ և Եղիշեայ : Յուցմունք :—«Տեսիլ» Ս. Սահակայ :—Ցարածայնութիւնք զՏեսլենէն առ Խորենացոյ և Ղազարայ :—Մեծն Սահակ չէր հեղինակ «Տեսլեան» . վկայութիւնք :—«Տեսիլն» չթուի լինել գործ և՛ Ղազարայ :—Առ որոց մատենագրաց՝ եթէ 'ի մերոցն և եթէ յարտաքնոց, յիշի զՏեսլենէն :—Հաւանութեան երևի, եթէ «Տեսիլն» գրեալ է 'ի Ք դարու և մոծեալ 'ի կարգ Ղազարայ Պատմութեան :—Նմանութիւնք 'ի միջի Տեսլեանց Լուսաւորչի և Ս. Սահակայ :—Մեկնութիւնք :

ԿԱՐԵՒՈՐԱԳՈՑՆ ՎՐԻՊԱԿԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջ.	Տող.	Սխալ	Ուղղ.
6	8	երեցագունին	երիցագունի
11	14	'ի յսկզբան	յիսկզբան
32	3—4	ծանօթիւք (երկիցս)	ծանօթութեամբք
44	14	զհայէ	չհայէ
48	5	('ի ներք) զանուանս	զանուանս
49	10	քաղկեդոնիդ	քաղկեդոնիտ
57	19	կանխիմք	կանխեմք
63	2—6	զթագաւորել	չթագաւորել
»	4	('ի ներք) Խոր. Գ. 62.	Խոր. Գ. 42.
»	3	» ('ի բաց թողեալ է)	Խոր. Գ. 51. Ղազ. 65.
64	11	զժիշէ	չժիշէ.
»	19	վարէր անկախ	վարէր գրեա թէ անկախ
84	8	տեղւոջն	'ի տեղւոջն
99	6	('ի ներք) 'ի տեղիս	'ի տեղիս տեղիս
101	16	» ԺԸ դարու	ԺԶ դարու
»	8	» ('ի բաց թողեալ է)	Բնագիրն տպագրեալ է յեջմիածին՝ յամի 1870:
103	18	զօղեալք	ղօղեալք
109	3	հայց	հայոց
118	21	ընթերցեալ	ընթերցեալ էր
6	14	445 (երկիցս)	455
7	8	445	455

200

457527

1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025
2026
2027
2028
2029
2030
2031
2032
2033
2034
2035
2036
2037
2038
2039
2040
2041
2042
2043
2044
2045
2046
2047
2048
2049
2050
2051
2052
2053
2054
2055
2056
2057
2058
2059
2060
2061
2062
2063
2064
2065
2066
2067
2068
2069
2070
2071
2072
2073
2074
2075
2076
2077
2078
2079
2080
2081
2082
2083
2084
2085
2086
2087
2088
2089
2090
2091
2092
2093
2094
2095
2096
2097
2098
2099
2100